

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
АРМЕНОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
ARMENIAN STUDIES

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 1 (16)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ ԱՐՄԵՆՈՎԵԴԵՆԻԵ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. ARMENIAN STUDIES»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*), Գալստյան Ս. Ա., Գոնչար Ն. Ա.
(*գլխ. խմբագրի տեղակալ*), Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտուղար*),
Հովհաննիսյան Պ. Հ., Մինասյան Է. Գ., Պետրոսյան Վ. Զ., Միմոնյան Ա. Հ.,
Քալանթարյան Ժ. Ա.

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), **Галстян С. А., Гончар Н. А.** (*зам. главного редактора*), **Калантарян Ж. А., Минасян Э. Г., Овакимян А. Э.** (*ответ. секретарь*), **Оганисян П. А., Петросян В. З., Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), **Galstyan S. A., Gonchar N. A.** (*Deputy editor-in-chief*), **Hovakimyan A. E.** (*Executive Secretary*), **Hovhannisyan P. H., Kalantaryan Zh. A., Minasyan E. G., Petrosyan V. Z., Simonyan A. H.**

**ԱՂԲԵՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1988-1994 ԹԹ.**

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԻԹԱՎՅԱՆ

20-րդ դարի սկզբից Ադրբեջանի ներկայիս տարածքում ապրող հայերի կոտորածները, բռնի տեղահանություններն ու էթնիկ զտումները ընթացել են երեք հիմնական փուլերով.

1) 1918-20 թվականներ. էթնիկ զտումներ՝ պետականորեն կազմակերպված կոտորածների, բռնությունների ու տարհանումների ձևով,

2) 1921-88 թվականներ. էթնիկ զտումներ՝ ազգային խտրականության համընդհանուր դրսևորումներով հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում՝ ուժացման ճանապարհով,

3) 1988 թվականից առ այսօր՝ պետականորեն կազմակերպված կոտորածների, տեղահանությունների, դիվերսիոն-հետախուզական գործողությունների ու հակահայկական ագրեսիվ տրամադրություններ հրահրելու միջոցով, որոնցում ներգրավվել են քրեական տարրերը, հայաստացույթյամբ վարակված զանգվածները, բանակն ու պետական հատուկ ծառայությունները (ուստիկանություն, ՊԱԿ, անվտանգության ուժեր և այլն)¹:

Եթե դիտարկենք միայն խորհրդային ժամանակաշրջանի էթնիկ զտումները, ապա դրանք նույնպես կարելի է բաժանել երեք փուլի.

1. 1921-1988 թթ., որի ընթացքում ադրբեջանական իշխանությունների կողմից իրականացվող ճնշումները և խտրականությունը հանգեցրին ԼՂԻՄ մարզխորհրդի հայտնի որոշումն ընդունելուն,

2. 1988-1990 թթ. ԼՂԻՄ մարզխորհրդի 20.02.1988 թ. դիմումը հայերի նկատմամբ համընդհանուր էթնիկ զտումների քաղաքականության անցնելու առիթ դարձավ Ադրբեջանի այն շրջաններում, որտեղ հայերը փոքրամասնություն էին և անկարող էին կազմակերպել ինքնապաշտպանություն,

3. 1991 թ. առաջին կես. Ադրբեջանի իշխանությունները խորհրդային զինված ուժերի աջակցությամբ ձեռնարկեցին հայերի զանգվածային տեղահանումը հայաշատ շրջաններից («Օղակ» օպերացիան):

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին, սկսած գորբաչովյան «վերակառուցման» քաղաքականության շրջանից, Ադրբեջանում և Լեռնա-

¹ Տե՛ս «Ընդդեմ Ադրբեջանի հայաստաց քաղաքականության», Եր., 2007, էջ 4:

յին Ղարաբաղում հայ բնակչության էթնիկ գտումներն առավել լայն թափ ստացան:

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների խորհրդի նիստում որոշվեց դիմել Ադրբեջանական և Հայկական ԽՍՀ-ների Գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ փոխանցելու խնդրով: Արցախահայության սահմանադրական այս իրավացի պահանջի պատասխանը եղավ սուվգայիթյան եղեռնագործությունը, որն ի ցույց դրեց հայերի և ադրբեջանցի ազգայնամուլական խաժամուժի միջև ի սկզբանե գոյություն ունեցող քաղաքակրթական ջրբաժանը: Սուվգայիթի դաժան, հրեշավոր ջարդերը, որոնք մինչ օրս չեն արժանացել միջազգային հանրության պատշաճ գնահատականի, դարձան 1988-1991 թթ. ամբողջ Ադրբեջանում սանձազերծված հակահայկական արյունալի իրադարձությունների սկիզբը: 1988 թ. փետրվարին Սուվգայիթում սպանվեցին կամ ողջակիզվեցին տասնյակ հայեր, իսկ խոշտանգվեց, վիրավորվեց ու բռնի տեղահանվեց ավելի քան 18 հազար մարդ: Խորհրդային զորքերը Սուվգայիթ մտան դեպքերից ժամեր անց, երբ արդեն ոճրագործները կատարել էին իրենց սև գործը:

Հայ խաղաղ բնակչության նկատմամբ ծրագրված նախաճիրը Ադրբեջանում շարունակվեց հետագա ամիսներին ևս: 1988 թ. մայիսին Շուշիի ողջ հայ բնակչությունը բռնի տեղահանվեց: Նույն թվականի ամռանն ու աշնանը հազարավոր հայ բնակիչներ ստիպողաբար լքեցին Հյուսիսային Արցախի տասնյակ բնակավայրեր, իսկ այնուհետև ջարդերի ու բռնի տեղահանության ալիքը տարածվեց ամբողջ Ադրբեջանով մեկ: Նոյեմբերի 21-27-ը Կիրովաբադից (հայկական Գանձակ) վտարվեց 45 հազար հայ:

Ադրբեջանի հայ խաղաղ բնակչության նկատմամբ պետական ահաբեկչական քաղաքականության զագաթնակետը եղավ 1990 թ. հունվարին Բաքվում տեղի ունեցած ցեղասպանությունը: Մինչ այդ տներում, աշխատավայրերում, փողոցներում արդեն սպանվել էին հայազգի ավելի քան 60 քաղաքացիներ, հարյուրավորները հաշմվել էին, տասնյակ հազարավորները՝ վտարվել: 1990 թ. հունվարին 230 հազար հայերից Բաքվում մնացել էր ընդամենը 35 հազար մարդ՝ հիմնականում տարեցներ և հիվանդներ ու նրանց խնամող հարազատներ: Հունվարի 12-ին Ադրբեջանի Ազգային ճակատի արմատական թևի ներկայացուցիչներ Նեյմաթ Փանախովը և Ռահիմ Գազիևը հանրահավաքում հակահայկական կոչեր հնչեցրին, որից հետո 50 հազար ցուցարարներ ցրվեցին քաղաքով մեկ՝ ձեռքներին հայերի բնակարանների հասցեներ, հայերով խիտ բնակեցված վայրերի նշումներով քարտեզներ և ուղեցույցներ²: Հարկ է նշել, որ Փանախովը մինչ այդ եղել էր ՊԱԿ-ի մե-

² Նույն տեղում:

կուսարանում³ և ազատ էր արձակվել Բաքվում հայոց ջարդերն ուղղորդելու նպատակով: 1990 թ. հունվարի 12-13-ին հայկական ջարդերը Բաքվում կազմակերպված և զանգվածային բնույթ ստացան: Անասնական բնագոյով առաջնորդվող ադրբեջանական ամբոխը, տուն առ տուն անցնելով, ողջ քաղաքը «մաքրեց» հայերից:

1990 թ. հունվարի 17-ին Եվրախորհրդարանը բանաձև ընդունեց, որով արտգործնախարարների Եվրոպայի խորհրդին կոչ էր անում պաշտպանել հայերին և պահանջել ԽՍՀՄ կառավարությունից անհապաղ օգնություն ցույց տալ Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին: Հունվարի 18-ին ամերիկացի սենատորների մի խումբ նամակ հղեց Մ. Գորբաչովին, որտեղ իրենց մտահոգությունն էին հայտնում Բաքվում հայերի ջարդերի կապակցությամբ և կոչ էին անում Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին⁴:

1988-1990 թթ. էթնիկական գտումների հետևանքով Ադրբեջանից տեղահանվեց ավելի քան 500 հազար հայ, որոնց մի մասը համալրեց Սփյուռքը, իսկ կեսից ավելին մշտական բնակություն հաստատեց Հայաստանում⁵:

Մումգայիթի ողբերգության կրկնությունը Բաքվում բնավ պատահական չէր: Բարբարոսական գործողություններն այստեղ ևս նախապես ծրագրված, պլանավորած և մանրամասնորեն մշակված էին: Դա խոստովանել է Ադրբեջանի կոմկուսի Մումգայիթի քաղաքային կոմիտեի քարտուղար Մուսլիմ-գադեն: Նա նաև ընդունել է այն փաստը, որ զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով Մումգայիթ են ուղարկվել քրեական տարրեր⁶:

Ի տարբերություն Մումգայիթի՝ խորհրդային բանակը Բաքու մտավ ոչ թե երեք ժամ, այլ մի ամբողջ շաբաթ «ուշացումով» (դրա ամբողջ պատասխանատվությունը նախևառաջ ընկնում է ԽՍՀՄ առաջին ու վերջին նախագահ Մ. Գորբաչովի վրա): Սակայն գորքը քաղաք մտավ ոչ թե կոտորածը կանխելու, այլ Ադրբեջանում իշխանությունը վերջնականապես Ազգային ճակատին անցնելը խանգարելու նպատակով:

Բաքվի ջարդերը կանխելու համար բավարար ուժ և հնարավորություն ունեին նաև խորհրդային բանակի Բաքվի կայազորի և Ադրբեջանի ՆԳՆ ներքին զորքերի ուժերը, որոնք ոչ միայն չէին միջամտում ահասարսուռ իրադարձություններին, այլև շատ դեպքերում արգելում էին կամավորներին օգնություն ցույց տալ տուժողներին: Բացի այդ, կան վկայություններ, որ ջարդերն անմիջականորեն ուղղորդել են ադրբեջա-

³ Տե՛ս **Чобанян С.** Государственная и национальная политика Азербайджана, Ер., 1993, էջ 180:

⁴ Տե՛ս <http://www.panarmenian.net/arm/news/41571/>

⁵ Տե՛ս <http://www.karabakhrecords.info/gallery/սովորական-ցեղասպանություն-բաքու-1990/>

⁶ Տե՛ս «Правда», 1988, 10 октября, էջ 4:

նական ՊԱԿ-ի աշխատակիցները: Ղարաբաղյան շարժման հենց սկզբնական փուլից Ադրբեջանի ՊԱԿ-ում ստեղծվել է վերլուծական հատուկ խումբ, որում ներգրավվել են ոչ միայն ՊԱԿ-ի աշխատակիցներ, այլ նաև Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի գիտաշխատողներ, որոնց տրամադրվել են «Ղարաբաղ կոմիտեի» վերաբերյալ փաստաթղթեր, կոմիտեի անդամների ելույթների տղագրությունները, այլ նյութեր, որոնք վերլուծվել և զեկուցվել են Ադրբեջանի ղեկավարությանը՝ շարժումը ճնշելու գործում անհրաժեշտ հետևություններ անելու և «Ճիշտ» որոշումներ կայացնելու նպատակով: 1988 թ. սկզբներին Բաքվից Ստեփանակերտ է ուղարկվել նաև հատուկ ծառայությունների ավելի քան 200 աշխատակից՝ տեղում իրավիճակը վերահսկելու, ինչպես նաև Արցախյան շարժումը որպես «ծայրահեղական-անջատողական» որակելու գործում ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությանը «հիմնավոր» տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

Առկա փաստերը համադրելով՝ կարող ենք եզրակացնել, որ Ադրբեջանում տեղի ունեցած հայկական կոտորածները, հատկապես Սուլգայիթի և Բաքվի եղեռնագործությունները ծրագրվել, պլանավորվել ու մանրակրկիտ մշակվել են հատուկ ծառայությունների աշխատասենյակներում: Ադրբեջանի ՊԱԿ-ի և ՆԳՆ օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցների կողմից առանձնացվել են հայերով բնակեցված թաղամասերի քարտեզները, դրանց վրա նշագրվել կոնկրետ հասցեները և նախապես բաժանվել հայատյացությամբ ներշնչված խաժամուժին: Ամբողջ Ադրբեջանում ակտիվորեն գործել է ազգայնական գործակալների ցանցը: Բաքու, Սուլգայիթ, Կիրովաբադ և Մինգեչաուր քաղաքները բաժանվել են շրջանների՝ անպատիժ կերպով սադրանքներ, խոշտանգումներ և անկարգություններ կազմակերպելու համար: Հանրահավաքներում ելույթ էին ունենում հայերի՝ իբր հանցավոր արարքների մասին պատմող ու ամբոխը զոմբիացնող հատուկ պատրաստված սադրիչներ, ջարդերի ժամանակ անջատվում էր հոսանքը, ջարդարարների, ավազակախմբերի ներսում գործում էր հստակ համակարգ և կարգապահություն, դրանք հրահանգավորվում էին ռադիոկապով, հայերին խորհուրդ էին տալիս դուրս չգալ աշխատանքի և նստել տանը, ուստիկանություն զանգահարելուց 10-15 րոպե չանցած բնակարանում հայտնվում էին ջարդարարները, բժիշկները հրաժարվում էին օգնություն ցուցաբերել վիրավորներին ու տուժողներին: 1988-91 թթ. ադրբեջանական ՊԱԿ-ն սկսեց հետապնդումներ ու հալածանքներ իրականացնել անգամ Ղարաբաղի ոչ հայազգի այն պաշտոնյաների ու իրավապահ մարմինների աշխատակիցների նկատմամբ, ովքեր քիչ թե շատ փորձում էին պաշտպանել հայ բնակչության շահերը⁷:

⁷ Տե՛ս **Кривопусков В.** Мятёжный Карабах, Ер., 2013, էջ 223-225:

Ղարաբաղյան շարժման հենց սկզբից Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի վարչական մարմինների բաժնի պետի տեղակալ Ասադովը հրապարակեց մի գաղտնիք, թե Ղարաբաղի սահմաններում պատրաստ են և իրենց հրամանին են սպասում 100 հազար զինված մուսուլմաններ⁸: Ա. Մութալիբովը խորհրդակցություններից մեկի ժամանակ իրավապահ մարմիններին՝ ՆԳՆ-ին, ՊԱԿ-ին, դատախազությանը, կոչ արեց (ավելի ճիշտ՝ հրահանգեց) տեղահանել ԼՂԻՄ-ի, Գետաշենի, Շահումյանի շրջանների բնակիչներին⁹: «Ադրբեջանում հայերի ջարդերը սադրել է տեղի մաֆիան, որը կառավարվում էր Ադրբեջանի պետանվտանգության նախկին ղեկավար Հեյդար Ալիևի կողմից»¹⁰, - գրել է Ջորջ Սորոսը 1989 թ. «Ջնանիյե» ամսագրում տպագրված հոդվածում: Իսկ լիբանանյան «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանթահարյանը Սուվգայիթի գոհերի հիշատակի հավաքին հայտարարեց. «Սուվգայիթեան եղեռնագործությունը ուրիշ բան չէ, եթե ոչ Պաքուի համապատասխան ծառայություններու ծրագրած ցեղային մաքրագտման հակամարդկային ոճիր»¹¹:

Հակահայ գործողությունները ղեկավարել են սկզբում Ադր. ԽՍՀ ՆԳՆ և ՊԱԿ-ի բարձրաստիճան պաշտոնյաներ¹², այնուհետև ադրբեջանական ուժային կառույցների ղեկավարները (այդ առումով հատկանշական է 1992 թ. փետրվարի 8-ին Ադրբեջանի ազգային անվտանգության խորհրդի նիստում ընդունված գաղտնի որոշումը, որով հստակ հանձնարարություններ են տրվել պաշտպանության նախարար Թ. Մեհտիևին, ներքին գործերի նախարար Թ. Քերիմովին, ազգային անվտանգության նախարար Ի. Հուսեյնովին, ՊՆ գլխավոր շտաբի պետ Շ. Մուսանին և պետական այլ պաշտոնյաների)¹³:

Հայտնի է, որ Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ը 1990 թ. վերջերին ծրագրել էր հայ անվանի հասարակական-քաղաքական որոշ գործիչների սպանություններ¹⁴, իսկ արդեն 1991 թ. նոյեմբերի 1-ից, երբ ադրբեջանական նախկին ՊԱԿ-ի հիման վրա ստեղծվեց Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարությունը (ԱԱՆ) և նախարար նշանակվեց Հուսեյնով Իլհուսեին Փիրհուսեյն օղլին, հայ ժողովրդի դեմ հետախուզական-քայքայիչ գործողություններն ու ակաբեկչական ակտերը նոր թափ ստացան (ԱԱՆ-ն թե՛ կառուցվածքային, թե՛ կադրային ու գործառույթային լուրջ փոփոխությունների ենթարկվեց հատկապես սկսած

⁸ Տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Արցախի պատմությունը, Եր., 1994, էջ 75:

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 318:

¹⁰ <http://www.youtube.com/watch?v=XvC9Qr8fBN4>

¹¹ <http://www.aztagdaily.com/archives/175120>

¹² Տե՛ս **Чобанян С.**, նշվ. աշխ., էջ 36-44:

¹³ Տե՛ս **Мелик-Шахназарян Л.** Агрессия Азербайджанской республики очертила границы Республики Арцах, Եր., 2014, էջ 51-53.

¹⁴ Տե՛ս **Кривоусков В.**, նշվ. աշխ., էջ 65:

1993 թ., երբ երկրի ղեկավարումն անցավ Հեյդար Ալիևին)¹⁵: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիներ Ն. Շիրինյան, Է. Ֆիլկովը, Ա. Գասպարյանը, Ա. Մազիևը հավաքագրվել և օգտագործվել են Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից՝ ՀՀ և ԼՂՀ դեմ ուղղված հետախուզական-քայքայիչ գործունեություն իրականացնելու նպատակով: Ն. Շիրինյան առաջադրանք է ունեցել ՀՀ և ԼՂՀ ռազմական պոտենցիալի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելուց զատ պայթեցում իրականացնել «Էրեբունի» հյուրանոցում¹⁶:

Ադրբեջանի ռազմական հետախուզության նախկին աշխատակից Ալեքսեյ Հեյդարովը Իսմայիլովը, իր իսկ խոստովանությամբ, 1991-1995 թթ. անձամբ կազմակերպել և իրականացրել է մի շարք ահաբեկչական գործողություններ ինչպես Հայաստանի տարածքում, այնպես էլ Վրաստանում և ՌԴ Ստավրոպոլի ու Կրասնոդարի երկրամասերում: Մասնավորապես՝ նա մշակել և իրագործել է Վրաստանից Հայաստան մուտք գործող գազամուղի պարբերական պայթեցումները (ընդհանուր թվով 13), 1993 թ. կազմակերպել է 30 կգ տրոտիլ տեսակի պայթուցիկ նյութ Երևան տեղափոխելու և այն «Էրեբունի» հյուրանոցում տեղադրելու գործողությունը, 1992 թ. ՌԴ Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում հակահայկական սադրիչ բնույթի թռուցիկների օգտագործմամբ ձեռնարկել է «դիվերսիոն հատուկ միջոցառումներ»՝ ՌԴ հարավային այդ շրջաններում բնակվող հայերի ու կազակների միջև ազգամիջյան թշնամանք սերմանելու, այդ հողի վրա բախումներ հրահրելու նպատակով: Կուբանում և Ստավրոպոլի երկրամասում Իսմայիլովը կազակների անունից կազմակերպել է հայկական երկու գրասենյակների, իսկ հետագայում՝ հակահայկական դիրքորոշում ունեցող «Կուբանսկիե կուրիեր» թերթի խմբագրության պայթեցման գործողությունները ԱՍԱԼԱ-ի անունից: Նրա խոստովանությամբ, 1994 թ. Ադրբեջանի հատուկ ծառայությունները ծրագրել էին պայթեցնել նաև Երևանի կառավարական շենքերի համալիրը և մտադրություն են ունեցել օգտագործել հատուկ այդ նպատակի համար պատրաստված երկտակ հատակ ունեցող բենզատար, որում տեղադրվել է 3 տոննա տրոտիլ: 1992 թ. սեպտեմբերի 10-ին ՌԴ Կրասնոդարի երկրամասի Կրոպոտկինո քաղաքի «Կավկասկայա» երկաթուղային կայարանի ՆԳ տրանսպորտային միլիցիայի աշխատակիցների կողմից անցկացված ստուգումների ժամանակ Բաբու-Մոսկվա գնացքի թիվ 12 վագոնի ուղեկցորդ Նիզամի Իսկանդերովը Ալիևի մոտ հայտնաբերվել և առգրավվել էին հակահայկական բովանդակությամբ սադրիչ բնույթի մեքենագիր ու ձեռագիր 13 հազար անանուն թռուցիկներ:

Ադրբեջանի հատուկ ծառայությունները ահաբեկչական գործո-

¹⁵ Տե՛ս <http://mtn.gov.az/az/pages/57-0.html>

¹⁶ Տե՛ս **Ա. Թումոյան**, Հայաստանի անվտանգության մարմինների պատմության ուրվագծեր, Եր., 2009, էջ 42-44:

ղությունների թատերաբեմ էին դարձրել Վրաստանի և ՌԴ տարածքները, ուր այդ տարիներին պարբերական էին գնացքների, ավտոտրանսպորտային միջոցների, երկաթուղային գծերի, կամուրջների գազախողովակաշարերի պայթեցումները, ազգամիջյան թշնամանքի բորբոքումը, ինչպես նաև հայազգի քաղաքացիական անձանց առևանգումներն ու սպանությունները¹⁷:

1988-91 թթ. Ադրբեջանի հակահայ քաղաքականության իրականացման ռազմական ուղղությունը ստանձնեց ադրբեջանական ՕՍՕՆ-ը (Отряд милиции особого назначения): Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների ադրբեջանցիներից զինված ջոկատների կազմավորումը Ադրբեջանում սկսվել է 1990 թ. վերջերին, թեև դեռևս 1980-ական թթ. սկզբներին Արցախի և Նախիջևանի ադրբեջանական բնակչությունն սկսել էր մեծ քանակությամբ գեներ գնել (հիմնականում որսորդական)՝ անտեսելով անգամ բարձր գները: 1986-87 թթ. Հայաստանին սահմանակից և Արցախի ադրբեջանական խոշոր բնակավայրերում արդեն կազմավորվել էին ՕՍՕՆ-ի ջոկատներ: Գրեթե յուրաքանչյուր գյուղում կար ՕՍՕՆ-ի ստորաբաժանում, իսկ շրջանային կենտրոններում տեղակայված էին գումարտակները՝ համապատասխան սպառազինությամբ ու մարտական տեխնիկայով¹⁸: Սրանից կարելի է եզրակացնել, որ ադրբեջանական իշխանությունները վաղորոք էին ծրագրել գեներ կիրառել հայ բնակչության նկատմամբ և անգամ նախապատրաստվում էին ռազմական գործողությունների (պատմությունը ցույց է տվել, որ նման դեպքերում ադրբեջանական իշխանությունները մշտապես գործել են թուրքական իշխանությունների անմիջական կամ միջնորդավորված հրահանգներով: Դրա վառ ապացույցն այն է, որ 1990 թ. հունվարի 7-ին Ադրբեջանական ԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Մուրադիբովը մեկնել է Թուրքիա և հանդիպում ունեցել Թուրքիայի նախագահ Թ. Օզալի հետ¹⁹, որից ընդամենը օրեր անց՝ հունվարի 12-20-ը, տեղի ունեցան Բաքվի հանրահայտ դեպքերը): Արդեն 1991 թ. հունվարի 22-ին ապօրինաբար կազմավորված Շուշիի հեռուստակայանը հեռարձակեց քաղաքում անցկացված ցույցից կադրեր, որտեղ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահը ներկաներին կոչ էր անում երդվել, թե կանեն ամեն ինչ, որ Լեռնային Ղարաբաղում ոչ մի հայ չմնա: Ցույցի մասնակիցներից մի քանի հազար մարդ պատրաստակամությամբ երդվեց, և սկսվեց զինված ջոկատների հավաքագրումը, որոնց կազմավորումը սկզբնական շրջանում օրինականացվեց Ադրբեջանական ԽՍՀ ՆԳՆ-ի և ՕՍՕՆ-ի հաստիքացուցակի ընդլայնմամբ: 1991 թ.

¹⁷ Տե՛ս <http://armenpress.am/arm/print/418188/>

¹⁸ Տե՛ս «02 շաբաթաթերթ», 17.01.2014 թ., թիվ 1, էջ 15:

¹⁹ Տե՛ս **Чобанян С.**, նշվ. աշխ., էջ 17:

սկզբին Ադրբեջանի ՕՍՕՆ-ի թվակազմը Լեռնային Ղարաբաղում կտրուկ աճեց: Ադրբեջանի ՆԳ նախարար Մ. Ասադովը փետրվարի 3-ին հանրապետական հեռուստատեսությամբ պաշտոնապես հայտարարեց, որ «Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքում տեղակայված են Ադրբեջանի ՆԳՆ ՕՍՕՆ-ի 10 հազար զինծառայողներ: Օրերս այդ թիվը կաճի ևս 600 մարդով... Մենք ծրագրում ենք նրանց թիվը ԼՂԻՄ-ի ադրբեջանական գյուղերում հասցնել մինչև 5000 և ավելի... Մտնել Ղարաբաղ և գրավել այն՝ զուտ տեխնիկական խնդիր է...»²⁰:

Ավելի վաղ՝ դեռևս անցյալ դարի 60-ական թթ. սկզբից, ԼՂԻՄ-ում և հարակից շրջաններում ազատորեն գործում էին հատուկ պատրաստված, այսպես կոչված, ադրբեջանական «գողական» կազմավորումներ: Ի դեպ, դրանց աշխուժացման հարցում միանշանակ մեծ էր ու առանձնահատուկ Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ում Հեյդար Ալիևի դերը: Բանդիտական այդ կազմավորումները գործում էին սկզբում տարանջատ, բայց Ալիևի՝ ՊԱԿ-ի նախագահի տեղակալ, մանավանդ նախագահ աշխատած տարիներին հանդես էին գալիս իբրև «օրենքով գողեր»: Այս խմբերը տեղերում ղեկավարում էին դպրոցի տնօրեններ, կուսշրջկոմի պատասխանատու աշխատակիցներ, շրջանային միլիտետներ, դատախազներ, իսկ դրանց թիկունքում կանգնած էին հանրապետական մասշտաբի ղեկավար այրեր, մանավանդ ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի, կառավարության և Ադր. ԿԿ կենտկոմի ղեկավար աշխատողներ: Հենց այդ խմբավորումներն էլ սերմանում էին հայատյացություն և նախապատրաստում հայոց ջարդեր:

Շուշիում գտնվող բանաստեղծ Վազիֆի բետոնե դամբարանը պատրվակ դարձնելով՝ Բաքուն ամեն տարի իսլամական երկրներից հրավիրում էր ծայրահեղականության ու ահաբեկչության բնագավառում փորձված «մասնագետների» և կազմակերպում նրանց գաղտնի հանդիպումները հայատյացությամբ դաստիարակված ադրբեջանական ահաբեկչական խմբերի հրամանատարների հետ: Վերջիններս, անհրաժեշտ հրահանգներ ու միջոցներ ստանալով, ավելի էին սաստկացնում աստելությունը հայ ժողովրդի նկատմամբ: ԼՂԻՄ-ի պետական անվտանգության վարչության աշխատակիցները երբեմն գաղտնի իրազեկում էին Կենտրոն, որ Թուրքիայից եկած «Գորշ գայլերի» պատվիրակները սովորաբար չեն մասնակցում «վազիֆյան ընթերցումներին», այլ ադրբեջանցիների ուղեկցությամբ մեկնում են Կիրովաբադ և Ադդամ՝ հանդիպելու տեղի ադրբեջանցի ահաբեկիչների և գողական խմբավորումների ներկայացուցիչների հետ: Ժամանակին այս մասին Մոսկվա ծավալուն նամակ է գրել ԼՂ կուսմարզկոմի հատուկ բաժնի

²⁰ Մ. Աղաջանյան, Է. Ասատրյան, Ս. Մինասյան, Ադրբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի. Ագրեսիայի իրավաքաղաքական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Եր., 2007, էջ 126:

վարիչ, ՊԱԿ-ի գնդապետի այրի, լուսահոգի Քնարա Մուսայելյանը: Գողական այս կազմավորումներին հանձնարարված էր հայության շրջանում կազմակերպել ահաբեկչություններ, սպանություններ, հայկական տնտեսություններին պատկանող արտադրական շենքերի ավերումներ, հրկիզումներ, ավտովթարներ, անասնագողություններ և այլ հանցագործություններ:

Իրավիճակը և գործունեության մեթոդները բնականաբար փոխվեցին Ղարաբաղյան շարժման ալիքին զուգընթաց: Ադրբեջանի ղեկավարները նորամուծություններ մտցրին գողական-ահաբեկչական այս կազմավորումների ծրագրերում, և նրանք ընդգրկվեցին հատուկ ջոկատների, օժոնականների զինված խմբավորումների մեջ՝ փորձելով ծածկել վերջիններիս գործողություններն օրինականության շղարշով: 1991 թ. սեպտեմբերի 5-ին Ադրբեջանի պաշտպանության նախարարության ստեղծումից և երկրի խորհրդարանի կողմից Ադրբեջանի ազգային բանակ ստեղծելու մասին հոկտեմբերի 9-ին ընդունված որոշումից հետո սկսեցին կազմավորվել կանոնավոր զորամասեր, որոնցում բավականին մեծ տոկոս կազմեցին ինչպես հանցավոր անցյալով մարդիկ, այնպես էլ նորաթուխ քրեական տարրերը: Ադրբեջանի իշխանությունները 1992 թ. յուրատեսակ «համաներում» հայտարարեցին հարյուրավոր բանտարկյալների, որոնք ցանկություն էին հայտնել «կամավոր» մասնակցելու Լեռնային Ղարաբաղում ծավալվող ռազմական գործողություններին: Հատկապես մեծաքանակ հանցագործներ են ծառայել Ադղամի ադրբեջանական զորամասերում: Իսկ վայրագ գործողությունները համակարգելու համար Բաքվից Ղարաբաղ էին ուղարկվել ավելի փորձառու, արտասահմանյան ահաբեկչական որջերում մարզված տասնյակ «հրահանգիչներ», որոնք հասցրել էին սերտ կապեր հաստատել թուրքական «Գորշ գայլեր», արաբական «Համաս» և աֆղանական մոջահեդների կազմավորումների հետ²¹: Նորագույն տարբեր զինատեսակներով և պայթուցիկ միջոցներով զինված՝ նրանք սկսեցին լայնածավալ հարձակումներ գործել հայկական գյուղերի, տնտեսությունների վրա: Սպանում, պատանդ էին վերցնում հայ անասնապահներին և անտեր մնացած հոտը, նախիրը քշում-տանում էին ադրբեջանական շրջաններ: Ճանապարհներին գրավում էին հայերին պատկանող ավտոմեքենաները, զինված հարձակում գործում ավտոբուսների վրա, գնդակահարում ուղևորներին: Միաժամանակ ավերում, հրդեհում էին հայերին պատկանող այգիները, հացահատիկի արտերը, որպեսզի դարաբաղցիներին նետեն սովի ճիրանները: Այնուհետև ավելի կատարելագործված ու դաժան կերպով կտտանքների էին ենթարկում տեղի՝

²¹ Տե՛ս **Շ. Մկրտչյան**, Լեռնային Ղարաբաղ, Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Մտեփանակերտ, 2003, էջ 137:

աչքի ընկնող հայ ղեկավարներին, մտավորականներին, աներևակայելի գլխագին պահանջում գերեվարվածների հարազատներից, զարհուրելի խոշտանգումների ենթարկում անմեղ մարդկանց՝ կադրային աշխատողների, մտավորականների, երեխաների, ծերերի: Եվ այս չարանենգ արարքները Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ ուղղված ահաբեկչական ծրագրված գործողությունների մի օղակն էին միայն, որոնք առավել համակարգված ու մեծ թափով շարունակվեցին ամբողջ Ադրբեջանի հայաբնակ շրջաններով մեկ²²: Մի բան հստակ է. Ադրբեջանում և Ղարաբաղում հայության նկատմամբ իրականացված ահաբեկչությունները, սպանությունները, տեղահանությունները ունեին քաղաքական, ազգայնամոլական բնույթ և Ղարաբաղը Նախիջևանի օրինակով հայերից մաքրելու հայաստաց քաղաքականության շղթայի շարունակությունն էին, ինչը լայն առումով տեղավորվում է Հայոց ցեղասպանության շարունակության համատեքստում:

1992 թ. ադրբեջանական հատուկ ծառայություններն ու կառավարական ուժերը սկսեցին հակամարտությանը մասնակից դարձնել վարձկանների (այդ թվում՝ աֆղան մոջահեդների ու չեչեն գրոհայիների): 1993 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին ղարաբաղյան ճակատի բոլոր տեղամասերում ռազմական գործողություններին արդեն մասնակցում էին 1500 մոջահեդներ, որոնց հատուկ օգտագործում էին հետախուզական-դիվերսիոն գործողություններում, առաջապահ գրոհային ստորաբաժանումներում, ինչպես նաև ադրբեջանական բանակի թիկունքում արգելափակիչ ջոկատներ ձևավորելու նպատակով: Աֆղան վարձկանները նախքան ռազմական դիրքեր ուղարկվելը հավաքվում էին Գերան և Էրզի բնակավայրերի ուսումնական կենտրոններում: Ադրբեջանի ԶՈւ կազմում նրանք հաշվառված էին որպես «հատուկ համակազմ», իսկ ռազմական ստորաբաժանումներում գրանցված էին «A ջոկատ» անվան տակ: Աֆղան վարձկանների ընդհանուր հրամանատարությունը իրականացնում էր ծագումով տաջիկ «գեներալ» Սամունը: Մյուս հրամանատարներից էին Վահադուլլան, Ախիջերին, Վազերին, Խոջա-Մալիքը: 1994 թ. զինադադարի կնքումից հետո, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, աֆղանական վարձկանները Իրանով դուրս բերվեցին Ադրբեջանից²³: Կան ղարաբաղյան ռազմաճակատում աֆղանցի վարձկանների մասնակցությունը հաստատող բազմաթիվ փաստեր ու իրեղեն ապացույցներ՝ նկարներ, արաբատառ թերթեր, գրականություն, քարտեզներ, նոթատետրեր: Պահպանված է նաև Ադրբեջանի ՊՆ ղարաբաղյան ռազմաճակատի շտաբի պետի՝ 15-ը օգոստոսի 1993 թ. գրությունը՝ ուղղված թիվ 160 զորամասի հրամանա-

²² Տե՛ս նույն տեղը, էջ 135-138:

²³ Տե՛ս Մ. Աղաջանյան, Է. Ասատրյան, Ս. Մինասյան, նշվ. աշխ., էջ 124:

տարին՝ 522 հոգուց կազմված «աֆղանցիներին» ընդունելու վերաբերյալ, ինչպես նաև 1994 թ. ապրիլի 22-ին Հ. Ալիևի և ճակատի հրամանատարներից մեկի միջև տեղի ունեցած ռադիոգրույցի վերջնական քաղվածքը, որտեղ վերջինս հայտնում է, թե խնդիր է ունեցել աֆղանցիների, մասնավորապես նրանց հրամանատար Վահադուլլահի հետ²⁴: Աֆղան վարձկանների շարքերում եղել են նաև «վահաբիստ-մարտիկներ»²⁵ :

1992-1993 թթ. հիմնականում Մարտակերտի և Ադդամի ուղղությամբ գործում էին չեչեն վարձկանների մի քանի առանձին ջոկատներ, որոնք գլխավորապես իրականացնում էին հետախուզական-դիվերսիոն առաջադրանքներ: Ռեզիստանտ գործողությունների ակտիվ փուլի հենց սկզբից ադրբեջանական բանակի կազմում կռվում էին մեծ քանակությամբ ռուս և ուկրաինացի վարձկաններ, դիպուկահարներ, որոնք ծառայում էին բոլոր զորատեսակներում՝ ցամաքային զորքերից մինչև ավիացիա: Հենց սլավոնական վարձկաններն էին սպասարկում ադրբեջանական բանակի առավել բարդ տեխնիկան: 1994 թ. հունվար-փետրվար ամիսներին Ռուսաստանից և Ուկրաինայից Ադրբեջան ժամանեց վարձկանների մի մեծ խումբ, որի օգնությամբ ադրբեջանական ռազմական հրամանատարությունը ԼՂՀ պաշտպանության բանակի թիկունքում ապրիլին պլանավորել էր իրականացնել օդադեսանտային «Էդելվեյս» լայնածավալ օպերացիան: ԼՂՀ պաշտպանության նախարարության գնահատականներով՝ ադրբեջանական բանակի կազմում դարաբաղյան ճակատի մարտերում մասնակցած ռուս և ուկրաինացի վարձկանների ընդհանուր թիվը ավելի քան 5 հազար էր²⁶:

Ղարաբաղյան շարժման հենց սկզբնական փուլից սկսած՝ ադրբեջանական իշխանություններին տարատեսակ օժանդակություն է ցույց տվել Թուրքիան: Չենքի ու հանդերձանքի մատակարարմանը զուգահեռ՝ թուրքական կողմը Թուրքիայի և Ադրբեջանի տարածքներում գործող ռազմական ուսումնարաններում նախաձեռնեց ադրբեջանցի սպաների և հատուկ ջոկատայինների ուսուցման կազմակերպումը: Արդեն 1992 թ. հունվարին Ադրբեջանի նախագահ Ա. Մութալիբովի՝ Թուրքիա կատարած պաշտոնական այցի ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց թուրքական ռազմական ուսումնարաններում ադրբեջանցի սպաների վերապատրաստման վերաբերյալ²⁷: Նույն թվականի մարտին Ադրբեջանի վարչապետ Հ. Հասանովը պաշտոնական ուղեր-

²⁴ Նյութերը պահպանվում են ՀՀ անվտանգության մարմինների պատմության թանգարանում:

²⁵ Гусейн-заде Р. Религия и политика: Взаимоотношения на Азербайджанском фоне, «Центральная Азия и Кавказ», журнал социально-политических исследований, Швеция, 2004, 3 (33), с.158.

²⁶ Տե՛ս Մ. Աղաջանյան, Է. Ասատրյան, Ս. Մինասյան, նշվ. աշխ., էջ 124:

²⁷ Տե՛ս Демоян Г. Турция и Карабахский конфликт. <http://armenianhouse.org/demoyan/turkey/ch4.html>

ձով դիմել է Թուրքիայի նախագահ Թ. Օզալին և վարչապետ Ս. Դեմիրելին՝ «ակնկալելով եղբայրների և բարեկամների կողմից անհետաձգելի օգնություն»²⁸: Միննույն ժամանակ, Ադրբեջանում՝ Գաբալայի ռադիոլուրացիոն բազայի տարածքում, թուրքական ռազմական հրահանգիչները սկսել էին 450 ադրբեջանցի զորակոչիկների ուսուցումը: Ղարաբաղյան ճակատներում թուրքական առանձին ջոկատների անմիջական մասնակցությունից բացի, թուրքական բանակի շուրջ 150 բարձրաստիճան սպաներ, այդ թվում՝ պահեստի 10 գեներալներ, 1992 թ. սկզբին մասնակցել են ռազմական գործողությունների մշակմանը և ադրբեջանական բանակի գրոհային ու դիվերսիոն ստորաբաժանումների ուսուցմանը: Ա. Էլչիբեյի ռազմական խորհրդական դարձավ թուրք գեներալ Յաշար Դեմիրբուլաքը, որը հետագայում ընդգրկվեց Ադրբեջանի անվտանգության խորհրդի կազմի մեջ²⁹:

Իր գործունեությունը բավականին ակտիվացրեց նաև Թուրքիայի հիմնական հատուկ ծառայություններից մեկը՝ Ազգային հետախուզական կազմակերպությունը (MIT), որը սերտորեն համագործակցում էր «Գորշ գայլեր» թուրքական ծայրահեղ ազգայնական կազմակերպության ադրբեջանական բաժանմունքի հետ: «Գորշ գայլերն» Ադրբեջանում ունեին օրինական կարգավիճակ: Այստեղ կազմակերպությանն անդամակցում էր շուրջ 15 հազար մարդ, ընդ որում՝ նրանք բոլորը զենք ունեին՝ ծառայելով ինչպես բանակում և ՆԳՆ-ում, այնպես էլ զինված անկախ կազմավորումներում³⁰: Հօգուտ Ադրբեջանի հետախուզություն իրականացնելուց բացի, MIT-ը Բաքվի մերձակայքում գտնվող «Նասուսնայա» ռազմական օդակայանում ուսումնական կենտրոն էր («Գարահեյրաթ») ստեղծել ադրբեջանական դիվերսիոն-հետախուզական ջոկատներ պատրաստելու համար: Այդտեղ մարզվել և 1992 թվականից հետախուզական խումբ է ղեկավարել Դիլիամ Ասկերովը³¹, որը 2014 թ. հուլիսին դիվերսիոն-հետախուզական գործողություն իրականացնելու նպատակով ներթափանցել էր ԼՂՀ տարածք և ձերբակալվել ԼՂՀ իրավապահ մարմինների կողմից: Բացի այդ, Թուրքիայի հետախուզական ծառայության նախկին գործակալ, Ադրբեջանի ՊԱԿ-ի նախկին աշխատակից Նևրուզ Հասանօղլուի առաջարկով կրկին Բաքվի մերձակայքում հիմնվում է մեկ այլ ռազմական ճամբար՝ «Ռուզգար» (քամի) անվամբ, որտեղ, բացի զինավարժություններից, դասավանդում էին նաև դիվերսիայի տակտիկա: Ն. Հասանօղլուն դեռևս Ադրբեջանի ՊԱԿ-ում աշխատելու տարիներից է աչքի ընկել պանթուրքական հայացքներով:

²⁸ Տե՛ս Մ. Աղաջանյան, Է. Ասատրյան, Ս. Մինասյան, նշվ. աշխ., էջ 131:

²⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 132:

³⁰ Տե՛ս Демоян Г., նշվ. աշխ.:

³¹ Տե՛ս İsmayilov Ziyəddin Şura oğlu, Kəlbəcərə tək getmə, ata («Քելբաջար միայնակ մի գնա, հայրի կ», աղբ.), <http://www.misra.az/other/4131-klbcr-tk-getm-ata-balgq-gg.html>

1988-1989 թթ. Թուրքիայից և այլ երկրներից եկած կամավորներից ստեղծել է «Բողոքուրթ» կոչվող զինված հրոսակախումբը, որն ակտիվորեն մասնակցել է Բաքվում տեղի ունեցած հայկական կոտորածներին³²:

1988 թ. Ղարաբաղյան շարժումից սկսած՝ պանթուրքիստական կազմակերպությունները և թուրքական հետախուզությունը Կովկասի էթնիկ փախստականներից արագացված կարգով սկսեցին ձևավորել ազգային-ծայրահեղական կառույցներ՝ ԽՍՀՄ-ի, այնուհետև ԱՊՀ երկրների և Ռուսաստանի դեմ օգտագործելու նպատակով: 1988-1990 թթ. Սումգայիթում և Բաքվում հայ բնակչության ջարդերի անմիջական կազմակերպիչներից էին թուրքական «Գորշ գայլերի» էմիսարները և Թուրքիայի պաշտպանության նախարարության հետախուզության գլխավոր վարչությունը: Պանթուրքիստներն անմիջական մասնակցություն ունեցան նաև Ադրբեջանի ազգային ճակատի ձևավորմանը:

ԽՍՀՄ փլուզումից հետո՝ 2-3 տարվա ընթացքում, Ադրբեջանի տարածքում թուրքական հետախուզության ակտիվ մասնակցությամբ ստեղծվեցին ընդհանուր առմամբ 32 ռազմական հատուկ ուսումնական կենտրոններ³³, ռազմական ճամբարներ և բազաներ: «Գորշ գայլեր» կազմակերպության հիման վրա խոշոր ուսումնական կենտրոն է գործել նաև Ադրբեջանի Ապշերոնի շրջանի Պոզդեկ ավանի շրջակայքում: Այստեղ պատրաստվել են ավելի քան 2 հազար զինյալներ, որոնք մասնակցել են ղարաբաղյան, չեչենական, արխազական ռազմական հակամարտություններին: Այդ ճամբար հաճախակի այցելում էր չեչեն գրոհայինների պարագլուխներից Շամիլ Բասանը³⁴:

1994 թ. վերջերին թուրքական պատվիրակության՝ Իսրայել կատարած այցի ժամանակ, որին մասնակցում էին Թուրքիայի հատուկ ծառայությունների ներկայացուցիչներ, ԱԳՆ բարձրաստիճան պաշտոնյաներ, պաշտպանության նախարարության աշխատակիցներ, հայտարարվել է, թե Անկարան մտադիր է շարունակել ֆինանսական, նյութական և ռազմական օգնություն ցուցաբերել Ադրբեջանին: Ի դեպ, Ադրբեջանին մատակարարվող ռազմամթերքը տարբեր մասնավոր ընկերությունների անվան տակ որպես սննդամթերք տեղափոխվել է նաև Վրաստանի տարածքով³⁵: 1992 թ. Ադրբեջանում հիմնվեց թուրք ռազմական խորհրդականների և հրահանգիչների ապարատ: Ադրբեջանի նախագահի ռազմական խորհրդական նշանակվեց թուրք գեներալ Քալաբայջին: Այդ ընթացքում Ադրբեջանում էին գտնվում Թուրքիայից ժամանած 450 ռազմական մասնագետներ, որոնց մեծ մասը ուղարկվել էր

³² Տե՛ս **Ա. Ավագյան**, Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ., «Հայկական բանակ», 3 (49), Եր., 2006, էջ 53:

³³ Տե՛ս **Ализаде З.** Азербайджан. Конец второй республики, <http://southcaucasus.com/old/index.php?page=publications&id=2500>

³⁴ Տե՛ս http://www.bvahan.com/ArmenianWay/aw/igor_muradian/turk_azer/2.html

³⁵ Տե՛ս http://www.artsakhworld.com/igor_muradian/USA/3.2.html

Թուրքիայի հիմնական երկու հատուկ ծառայությունների՝ ազգային հետախուզական կազմակերպության և պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչության կողմից: Թուրքական և ադրբեջանական հատուկ ծառայությունները Նախիջևանի Սադարակի շրջանում և Արծվաշենում ստեղծել էին նաև չեչեն զինյալների ճամբարներ, որոնք անմիջապես Հայաստանի սահմանամերձ շրջաններում, ինչպես նաև 1992 թ. ադրբեջանցիների կողմից գրավված Շահումյանի շրջանի գյուղերում տեղակայելը վկայում էր Հայաստանի դեմ ուղղված հատուկ ծրագրված գործողությունների մասին³⁶:

Այսպիսով, 1988-1994 թթ. հայ ժողովրդի նկատմամբ ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից կազմակերպված կամ դրանց անմիջական մասնակցությամբ իրականացված ահաբեկչական ակտերը, սպանությունները, տեղահանությունները, վայրագությունները, դիվերսիոն-հետախուզական գործողությունները միանշանակ կարելի է համարել Հայոց ցեղասպանության շարունակություն, մանավանդ որ դրանք հրահանգավորվել ու ուղղորդվել են Թուրքիայի համապատասխան ծայրահեղական ու ազգայնական կառույցների կողմից:

Բանալի բառեր – *պետականորեն կազմակերպված կոտորածներ, ազգային խտրականություն, դիվերսիոն գործողություններ, Արցախյան հակամարտություն, հակահայ քաղաքականություն*

ТИГРАН ДАВИТАВЯН – Антиармянская деятельность азербайджанских спецслужб в 1988–1994 гг. – В статье на фактическом материале рассматривается антиармянская политика, которую Азербайджан проводил против населения Армении и Нагорного Карабаха и которая проявлялась в терактах, убийствах, депортации, диверсиях и т. д. Эти действия квалифицируются как продолжение Геноцида армян, тем более что в них явственно просматривался турецкий почерк и непосредственное участие турок в организации, инструктаже и руководстве ими.

Ключевые слова: *организованная на государственном уровне резня, национальная дискриминация, диверсионная деятельность, Арцахский конфликт, антиармянская политика*

TIGRAN DAVITAVYAN – The Anti-Armenian Activity of Special Services of Azerbaijan in 1988-1994. – The article presents the facts of anti-Armenian policy against Armenia and Nagorno-Karabakh adopted and implemented by Azerbaijan in 1988-1994 the manifestations of which were terroristic operations, murder, deportation, vandalism, sabotage, etc. The author considers these facts to be the continuation of the Armenian Genocide since the Turkish manner of acting and their direct presence in organizing, instructing and guiding these actions are obvious.

Key words: *a state-organized massacres, ethnic discrimination, diversions, the Nagorno-Karabakh conflict, anti-Armenian policy*

³⁶ Տե՛ս http://www.bvahan.com/ArmenianWay/aw/igor_muradian/turk_azer/2.html

ШАМИРАМ И АРА ГЕХЕЦИК

ФЕЛИКС ТЕР-МАРТИРОСОВ

Шамирам

Уже давно исследователи сопоставили образ Шамирам с образом легендарной Семирамиды. Имя Семирамиды вошло в историю благодаря сочинению древнегреческого историка конца V – начала IV вв. до н. э. Ктесия Книдского "Персиака", дошедшего до нас в фрагментах, пересказанных другими историками и, прежде всего, Диодором Сицилийским¹. Развернувшиеся в прошлом столетии работы по исследованию Древнего Востока привели к критическому пересмотру сведений многих историков древности, в том числе и сведений Ктесия о Семирамиде. Первоначально в Семирамиде искали древнее божество плодородия и любви². Но при изучении мифологии Древнего мира божество с таким именем не было обнаружено. Исследования по истории Ассирии привели к выводу о том, что под именем Семирамиды, с которым связывались легенды, наделяющие ее чертами восточных богинь плодородия, надо подразумевать ассирийскую царицу Шаммурамат (810–806 гг. до н. э.)³. Возникновение и распространение этих легенд, по мнению Леман-Гаупта, было связано с мидийцами. Он предполагал, что мидийцы, столкнувшись с ассирийцами во времена правления Шаммурамат, были так поражены правлением женщины, что приписали ей все военные успехи ассирийцев, а в дальнейшем, связав ее личность с чертами богинь плодородия, они (мидяне) использовали эту легенду для оправдания своих стремлений к власти. По мнению Леман-Гаупта, с установлением гегемонии мидян на Ближнем Востоке эта легенда получила широкое распространение, проникнув и на территорию Армении⁴. Гипотеза Леман-Гаупта получила широкое признание⁵ и определила дальнейший ход исследований о Семирамиде. Они свелись к поискам в двух направлениях. Первое направление – это исторические и филологические изыскания об ассирийской царице Шаммурамат. Второе направление – это определение характера и ареала распространения литературной и фольклорной

¹ См.: **Diodor of Sicily**, with an English translation by C. H. Oldfather. V. I. London, 1960.

² См.: **Lenormant F.** La Légende de Semiramis. Paris, 1973; **Sayace A. N.** The Cuneiform inscription of Van. Journal of the Royal Asiatic Society of G. Britain and Ireland. London, 1882, Vol. XIV, p. 444; **Ն. Արմնց**, Մի հին պաշտամունքի հետքերը Հայաստանում, «Հայաստանի պատմություն». Եր., 1972, էջ 370-381.

³ См.: **Тураев Б. А.** История Древнего Востока. Пг., 1924, с. 44.

⁴ См.: **Lehmann-Haupt C. F.** Armenien Einst und Jetzt, Zweiter Band. Berlin, 1926, p. 253.

⁵ См.: **Дьяконов И. М.** История Мидии. М.-Л., 1956, с. 167–169; «Мифологический словарь». Л., 1961, с. 219; **Гусейнов Г. А.** Семирамида // «Мифологический словарь». М., 1990, с. 484.

версий легенд о Семирамиде и поиски их параллелей.

Своеобразное мнение о Семирамиде-Шамирам установилось в Армении. Предполагалось, что культ Шамирам, занесенный в Армению под влиянием древневосточных верований, утвердился здесь как культ богини плодородия, любви и войны и связывался в единый узел с культом местного "умирающего и воскресающего божества" Ара Прекрасного (Гехецик)⁶. В мировой историографии гипотеза Леман-Гаупта преобладает, несмотря на то, что мнение о правлении и регентстве Шаммурамат было подвергнуто серьезной критике как недостоверное⁷. Причем в современных исследованиях о Семирамиде превалируют филологические тенденции⁸. Неубедительность господствующей гипотезы заключается в том, что она не способна объяснить целого ряда вопросов, возникающих при рассмотрении сведений о Семирамиде-Шамирам. Во-первых, неизвестны мидийские легенды о ней и отсутствуют какие-либо указания на наличие их в древности. Во-вторых, представляется маловероятным, что мидийцы, столкнувшиеся с ассирийской агрессией еще при походах Ашшурнацирапала II в 80-х годах IX в. до н. э., а затем сыгравшие одну из главных ролей в разгроме Ассирии, были так плохо знакомы с ее реальной историей, что свели ее к истории Семирамиды. Если же, как считал Леман-Гаупт, мидийцы это делали сознательно, предполагая опереться на ее культ в своих завоеваниях в Передней Азии, то значит, этот культ уже должен был иметь здесь какое-то признание. Следует отметить, что само господство мидийцев в Передней Азии было очень кратковременным и имело, прежде всего, политический характер. Поэтому неясно, почему население Армянского нагорья, сражавшееся с ассирийцами с конца II тыс. до н. э. до краха ассирийского царства, должно было воспринять и сохранить легенды мидийских завоевателей об "ассирийской царице"? Неясно также, почему у народа (протоармян и армян), знакомого с жестокостью ассирийских завоевателей, разрушавших все на своем пути, Шамирам превратилась в царицу-строительницу, которой приписали постройки урартских царей? Нельзя согласиться с бытующими предположениями, что легенда о Семирамиде-Шамирам есть обработка Ктесием и Мовсесом Хоренаци широко распространенных кочующих сюжетов. Как правило, в кочующих сюжетах изображались видные исторические личности, основатели династий. Переходя из одного региона в другой, такие сюжеты обогащались новыми эпизодами, в них появлялись новые действующие лица, что позволяло этим легендам органично вписываться в новую историческую среду. Ассирийская царица Шаммурамат не была крупным государственным деятелем Ассирии, и даже, как указывалось выше, подвергается сомнению возможность ее правления.

⁶ См.: **Գ. Ղափանցյան**, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1944, էջ 22–28; **Абегян М.** История древнеармянской литературы. Ер., 1975, с. 26; Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Եր., 1971, էջ 324:

⁷ См.: **Page S.** Semiramis, *Orientalia*. N. S., 1969, p. 457; **Lewy H.** Nitokris: Naqia. *Journal of Near East Studies*. Vol. XI, 1952; **Eilers W.** Semiramis, eintstehung und nachhall einer altorientalischen Sage. Wien, 1971.

⁸ См.: **Алиев Г. Ю.** Легенда о Хосрове и Ширин в литературах народов Востока. М., 1960; **Eilers W.** Указ. соч.; **Боржак И.** Возникновение, отголосок и легенды о Семирамиде // Сборник "Древний Восток". Выпуск III. Ер., 1978, с. 212 и далее.

Следует учесть, что сам этот сюжет, в отличие от прочих кочующих сюжетов до Ктесия и других греческих авторов, не встречается в литературе Древнего мира. В дальнейшем он долгое время связывался с регионами северной Сирии и Армении. Кроме того, обычно кочующие сюжеты использовались и передавались в древней литературе без ссылок на источник. Но ни один античный автор не говорил о Семирамиде без ссылок на Ктесия. Таким образом, если признавать эти сведения литературной легендой, то ее автором следует считать Ктесия. Однако такому приписанию авторства противоречит историческая версия, изложенная Мовсесом Хоренаци в иной, чем у Ктесия форме. Следует также учесть, что сообщения Ктесии и Мовсеса Хоренаци переданы в виде развернутой хронологии и лишены многих черт, присущих литературным произведениям. Отсутствует единая, пронизывающая все содержание фабула; нет побудительного момента действий героини, нет кульминационного нарастания событий, отсутствует дидактический финал. Более того, истый христианин и патриот своей Родины, Мовсес Хоренаци, именуя Шамирам "сладолюбивой и блудной", не только не морализовал по этому поводу, но даже именовал ее законной правительницей страны, воспитательницей сына Ара Гехецика – правителя Армении⁹. Нельзя согласиться и с предположением, что Семирамида в легендах являлась обобщенным мифологическим выражением идеала женской любви, красоты, героизма, приписанных царице Шаммурамат¹⁰. Следует отметить, что нам неизвестны факты создания подобных легенд даже о таких реальных правительницах, как царица Египта Хатшепсут. Кроме того, необходимо строго отделять образы Семирамиды-Шамирам у Ктесия и Хоренаци от образов героини античного романа о Нине¹¹ и Ширин в восточных поэмах и преданиях, с которыми при литературных изысканиях обычно сопоставляют Семирамиду. Так, у Ктесия Семирамида – объект любви, но не говорится о ее любви к супругам. Все ее деяния совершаются отнюдь не из любовных устремлений. У Хоренаци Шамирам сама пылала страстью "блудной", но все ее положительные действия не имели любовных мотиваций. У Ктесия и Хоренаци Семирамида и Шамирам – это деятельные, властные правительницы, героини в военных подвигах.

В литературных произведениях произошла резкая трансформация облика героини. Она нежна, верна, вдохновляла героев на подвиги, но сама бездеятельна. При этом героиня лишилась богатства черт, присущих облику Семирамиды и Шамирам. В поэме Низами "Хосров и Ширин" образ Семирамиды разделяется на два лица: могучую правительницу Мехин-Бану страны Армении, столицей которой был Партав (г. Барда в современной республике Азербайджан – регион, служивший в древности местом зимней резиденции армянских царей) и прекрасную Ширин¹². В преданиях Пятиречья

⁹ См.: **Мовсес Хоренаци**. История Армении. Перевод с древнеармянского яз., введение и примечания Г. Саркисяна. Ер., 1990, кн. 1, гл. 15 и 20.

¹⁰ См.: **Eilers W.**, Указ. соч., с. 12.

¹¹ См.: **Кузнецова Т. И.** Роман о Нине и другие папирусные отрывки греческого романа // "Античный роман" М., 1969, с. 107.

¹² См.: **Низами Гянджеви**. Хосров и Ширин. Баку, 1985, с. 94–95.

этот образ дробится на три персонажа: Махиман-Бано, Ширин и Коварную Старуху¹³. Если же считать, что сообщение о Семирамиде это пересказ эпических преданий Ассирии, то мы наталкиваемся на следующее противоречие: для эпоса характерна связь с реальными лицами и событиями, а в сообщения о Семирамиде она лишь именуется ассирийской царицей, но ни окружающие ее лица, ни описываемые события не имеют связи с историей Ассирии, а приписываются Вавилону. Предположение арменоведов о чужеродности культа Шамирам для Армении не объясняет, а затрудняет проблему. Возникает вопрос: откуда именно, когда и кем был привнесен этот культ? Более того, обычно умирающие и воскресающие боги и богини плодородия, какими считаются Ара Гехецик и Шамирам, выступают в мифологиях Древнего Востока единой парой. Предполагая привнесенность культа Шамирам в Армению, следует предполагать, что рядом с Ара ранее существовало другое божество, и то же самое надо предполагать относительно Шамирам.

Создавшееся положение в исследованиях о Семирамиде можно объяснить, прежде всего, методом изучения сведений. Историки, обнаружив несоответствие сведений Ктесия исторической действительности, обратились к предполагаемым достоверным эпизодам его сообщений: к имени и титулу аналогичным имени и титулу царицы Ассирии Шаммурамат. Отсюда все другие поддающиеся проверке исторические события также отнесены ко времени ее правления. В свою очередь, литературоведы рассматривают сведения древних историков о Семирамиде как прототип более поздних литературных версий, а Ктесия – как "отца исторического романа"¹⁴ и в основном обращаются к этим сведениям в поисках сходства имен и линий развития легенды. Например, при сопоставлении сведений о Семирамиде с поэмами и преданиями о Фархаде и Ширин этимологизируется имя Оннея, которое возводится к форме *umman* (*um*) в вавилонско-арамейском – мастер, мудрец, художник. Отсюда Онней рассматривается как прототип Фархада¹⁵. Но при всей занимательности таких поисков укажу, что у Ктесия Онней военачальник, а не создатель и смерть его предшествует дальнейшему возвышению Семирамиды, в то время как в поэмах смерть Фархада неизбежно влечет за собой смерть Ширин. Поэтому чисто филологические изыскания и сопоставления в отсутствие смысловой связи в контекстах представляются неправомерными. Следует также отметить, что историко-филологические изыскания по этимологии имени *Sa-am-mi-ra-mat* также не дали убедительных результатов. Предполагалось, что оно имеет теофорный характер: неизвестное божество + *ramat*¹⁶. В настоящее время принято считать, что подлинным именем Шаммурамат-Семирамиды было *Nabu-Kuduri-usur*, в греческой передаче Нитокрис¹⁷. Находка статуи бога Набу с

¹³ См.: «О храбрых, нежных и влюбленных». Сказания Пятиречья. М., 1967, с. 85.

¹⁴ См.: **Jakoby F.** Ktesias, Real Encyclopedia. Bd. IX, 1992, p. 2045.

¹⁵ См.: **Eilers W.** Указ. Соч., с. 51–52.

¹⁶ Там же, с. 40–41.

¹⁷ См.: **Hall H. R.** La Sculpture babylonienne British Museum // *ArsAsiatica*, XI, 1982, pl. XXIV 2, s. 41 f.

надписью Шаммурамат позволила предположить, что вавилонская царевна, выйдя замуж за ассирийского царя и став царицей Ассирии, привнесла с собой культ бога Набу¹⁸.

Для разрешения вопроса о Семирамиде-Шамирам представляется необходимым рассмотрение всего комплекса сообщений Ктесия с привлечением сведений Мовсеса Хоренаци и других данных. Рассмотрим древние топонимы Семирамиды-Шамирам и связанные с ними легенды, не путая их с топонимами Ширин. В Вавилонии это сады Семирамиды¹⁹ и стена Семирамиды²⁰; в Киликии – насыпь Семирамиды и расположенное здесь святилище Артемиды Перасийской²¹; в Понте – курган Семирамиды и стоявший на нем храм Анаитиды²²; в Армении – гора Шамирам (современный Котайк-Атис), рядом с горой Ара²³; канал Шамирам в области Артаמיד²⁴; город Шамирамакерт-Ван²⁵; поселение Шамирам на горе Гургур²⁶; берущая отсюда истоки река с тем же названием, связанная также с легендой об армянской богине любви и красоты Астхик²⁷; крепость Шамирам в Чуарш-Рот, севернее озера Урмии²⁸. Нельзя предположить, что топонимы Семирамиды-Шамирам были занесены ассирийцами, так как неясно, в связи с какими событиями они могли быть ими распространены и почему сохранились у местного населения. Весьма спорно предположение о распространении этих топонимов под влиянием мидян. Отмечу, что в древней топонимике Армении нет топонимов с именами завоевателей или чужестранцев. Неоспоримо также, что широкое распространение топонимов Семирамиды-Шамирам не означало, что население данных областей черпало сведения у Ктесии и Хоренаци. Большинство данных топонимов в сведениях названных историков отсутствует. Представляется вероятным, что эти топонимы отражают существование в древности топонимов, близких по форме к именам Семирамиды-Шамирам, и близость форм названий в легендах и преданиях к именам позволила древним авторам передать эти названия местностей как топонимы Семирамиды-Шамирам. Показательно, что в легендах топонимы являются древним пластом и связаны со святилищами богинь плодородия и любви: Анаит, Артемиды, Астхик, а в Гиерополисе Семирамида прямо упоминается как божество²⁹. Это согласуется как с наличием мифологических черт у Семирамиды-Шамирам, так и с изображением в сведениях Ктесия и Хоренаци ее облика. В нем, как и у

¹⁸ См.: Lewy H. Указ. соч., с. 214; Eilers W. Указ. соч., с. 42–44.

¹⁹ См.: Diodor, II, 6, 10.

²⁰ См.: Strabo, XIII, II, 7.

²¹ См.: Strabo, XII, XIV, 8.

²² См.: Strabo, XII, II, 37.

²³ См.: Абебян М. История древнеармянской литературы, Ер., 1975, с. 27.

²⁴ См.: Мовсес Хоренаци. Указ. соч., кн. I, гл. 11–12.

²⁵ См.: Там же, гл. 16.

²⁶ См.: Ն. Աղնոց, նշվ. աշխ., էջ 248.

²⁷ См.: Գ. Սրվաճաճյան, Գրոց-Բրոց, Կոստանդնուպոլիս, 1874, էջ 97.

²⁸ «Թովմայի վարդապետի Արծրունիոյ Պատմութիւն տանն Արծրունեաց», Թիֆլիս, 1917, էջ 443:

²⁹ См.: Лукриан. О сирийской богине.

древневосточной богини Иштар, тесно переплетаются отрицательные и положительные деяния и черты характера. Это позволяет предполагать наличие в сведениях Ктесия и Хоренаци мифологической основы о богине плодородия, выступавшей здесь под именем Семирамиды-Шамирам. Хотя, как указывалось, имя Семирамиды восходит к ассирийской форме Шаммурамат, но по вышеприведенным причинам нет основания связывать гипотетическую богиню Семирамиду-Шамирам с ассирийским пантеоном. Исходя из географии распространения топонимов, представляется возможным отнести процесс их распространения ко II тыс. до н. э., когда на юге Армянского нагорья, в Сирии, в северной и центральной Месопотамии, вплоть до Вавилонии, частично в Палестине прослеживаются хурритоязычные этнические массы. На западе они распространялись до киликийского Тавра, на Востоке прослежены в районе Урмии. Севернее хурритов центральную часть Армянского нагорья занимал урартский этнический массив, а еще далее, к северу, в центральном и восточном Закавказье находилась третья группа племен – этиунская, предположительно родственная как хурритам, так и урартам³⁰. В хурритском пантеоне богиней плодородия является Sauska – Шавушка, которая была богиней любви, плотской страсти, войны и раздора. Её образ типологически близок облику гипотетической богини Семирамиды-Шамирам. Следует отметить, что хурритский этнический массив состоял из многочисленных групп племен, отличавшихся по диалектам. Поэтому имя Sauska достаточно условно в качестве названия для единой богини плодородия хурритов. Богиня Шавушка в ряде случаев писалась с идеограммой Иштар³¹. Следы древнего мифа об Иштар, сильно видоизмененные в результате историзации, прослеживаются и при рассмотрении сведений Ктесия о Семирамиде. "Семирамида, – как говорит Ктесий, – дочь Деркетто, сирийской богини и некоего сирийца, которая воспитана Симмой, являвшимся слугой царя Нина, выйдя замуж за Оннея, некоего царского вельможу, она имела двух сыновей. (После этого) с мужем захватила Бактры; когда об этом узнал Нин, то хотя уже был стариком, женился на ней и она имела от него сына Ниния. После смерти Нина (Семирамида) окружила Вавилон стенами из обожженного кирпича и асфальта и воздвигла храм Бэла. Наконец, подвергнувшись козням Ниния, она окончила жизнь в возрасте 62 лет, процарствовав 42 года"³².

Исторический метод Ктесия заключался в использовании устных и письменных источников, из которых он компоновал свои $\lambda\omicron\upsilon\omicron\iota$, сливая их в органическое целое, связанное единым сюжетом³³. Это позволяет искать в приведенном выше отрывке о Семирамиде следующие составные части:

1. Рождение, воспитание и первое замужество Семирамиды.
2. Смерть Оннея и вторичное замужество Семирамиды.

³⁰ См.: Дьяконов И. М. Предыстория армянского народа. Ер., 1968, с. 17–19.

³¹ См.: Хачикян М. Л. Шавушка // «Мифы народов мира». Т. II. М., 1988, с. 636.

³² См.: Анонимный автор. История Семирамиды в целом // Пьянков И. В. Средняя Азия в известиях античного историка Ктесия. Душанбе, 1975, с. 53.

³³ См.: Пьянков И. В. Указ. соч., с. 23.

3. Постройки в Вавилоне.

4. Захват Бактр.

5. Смерть Семирамиды.

1. *Рождение Семирамиды.* В приведенном отрывке обращает на себя внимание сходство имен окружающих Семирамиду с именами богов Вавилонии, окружающих Иштар и единство структур их родства. Согласно некоторым мифам³⁴, мужем Иштар являлся верховный бог Ану, у Ктесия – управляющий Сирией Онней. Иштар приходилась внучкой или дочерью бога Луны Сина, покровителя скота, у Ктесия она воспитанница царского пастуха Симмы.

2. *Смерть Оннея и вторичное замужество Семирамиды.* Данный сюжет отразил захват Вавилона Ассирией, поэтому при пересказе мифа вавилонские боги изображены как царские слуги.

3. *Постройки в Вавилоне.* Постройки в Вавилоне более подробно описаны у Диодора. Эти постройки из обожженного кирпича и асфальта хорошо сочетаются с постройками нововавилоиского периода³⁵. Эта связь отражена в "Истории" Геродота, повествующего о постройке Семирамидой каменного моста³⁶.

4. *Захват Бактр.* Как известно, реальное завоевание Бактрии произошло при Кире II. Ключом к разъяснению этого предания может послужить сообщение Диодора Сицилийского о детях Семирамиды от Оннея, которых звали Гюпатос и Гидасп³⁷. Последнее имя имеет явно иранскую форму, что свидетельствует о его позднем включении в миф. С другой стороны, тот факт, что их отцом здесь является Онней, под ликом которого скрыт бог Ану, показывает на стремление связать происхождение сыновей богини не с Ассирией, а с Вавилонией. Это могло произойти лишь при первых ахеменидских царях, сохранивших Вавилонское царство как составную часть своей империи и признававших жрецами Вавилона законными царями. Характерны и имена сыновей. Гюпатос `upa'tos – владыка, властелин, высочайший – титулы, напоминающие прозвище персидского царя Кира II – Великий. Гидаспес `udaspes, имя близкое по звучанию греческой форме имени отца Дария – Виштаспа, Гистаспа. Можно предположить, что подобно тому, как египетские жрецы вывели происхождение Дария I от богини Нейт³⁸, в каких-то областях Вавилонии также произошло возведение местной богини в прародительницу ахеменидских царей. Виштасп был приведен в миф, так как он являлся правителем Парфии и Гиркании и совместно с правителем Бактрии, сатрапом Дадаршишем, принял участие в усмирении восстания в Средней Азии. В дальнейшем, исходя из того, что с Семирамидой был связан гидроним Гидасп, а происхождение самого Дария было известно греческим историкам, записавшим легенду, имя Гистасп заменяется Гидаспом.

³⁴ См.: Шилейко В. К. Из поэзии Вавилона // "Восток", 1922, кн. 1, с. 8–9; прим. 1; Дьяконов И. М. Эпос о Гильгамеше. М.-Л., 1962, с. 102.

³⁵ См.: Koldway R. The Excavation at Babylon. London, 1896, p. 129–131.

³⁶ См.: Геродот, I, 184; III, 155.

³⁷ См.: Diodor, II, 5; I-2.

³⁸ См.: Тураев В. А. История Древнего Востока. Т. II. Л., 1935, с. 135.

5. *Смерть Семирамиды*. В пересказе Ктесия наиболее туманна последняя часть – смерть Семирамиды. Можно предположить, что здесь произошло смещение и смешение мифологических представлений. Нин-Ниней выступает в мифологии не только как эпоним ассирийского города Ниневии, но и как основатель Вавилонского царства³⁹. В последнем качестве под именем Ниния он выступает в легенде как противник ассирийского царства и уже не вавилонской, а "ассирийской царицы Семирамиды", что отражало гибель Ассирии под ударами вавилонских войск. Показательны приведенные в рассказе анонимного автора сроки жизни и правления Семирамиды. В нем легендарная Семирамида прожила 62 года, приблизительно столько, сколько правили совокупно цари Вавилона Набопаласар и Навуходаносер II – 64 года, а срок правления Семирамиды, 42 года, равен времени правления Навуходаносера (605–562). Указание в легендах на этническую принадлежность родителей Семирамиды к сирийцам – показатель центра ее культа Сирии, где бытовал древний миф и ее почитали в храмах как богиню еще во II в. н. э., что отражено в сведениях Лукиана⁴⁰. Таким образом, сведения о Семирамиде показывают, что основой легенды являлся древний миф, изменивший радикально свою форму в результате историзации. Теологическое понимание древними исторического развития, когда в их представлении боги не только определяли ход событий, но были прародителями царствующих династий и воспринимались непосредственно действующими лицами истории – явление, получившее широкое отражение в официальных письменных памятниках и способствовавшее созданию народных исторических эпосов, когда многовековый ход событий связывался с одним или группой божеств, в данном случае с богиней плодородия. Реальность превращения вавилонской царевны в ассирийскую царицу Шаммурамат могла способствовать созданию легенд, в которых Шаммурамат наделялась божественной родословной. Представляется также, что имя царицы Шаммурамат имеет теофорный характер. Возможно, что близость формы имени "гипотетической богини" и имени царицы Шаммурамат способствовала их смешению, а в дальнейшем вытеснению в эпосе имени богини именем царицы. Таким образом, за ней окончательно закрепился титул "ассирийская царица". Понимание Ктесием и Мовсесом Хоренаци исторического эпоса как подлинно реальной истории обусловило сжатие хронологии преданий, связанных с Семирамидой-Шамирам, до сроков одной человеческой жизни и способствовало переосмыслению мифологических образов в исторические лица. Мовсес Хоренаци вынужден был, как он сам писал, "чтобы не дать себя на посмеяние многим", в "История Армении" редактировать древние армянские предания в свете сообщений о Семирамиде греческих авторов Кефалиона и других⁴¹. Это привело к тому, что в армянской истории Шамирам названа ассирийской царицей, противостоящей армянскому царю Ара Гехецику. Несомненно, армяне не воспринимали

³⁹ См.: Нин-Нинос // «Мифологический словарь». Л. 1961, с. 158.

⁴⁰ См.: Лукиан. О сирийской богине.

⁴¹ См.: Мовсес Хоренаци, I, 18.

Шамирам как злое начало. Ее имя было распространенным личным именем еще в XV–XVII вв. Особый интерес представляет имя Шамам – Šamat, считавшееся производным от Шамирам. Оно сохранялось у армян до недавнего времени⁴² и имеет, кроме значения имени, и другие смысловые значения, характерные для древних богинь плодородия, например: сосок, грудь женская, грудь животного, самка собаки, волчица, маленькая несъедобная дыня, употребляемая для благоволия в жилищах⁴³. Ныне эти смысловые значения устарели. Можно предположить, что имя Шамам являлось древней формой имени богини, а Шамирам – производным от нее. Показательно, что имя Шамам и производная от него форма Шамамдухт встречаются и поныне, особенно среди мушских и сасунских армян. Показательно также, что в Армении, где этническая преемственность сохранилась с древнейших времен, а хурриты и родственные им этносы – составные пласты армянского народа⁴⁴, предания о Шамирам и топонимы с ее именем сохранились до XX века. Поэтому при рассмотрении сведений о Семирамиде-Шамирам необходимо отделять мифологическую основу от исторических преданий. А. Н. Веселовский отмечал, что "исторический эпос (былина) передает миф в наименее искаженном виде. Она (былина) развивается только формально, раз закрепленное историей ее мифологическое содержание остается то же, приводя в нее только исторические черты и меняются лица, не покидая границ, намеченных первоначальным приурочением"⁴⁵. Мифологическая основа лучше всего сохранилась у Хоренаци. Изучение этих сведений в совокупности со сведениями Ктесия, легенд, связанных с топонимами, и народных преданий Армении показывает, что богиня Шамам-Семирамида-Шамирам являлась божеством плодородия, любви и войны. Ее культ связывался как с горными вершинами, так и с водой, а древним священным ее животным в Армении была самка собаки, волка. По сведениям Хоренаци собаки являлись божествами Шамирам⁴⁶. В Сасуне про женщину, имеющую успех у мужчин, говорили, что у нее ктеис волчицы, а женщины, желающие привлечь мужчину, подвешивали ктеис собаки или волчицы к поясу⁴⁷. Судя по сведениям Лукиана, в Гиерополе Семирамида приносили в жертву голубей. На возможность в древности человеческих жертвоприношений указывает связь святилища Артемиды в Кастобелах с топонимом Семирамиды и наличие здесь предания об Оресте и Артемиде Таврополис⁴⁸. Косвенным подтверждением существования в древности в Армении обряда человеческих жертвоприношений богине служит стих Ювенала, в котором при гадании о любви в качестве жертвоприношений названы: голуби, собаки, а также дети⁴⁹. Храм богини, судя по описанию

⁴² См.: **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. IV, Եր., 1948, էջ 136.

⁴³ См.: там же, с. 138.

⁴⁴ См.: **Ս. Ստրիշայան**, Հայոց լեզվի հոսանքների բառարան, Եր., 1967, էջ 498–586.

⁴⁵ См.: **Дьяконов И. М.** Предыстория армянского народа, с. 230 и далее.

⁴⁶ См.: **Мовсес Хоренаци**. Указ. соч., кн. I, гл. 15.

⁴⁷ **Эмин Н. О.** Очерк религии древних армян. М., 1896, с. 42; **Веселовский А. Н.** Сказание о Викрамадितье // Собрание сочинений. Т. 8. Пг., 1921, с. 54.

⁴⁸ Сведения эти любезно передала мне фольклорист Арусяк Саакян.

⁴⁹ См.: **Strabo**, XII, II, 37.

святилища в Кастабелах, имел форму башни, характерную для хурритских храмов. Здесь же совершали обряд хождения по раскаленным углям⁵⁰. Как упоминалось, богиня наделялась чертами покровительницы не только плодородия, но и любви, плотской страсти. Указанное в пересказе мифа о Шамам-Шамирам ожерелье, которое, будучи брошенным в море, послужило причиной ее смерти⁵¹, имеет аналогии в мифе об уходе Иштар в подземное царство. В воротах царства с Иштар снимают все украшения, являвшиеся регалиями, магически символизировавшие ее божественную власть. Утратив регалии, Иштар превращается из могущественной богини в слабую женщину, которую обрекают на смерть⁵². Две регалии представляют для нас особый интерес: нагрудник "приди, мужчина, приди" и измерительная веревка и линейка из лазурита. Как указано в народных преданиях и сказке "Арегназан", записанной Г. Агаяном в районе озера Ван и воплотившей древние представления о Шамам-Шамирам, именно ожерелье давало ей власть над мужчинами⁵³. Ожерелье Шамам-Шамирам, как и нагрудник Иштар "приди, мужчина, приди", сопоставимы с пояском Афродиты, который делал ее неотразимой в глазах мужчин⁵⁴. Как представляется, "волшебные ожерелья" изображены и на статуях древних богинь, найденных в Армении⁵⁵. Измерительная веревка и линейка из лазурита присущи богине – покровительнице строительства. По-видимому, аналогичные функции приписывались и богине Шамам-Семирамиде, что объясняет указания на постройки Семирамиды и Шамирам. В "Истории Армении" Хоренаци четко указывает, что Шамирам построила город (столицу Урарту-Биайнили), соорудила канал и сады. Г. А. Меликишвили высказал предположение, что в районе озера Ван основным божеством племен являлся бог солнца Шивини. В его супруге Тушпуе он видит женского двойника бога Солнца⁵⁶. Но локализация в районе озера Ван женского божества, связанного с культом плодородия, любви и воды, каким вырисовывается Шамам-Шамирам, с именем которой в народной памяти связан канал, показывает, что культ Тушпуе прикрыл собой более древний культ богини Шамам. По мнению английского исследователя Линча, прохождение канала Шамирам через местность, именуемую у армян Артаמיד, позволяет видеть наличие здесь в древности священной области богини Артемиды-Анаит. О связи территории города Вана (Тушпы) с культом древней Великой богини плодородия свидетельствует и другое сообщение Линча: "Знаменательно, что из пяти церквей Вана: Норашен, Арах, Хопускер, Хайкаван и Якова – все, за исключением последней, посвящены св. Деве Марии. Сюда же относятся две церкви из шести, находящиеся в обнесенном стеной городе. Факт этот как

⁵⁰ См.: Ювенал, Сатира VI, 550 // "Римская сатира". М., 1957, с. 215.

⁵¹ См.: Strabo, XII, II, 37.

⁵² См.: Мовсес Хоренаци Указ. соч., кн. I, гл. 18.

⁵³ См.: Крамер С. Н. История начинается в Шумере. М., 1965, с. 183.

⁵⁴ См.: Ղ. Ալշիշի, Արեգնազանի կամ կախարհական աշխարհ // Երկեր. Եր., 1981.

⁵⁵ См.: Лукриан. Суд Париса.

⁵⁶ См.: Есаян С. А. Скульптура Древней Армении. Ер., 1980, таб. 1,5; 23,1; 26; 45,1; 59, 1-5,7; Аракелян Б. Н. Очерки по истории искусства Древней Армении. Ер., 1976, таб. X, XIII, LIX, LX.

будто указывает на особый культ богоматери⁵⁷. Хорошо известно, что культ христианской богоматери сменил собой культы древних богинь плодородия. Есть все основания предполагать, что в сведениях Хоренаци также шла речь о древней богине Шамам, получившей в результате историзации мифа имя и облик ассирийской царицы. Как указывалось, образ Шавушки иногда выступал в двойной, женской и мужской, ипостаси⁵⁸. Это отражено и в статуэтке, найденной в Ширакаване в погребении XIII в. до н. э., – навершии ритуального жезла из бронзы с двумя вращающимися осями. На одной оси укреплен фигурка льва, на другой – фигурка с подчеркнутыми мужским и женским началами. При публикации статуэтка первоначально была трактована как изображение Мгера и льва⁵⁹. Сочетание на статуэтке четко обозначенных мужских и женских половых признаков позволяет более уверенно трактовать ее как изображение богини Шавушки. О преобладании в статуэтке женского начала свидетельствует верхнее расположение кteisа и опущенный фаллос, в противоположность мужским статуэткам с напряженным фаллосом.

В дошедших до нас мифах богиня Шавушка упоминается без партнера⁶⁰, поэтому возникает вопрос, как и почему имя и культ Шамам-Шамирам связывался с культом Ара Гехецика.

Ара Гехецик (Прекрасный).

Как отмечалось, Мовсес Хоренаци, согласовывая сведения греческих историков и предания Армении, именовал Шамирам ассирийской царицей, но в то же время подчеркивал, что она была полюбившей Ара Гехецика правительницей Армении. Последний в изложении Хоренаци отказал ей в любви, что послужило причиной ее сражения с ним. После гибели Ара она делает правителем Армении своего сторонника, которого также назвала Ара⁶¹. В работе Г. Капанцяна, в которой Ара Гехецик определен «умирающим и воскресающим богом», собран богатый материал о культах плодородия у армян. При неоспоримой его ценности следует отметить, что он не связан напрямую с приведенным выше отрывком из "Истории Армении". Утверждение, что Ара Гехецик – древний бог умирающей и воскресающей природы у армян, основано на упоминании Мовсесом Хоренаци мнимого воскрешения мнимого Ара. Но повествование об Ара Гехецике и Шамирам по жанровому описанию отличается от мифа отсутствием мифологического времени, пространства, метафоричности языка, и, самое главное, в нем нет этнологизации происходящего, то есть объяснения, что из-за смерти Ара

⁵⁷ См.: Меликишвили Г. А. Наири-Урарту. Тб., 1964, с. 373.

⁵⁸ См.: Գ. Ղափանցյան, Արև Գեղեցիկի պաշտամունքը, Եր., 1945, էջ 97; Арутюнян С. Б. Ара Гехецик // «Мифы народов мира». Т. 1, М., 1987, с. 97.

⁵⁹ См.: Хачикян М. Л. Шавушка, с. 636.

⁶⁰ См.: Линч Х. Ф. Б. Армения, т. II. Тифлис, 1910, с. 131.

⁶¹ См.: Օ. Խնկիկյան, Ռ. Թորոսյան, Լ. Ղևորոսյան, Նախնախորհրդան արվեստի եզակի նմուշ // «Մովսեսի արվեստ», 1971, № 1, Торосян Р. М., Хачикян О., Петросян Л. А. Раскопки в Ширакаване // «Археологические открытия в СССР в 1978 году». М., 1979.

наступило природное бедствие с вегетативными процессами, умиранием природы, голодом или другими аналогичными событиями, которые были обязательны в мифе о смерти бога умирающей и воскресающей природы. Как ни странно, исследователи не обращали внимания на то, что в сообщении об Ара и Шамирам у Хоренаци фигурируют три Ара. Первый – сам Ара Гехецик, которого полюбила Шамирам, второй – также любимец Шамирам, получивший после гибели первого его одеяния, должность правителя и имя, и третий – сын Ара Гехецика от его любимой жены Нвард. Последний, достигший двенадцати лет к времени смерти Ара, получил от Шамирам его имя и управление страной, а затем также был убит в войне с Шамирам⁶². В акте воскрешения Ара Гехецика детально описан процесс переноса тела в горницу; затем после разложения труп был выброшен в глубокую яму. Подробно описан обман с выставлением другого любимца Шамирам на место погибшего Ара. Все эти аспекты противоречат характеру мифов, для которых обязательно волшебное воскрешение бога. Показательно, что все трое сначала выступают любимцами Шамирам, а затем гибнут в битве с ней. Точно указана причина гибели первого и третьего Ара в битве с Шамирам. Можно предположить, что аналогичная смерть постигла и второго. Примечательно также, что волнения армянского войска прекращаются сразу после появления через несколько дней "мнимого Ара". Наличие трех персонажей под именем Ара как любимцев и противников Шамирам, идентичность их гибели, детализированный, подчеркнута рационализированный процесс подмены Ара другим, якобы воскресшим указывает на то, что Хоренаци привел не миф о боге умирающей и воскресающей природы, а ритуал смены временных человекобогов. Культ временных человекобогов прослежен во многих регионах мира⁶³. В случае с Ара Гехециком, с одной стороны, выступали человекобоги, временные цари, а с другой – жрицы, олицетворяющие богиню Шамам-Шамирам. Страстная любовь Шамирам – не что иное, как способ испытать потенцию временного царя. Обряд испытания происходил на храмовой территории богини, куда являлся временный царь. В случае его неспособности удовлетворить желания жрицы он имел шанс доказать свои силы в битве, проходившей на культовой территории священного царя. Эта обрядовая часть мифа имеет полную аналогию у Ктесия в его сообщениях о смерти Нина⁶⁴. Д. Олдфазер предположил, что можно объяснить убийство Нина тем, что Семирамида была куртизанкой, связанной с культом временных царей Вавилонии⁶⁵. Ритуал проверки жизненной силы путем испытания половой потенции был характерен для древнего Египта⁶⁶ и имел отголоски в мифологии Угарита⁶⁷. Назначение сына Ара правителем Армении в возрасте

⁶² См.: **Мовсес Хоренаци**. Указ. соч., кн. I, гл. 15.

⁶³ См.: **Мовсес Хоренаци**. Указ. соч., кн. I, гл. 20.

⁶⁴ См.: **Фрезер Д. Д.** Золотая ветвь. М., 1980.

⁶⁵ См.: **Diodor**, II, 20, 4.

⁶⁶ См.: **Иванов В. В.** Происхождение семантического поля славянских слов, обозначающих дар и обмен // «Славянское и балканское востоковедение». М., 1975, с. 57–79; **Арутюнян Ц. Р.** Армяно-греческие лексические изоглоссы // «Очерки по сравнительной лексикологии». Ер., с. 265–266.

⁶⁷ См.: **Матье М. В.** Древнеегипетские мифы. М.–Л., 1956, с. 59

12 лет, вероятно, служит указанием на половую зрелость юношей в древних обществах. В Армении данные элементы ритуала проверки жизненной потенции подчеркнуты именами не только Шамирам, но и ее партнера Ара, которое имеет прямую связь в армянском языке с половой сферой⁶⁸. Имя Арай – *Aray* сопоставимо с армянским *aur* – мужчина, муж, древнеиндийским *aryah* – человек, *aryah* – хороший и хеттским *ara* – друг, добро⁶⁹. В современном армянском языке сохранилось понимание формы "Ара" как человек, друг, особенно при обращении друг к другу молодых людей. В то же время значительный период связи Ара с фаллическим символом придал этому обращению оттенок грубости. Как представляется, упоминание Платоном Армянского Эра⁷⁰ является не только показателем знания мифа об Ара Гехецике, но и отражает древнюю мифологическую и языковую общность с греческим божеством Эросом, который в архаический период воспринимался также как герой. Фиксация имени в предании и, вероятно, ранее в мифе, в форме "Ара" может указывать на время формирования мифа в период военной демократии, когда каждый воин воспринимался как муж, друг. А священный царь – как дающий благо. В то же время указание в "Истории Армении" Мовсеса Хоренаци на возведение в правители сына Ара Гехецика может свидетельствовать о стремлении превратить верховную власть в наследственную. Судя по описанию ритуала, Ара Гехецик был связан не со сферой плодородия, а со сферой социального устройства общества. Несомненно, что первоначально культ временного царя-бога был связан с вегетативными процессами. Но с развитием общества главную роль в нем стали играть вопросы социально-правового характера, что отразилось и на форме культа. Ритуал был призван доказать право временного царя управлять страной. Не случайно по окончании ритуала назначения временного царя совершались жертвоприношения, призванные обеспечить благополучное правление нового царя.

Таким образом, сведения Мовсеса Хоренаци дают редкое полное описание древнего ритуала смены временных царей-богов.

Ключевые слова: *Ара Гехецик, Шамирам, Семирамида, Шавушка-Шамам, армянские предания, цари-боги, Мовсес Хоренаци*

ՖԵԼԻՔՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎ – Շամիրամ և Արա Գեղեցիկ – Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ տեղ գտած Շամիրամի և Արա Գեղեցիկի մասին պատումը ուսումնասիրողները երկար ժամանակ համարում էին Շամիրամ (Մեմիրամիդա) թագուհու և մեռնող ու հարություն առնող Արա աստվածության մասին պատմող առասպելների միախառնում: Սակայն նման ընկալումը հնարավորություն չէր տալիս պատասխանելու Շամիրամի կերպարի հետ առնչվող մի շարք հարցերի: Նրա մասին մեզ հասած տեղեկությունների մանրամասն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Շամիրամի առասպելի հիմ-

⁶⁸ См.: «Diodor of Siculy», with English translation, by G.H.Oldfather, Vol. I, Cambridge, London, 1960, с. 419 (примечание к тексту).

⁶⁹ См.: Платон. Государство, X.

⁷⁰ См.: **Հ. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1971, էջ 294-302.

քում ընկած է խուրրիական պանթեոնի Շավուշկա-Շամամ աստվածուհու կերպարը, իսկ Շամիրամի և Արա Գեղեցիկի հակամարտությունը ներկայացնում է ժամանակավոր թագավոր-աստվածությունների իրար հաջորդման ծիսակարգը: Այսպիսով՝ Խորենացու աշխատությունը եզակի և ամբողջական տեղեկություններ է հաղորդում այդ հնագույն ծիսակարգի մասին:

Բանալի բառեր – *Արա Գեղեցիկ, Շամիրամ, Սեմիրամիդա, Շավուշկա-Շամամ, հայկական առասպելներ, թագավոր-աստվածներ, Մովսես Խորենացի*

FELIX TER-MARTIROSOV – *Shamiram and Ara Geghetsik.* – The story about Shamiram and Ara Geghetsik, which is included in the “History of Armenia” of Movses Khorenatsi, was considered by researchers as an intermixture of narrative legends about Queen Shamiram (Semiramis) and death-rebirth deity Ara for a long time. But such perception didn’t allow to answer numerous questions related to the figure of Shamiram. The detailed study of the information about her, which reached us, showed that on the basis of Shamiram’s legend lies the figure of Goddess Shawushka-Shamam from Hurrian Pantheon, and the conflict between Shamiram and Ara Geghetsik represents the ritual of temporary king-gods following each other. Thus, Khorenatsi’s work gives a unique and complete information about that ancient rite.

Key words: *Ara Geghetsik, Shamiram, Semiramis, Shawushka-Shamam, Armenian legend, king-gods, Movses Khorenatsi*

**ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԸՍՏ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ**

ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայոց պատմության առանցքային խնդիրներից է հայ-վրացական հարաբերությունների հարցը, որն ունի դարերի պատմություն: Ներկա աշխատանքում քննության է առնվում հայ-վրացական հարաբերությունների պատմության հին շրջանը, որի մասին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացին:

Դարերով ապրելով հարևանությամբ՝ հայերն ու վրացիներն ունեցել են սերտ համագործակցություն: Հայ-վրացական հարաբերությունները, ինչպես միշտ, հին շրջանում ևս ընդգրկել են կյանքի այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են ռազմական, քաղաքական, գաղափարախոսական, մշակութային և այլն: Թեև Մովսես Խորենացին 5-րդ դարի պատմիչ է, սակայն նրա տեղեկությունները վերաբերում են նաև շատ ավելի վաղ ժամանակների:

Հայ-վրացական ռազմական հարաբերությունների մասին Մովսես Խորենացու առաջին տեղեկությունը վերաբերում է մ.թ.ա. 1-ին դարին. Հայոց Տիգրան Մեծ թագավորը Մարաց Ածդահակի դեմ կռվում «... ժողով է ... ի սահմանացն Կապադովկացոց, և որչափ ընտիրք Վրաց և Ադուանից, և գամենայն ընտիրս Հայոց Մեծաց և Փոքունց: Եւ խաղայ ամենայն զօրութեամբ իւրով զկողմամբք Մեղացոց»¹: Ըստ այս տեղեկության՝ Տիգրան թագավորը տնօրինել է ինչպես Մեծ ու Փոքր Հայքերի, այնպես էլ Վիրքի և Աղվանքի ռազմական ուժերը, այսինքն՝ դրանց նկատմամբ նա նույն իրավասությունն է ունեցել:

Ռազմական հարաբերությունները շարունակվում են նաև Տիգրան Մեծի որդի Արտավազդի (մ.թ.ա. 55-34) օրոք, որն Անտոնիոսի դեմ մղած պայքարում «...գայրացեալ՝ հրաման տայր զօր յարուցանել զբիրաւորս Ատրպատական նահանգին և զբնակիչս լերինն Կաւկասու հանդերձ Ադուանիւք և Վրօք, խաղայ իջանէ ի Միջագետս, և հալածականս առնէ զգօրս Հռոմայեցոց» (Խոր., Բ-ԻԲ):

Այն փաստը, որ Արտավազդը հռոմեացիների դեմ պայքարելու համար հրամայում է Կովկաս լեռան բնակիչներին, վրացիներին և աղվաններին գորքեր հանել, վկայում է, որ այս երկու ժողովուրդները գտնվել են Մեծ Հայքի գերիշխանության ներքո, որը հիմք է տվել Խո-

¹ Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., 1991, Ա-ԻԹ:

րենացուն գրելու, որ Հայոց արքան «հրամայել է»:

Նույնն է վկայում նաև այն տեղեկությունը, որ Հայոց Երվանդ թագավորը, Արտաշեսի հարձակման լուրն ստանալով, գալիս է իր քաղաքը, որպեսզի իր մոտ հավաքի Հայոց, Վրաց, Կեսարիայի և Միջագետքի զորքերը (տե՛ս Խոր., Բ-ԽԴ): Վրացիները Հայոց Երվանդ թագավորի բանակում Արտաշեսի դեմ կռվում էին իրենց Փարսման թագավորի գլխավորությամբ (տե՛ս Խոր., Բ-ԽԶ):

Ռազմական համագործակցության օրինակների հանդիպում ենք նաև հետագայում: Խորենացին վկայում է, որ Հայոց թագավոր Արշակ Բ-ն (350-368թթ.) Արշակավանը կառուցելուց հետո հանդիպելով Պարսից արքայից արքա Շապուհի (309-379 թթ.) և հայ նախարարների դիմադրությանը, «խոյս ետ ի նոցանէ զկողմամբք Կաւկասու, Վրաց միաբանելով» (Խոր., Գ-ԻԷ), որից հետո «Արշակայ եկեալ վրացի գնդաւ՝ ժողովէ զսակաւս և իւր մտերմաց և տայ պատերազմ ընդ նախարարսն ընդ այնոսիկ, խնդրելով զվրեժ ձեռակերտին իւրոյ Արշակավանու» (Խոր., Գ-ԻԹ):

Վերը բերված տեղեկությունների համաձայն՝ հայ-վրացական ռազմական համագործակցությունը եղել է օրինական իշխանությունների միջև, պետական մակարդակով, որը խոսում է հայ-վրացական քաղաքական համագործակցության մասին: Թեև հայ-վրացական քաղաքական հարաբերությունները բարիդրացիական էին, սակայն եղել են պատմական պահեր, երբ այն խախտվել է: Այսպես. Հայոց Արտաշես թագավորի (մ.թ.ա. 189-160 թթ.) օրոք, երբ «միաբանեալ Ալանք լեռնականօքն ամենայնիւ, յինքեանս արկանելով և զկէս Վրաց աշխարհին՝ մեծաւ ամբոխիւ տարածեալ ընդ աշխարհս մեր» (Խոր., Բ-Ծ), վրացիները հանդես են գալիս հայերին թշնամի ճամբարում: Հայ-վրացական ևս մի ընդհարում էլ է տեղի ունեցել, դարձյալ Արտաշեսի օրոք, երբ «...զվորձ առեալ Քարձամայ ուրումն արքայի Վրաց՝ ապստամբեցուցանէ զերկիրն և կալեալ զԶարեհ, ի բանտի դնէ ի Կաւկաս», սակայն Արտաշեսի որդիներ Արտավազդն ու Տիրանը և Սմբատ Բագրատունին, որոնք Հայոց մյուս երեք կողմերի զորավարներն էին, հաղթում են Քարձամին և ազատում Հայոց հյուսիսային զորքի սպարապետ Զարեհին (տե՛ս Խոր., Բ-ԾԳ):

Այս ժամանակ ևս Վիրքը Մեծ Հայքի ենթակայության ներքո պետք է գտնվեր, այլապես Վրաց թագավոր Քարձամը չէր ապստամբեցնի երկիրը և Հայոց հյուսիսային զորքի սպարապետ Զարեհին չէր բանտարկի Կովկասում: Վիրքի՝ Հայոց իրավասության ներքո գտնվելու մասին է վկայում նաև Հայոց թագավոր Խոսրով Կոտակի (330-338 թթ.) օրոք հյուսիսային զորքի սպարապետ Միհրանի՝ «Վրաց առաջնորդ» կոչվելու փաստը, որը Մովսես Խորենացին հիշատակում է երեք անգամ: Ահա այս Միհրանի օրոք է Հռիփսիմյան կույսերից Նու-

նեն քրիստոնեություն քարոզում Վիրքում: Թվում է, թե Խորենացու հաղորդած այդ սեղմ տեղեկությունը բավարար չէ հեռուն գնացող եզրակացությունն անելու համար, սակայն պատմահոր «Պատմությունն Հայոց» աշխատության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն գրված է հակիրճ, առանց ավելորդաբանությունների: Օրինակ բերենք Մանավազյան, Որդունի և Բզունի նախարարական տոհմերի պատմությունը: Եթե Խորենացու ավագ ժամանակակից, 5-րդ դարի պատմիչ Փավստոս Բուզանդն այդ իրողությանը նվիրում է մի ամբողջ գլուխ², ապա Մովսես Խորենացին բավարարվում է ընդամենը մեկ արտահայտությամբ, որը նույնիսկ ամբողջական նախադասություն չէ (տե՛ս Խոր., Բ-Բ):

Վիրքի՝ Հայոց գերիշխանության ներքո գտնվելու մասին տեղեկացնում է նաև Ագաթանգեղոսը, որը, խոսելով քրիստոնեության տարածման մասին, նշում է, որ այն տարածվեց «ընդ ամենայն երկիրն Հայոց, ի ծագաց մինչև ի ծագս», իսկ այնուհետև հիշատակում՝ «...ի Սատաղացոց քաղաքէն մինչև առ աշխարհաւն Խաղտեաց, մինչև առ Կաղարջօք, մինչ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից, ի Փայտակարան քաղաք արքայությանն Հայոց ...»³, տարածք, որն ընդգրկում է նաև Վիրքը: Այստեղ Ագաթանգեղոսը չի հիշատակում Վիրքը, այլ ասում է՝ «Երկիրն Հայոց ի ծագաց մինչև ի ծագս», որը, ինչ խոսք, ներառում էր նաև Վիրքը, քանզի Խորենացին Նունեի քարոզչությունը նկարագրելուց հետո ասում է, որ նա «առաքելուհի եղեալ քարոզեաց ի Կղարջաց սկսեալ առ դրամբք Ալանաց և Կասբից մինչև ի սահմանս Մասքթաց» (Խոր., Բ-2Ե), և այնուհետև հավելում. «Որպէս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս»: Այստեղից պետք է եզրակացնել, որ ըստ Խորենացու Վիրքը գտնվել է Մեծ Հայքի թագավորության ենթակայության ներքո: Այս վիճակը թերևս պահպանվել է մինչև 387 թ. բաժանումը: Այս միտքը հաստատում է նաև Փավստոս Բուզանդը, ըստ որի՝ Հայոց թագավոր Պապի օրոք (369-375 թթ.) Մուշեղ սպարապետը ճնշում և Մեծ Հայքին է միացնում ապստամբած բոլոր երկրամասերը, որոնց թվում հիշատակում է նաև Վիրքը: Բուզանդը «Վասն Վրաց» կոչվող գլխում նկարագրում է, թե ինչպես Մուշեղը ճնշեց, պատժեց ու հնազանդեցրեց Վիրքը՝ վերականգնելով նախկին սահմանը, որն անցնում էր Կուր գետով (տե՛ս Բուզ., 5-ԺԵ):

Որ Մեծ Հայքի թագավորության սահմանները հասել են մինչև Կասպկոհ և Ճորա պահակ, իսկ դա նշանակում է, որ այդ սահմաններում ընդգրկվել է նաև Վիրքը, հիշատակում է նաև Սեբեոսը, ըստ որի՝ Պարսից արքա Խոսրով Բ-ի դեմ ապստամբած Վահրամը հայերին իր

² Տե՛ս «Փավստոսի Բուզանդացույ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, 3-Դ:

³ «Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց», Եր., 1983, ՃԲ:

կողմը գրավելու համար Մուշեղին գրում է. «...Եւ թողում ձեզ զամենայն երկիրն Հայոց մինչև ցԿապկոհ և ցղուռն Աղուանից, և յԱսորոց կողմանէ՝ զԱրուաստան, զՄրծուին և զՆոր Շիրական մինչև ցսահմանս Տաճկաց, զի առ նախնեաւքն իսկ ձեզ լեալ է. և ընդ արևմուտս մինչև ցԿեսարիա Կապադովկացոց»⁴:

Նախնիների օրոք Հայոց սահմաններն ավելի ընդարձակ էին: Այս մասին վկայում է Մովսես Խորենացու մեկ այլ տեղեկություն. Վաղարշակը, գալով Մեծ Հայք և կարգավորելով երկրի գործերը, Շարայի գավակներից Գուշարին ժառանգություն է տալիս Կանգարքը, Ջավախքի կես մասը, Կողբը, Ծովքը, Ձորը՝ մինչև Հնարակերտ ամրոցը, որոնք Մեծ Հայքի Գուգարք աշխարհի գավառներն էին: Թվում է, թե այստեղ պետք է ավարտվեր Մեծ Հայքի թագավորության հյուսիսային սահմանի կարգավորումը Վաղարշակի կողմից: Սակայն Խորենացին շարունակում է. «Իսկ ընդդէմ լերինն Կալկասայ կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհօր ազգն, և նահապետությանն անուն կարոյ բդեաշխն Գուգարացոց...» (Խոր., Բ-Ը), այսինքն՝ Գուգարաց բդեշխի իրավասության սահմաններն առաջին Արշակունու օրոք տարածվում էին Գուգարքից հյուսիս՝ մինչև Կովկասյան լեռները, իսկ այս տարածքում գտնվում էր նաև Վիրքը:

Հայ-վրացական սերտ կապերի և Հայոց գերիշխանության մասին հիշատակում են նաև վրացական աղբյուրները: Այսպես՝ Լեոնտի Մրովելին վկայում է, որ Ադերկից սկսած՝ Վրաց թագավորները «Հայոց թագավորների հնազանդության ներքո էին, նամանավանդ՝ Արմազեցոց թագավորներն օգնում էին հայերին նրանց բոլոր թշնամիների դեմ»⁵, կամ նշում է, որ Հայոց Արտաշես թագավորի օրոք «Վրաց թագավորները Մցխեթից ուղղվում էին դեպի Հայք (Մոմխեթ) Աշոցքի (Աբոցի) ճանապարհով, և այսպես վրացիք միշտ ստրկության ներքո էին»⁶:

Հայոց Արտաշես թագավորի օրոք հայ-վրացական ռազմաքաղաքական հարաբերությունների վկայությունն է հաշտության պայմանագիրը, ըստ որի՝ հայերի դեմ ապստամբած և պարտված վրացիները պարտավորվում են թշնամու հարձակման դեպքում հանդես գալ հայերի կողքին, Արտաշես թագավորի պատկերով դրամ կտրել, իսկ Հայոց թագավորի պատերազմելու դեպքում՝ տասը հազար սպառազեններով օգնել հայերին⁷:

Հայքից Վիրքի կախվածությունը Լեոնտի Մրովելին փաստում է նաև Հայոց Խոսրով Մեծ (211-259 թթ.) թագավորի կապակցությամբ,

⁴ «Պատմություն Սեբեոսի», Եր., 2005, ԺԱ:

⁵ Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Եր., 2013, էջ 155:

⁶ Նույն տեղում, էջ 158:

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 159-160:

երբ գրում է. «Հայքի (Մոմխիթի) մեծն թագավորը սպանվեց, և Հայքը (Մոմխիթը), որից կախում ուներ մեր թագավորությունը, նվաճած է...»⁸:

Այսպիսով, ըստ վրացական աղբյուրի, բավականին երկար մի ժամանակահատված՝ Երվանդ Դ Վերջինից մինչև Խոսրով Մեծ Արշակունին, Վիրքը գտնվել է Հայոց գերակայության ներքո:

Հայ - վրացական ռազմաքաղաքական հարաբերությունները փոխվում են արդեն 5-րդ դարում: Մա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայաստանը 387 թվականից սկսած այլևս անկախ պետություն չէր և գտնվում էր Հռոմեական կայսրության (հետագայում՝ Բյուզանդիայի) և Պարսից տիրապետության ներքո: Պարսից գերիշխանությանն էր ենթարկվել նաև Վիրքը, և Հայքն ու Վիրքը արդեն համատեղ հանդես են գալիս Պարսից տիրապետության և նրա վարած քաղաքականության դեմ: Թեև 387 թ. Մեծ Հայքի թագավորությունը բաժանվեց երկու մասի, իսկ այնուհետև նրանից շատ տարածքներ անջատվեցին և բռնակցվեցին հարևան երկրամասերին, սակայն Պարսից արքունիքն իր քաղաքականության մեջ առաջնությունը տալիս էր Հայքին՝ գտնելով՝ «Եւ յորժամ Հայք սրտիւ մեր լինին՝ Վիրք և Աղուանք այնուհետև մեր իսկ են»⁹, կամ՝ «Եւ յորժամ դուք իբրև զմեզ ճանաչողք ճշմարիտ մեր օրինացս լինիք՝ Վիրք և Աղուանք ըստ մեր և ձեր կամս չիշխեն ելանել» (Փարպ., ԻԲ):

Հայ-վրացական քաղաքական կապերի մասին հիշատակում է նաև Եղիշեն¹⁰: Ըստ նրա՝ Վարդանանց շարժման ժամանակ հայոց, վրաց և աղվանից նախարարները միաբանվել են պարսից քաղաքականությանը դիմակայելու համար:

Վիրքի՝ Մեծ Հայքի գերիշխանության ներքո գտնվելու մասին վկայում են նաև գաղափարախոսության բնագավառին վերաբերող տեղեկությունները: Մովսես Խորենացին, նկարագրելով Հայոց հեթանոսական պանթեոնի ռազմի աստված Վահագնի առասպելական ծնունդը, գրում է. «Այլ ասեն զսա և աստուածացեալ. և անդրի ի Վրաց աշխարհին զտրա չափ հասակին կանգնեալ՝ պատուէին զոհիք» (Խոր., Ա-ԼԱ): Այստեղից կարելի է ենթադրել, որ Վահագն աստծու պաշտամունքը տարածված է եղել նաև Վիրքում, որտեղ նրան արձան են կանգնեցրել և պատվել զոհաբերություններով: Վիրքում պաշտամունքի է արժանացել նաև Հայոց պանթեոնի Արամազդ աստվածը, որի արձանը Գրիգոր Լուսավորչի խորհրդով տապալվում է Նունեի նախաձեռնությամբ (տե՛ս Խոր., 29): Այստեղից պետք է եզրակացնել, որ հայ-վրացական հոգևոր կապերի արմատները հասել են հեթանո-

⁸ Նույն տեղում, էջ 164:

⁹ «Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրթ առ Վահան Մամիկոնեան», Եր., 1982, ԻԱ:

¹⁰ Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Եր., 1989:

սության շրջան: Նաև սա է պատճառը, որ Մեծ Հայքում քրիստոնեություն ընդունելուց հետո ուշադրությունն ուղղվեց դեպի Վիրք, և ըստ այդմ՝ Հայոց Լուսավորչի տոհմից կաթողիկոս Վրթանեսի որդի Գրիգորիսը համարվում է «...կաթողիկոս ի կողմանս Վրաց և Աղուանից» (Բուգ., 3-Զ):

Հայ-վրացական գաղափարախոսական համագործակցության կարևոր վկայություն է նաև բորբոքիտոնների աղանդի դեմ մղված պայքարը: Ինչպես գիտենք, այն տարածված էր Հայքի բյուզանդական և պարսկական հատվածներում, ինչպես նաև Վիրքում և Աղվանքում: Հայտնի է նաև, որ այդ աղանդի դեմ պայքարի կազմակերպումը Հայոց կաթողիկոս Սահակ Պարթևը հանձնարարել էր հենց Մեսրոպ Մաշտոցին: Ուշագրավ է, որ Մովսես Խորենացու վկայությամբ, Վրաց թագավոր Արձիլի օրոք Մեսրոպը Գուգարաց Աշուշա բղեշխի հրավերով Գարդմանից մեկնում է Գուգարք՝ բորբոքիտոնների դեմ պայքարելու համար (տե՛ս Խոր., Գ-Կ):

Վիրքում աղանդավորների դեմ Մեսրոպ Մաշտոցի մղած պայքարի և քրիստոնեական ոգով նրանց դաստիարակելու մասին վկայում է նաև Կորյունը. «...յամենայն կողմանս Հայոց, Վրաց և Աղուանից գամենայն ժամանակս կենաց իւրոց, զամառն և զձմեռն, զտիւ և զգիշեր՝ անվեհեր և առանց յապաղելոյ իւրով իսկ աւետարանականն ողջապատում գնացիւքն՝ առաջի թագավորաց և իշխանաց և ամենայն հեթանոսաց և անընդդիմակաց ի հակառակորդաց՝ զամենափրկչին Յիսուսի անուն կրեաց յանձին»¹¹: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ այս երեք երկրները գաղափարական առումով (այն է՝ քրիստոնեական) միաբան էին և ղեկավարվում էին Հայոց եկեղեցու կողմից: Այս մասին վկայում է նաև Ղազար Փարպեցին, ըստ որի՝ Վահան Մամիկոնյանի դաստիարակ Աղան Արծրունու հիշատակը նշվել է «...յամենայն եկեղեցիս Հայաստանեայց աշխարհիս, Վրաց և Աղուանից» (Փարպ., Դ): Հետևաբար, հոգևոր հարաբերությունների մասին տեղեկությունները ևս վկայում են Վիրքի նկատմամբ Հայքի գերակայության մասին:

Հայ-վրացական հարաբերություններում իր ուրույն դերն ուներ մշակութային ոլորտը: Այս մասին Մովսես Խորենացին (տե՛ս Խոր., Գ-ԾԴ) վկայում է Մեսրոպ Մաշտոցի կողմից վրաց այբուբենի նշանագրերը ստեղծելու փաստով: Սա տեղի է ունենում Վրաց Բակուր թագավորի և Մովսես եպիսկոպոսի օրոք, որոնք օժանդակել են Մեսրոպին այդ հարցում, ինչպես նաև աշակերտներին կրթելու, այսինքն՝ դպրոց բացելու գործում, քանի որ աշակերտներին ուսուցանելու համար Մեսրոպը Վիրքում է թողնում իր երկու աշակերտներին՝ Տեր

¹¹ Կորյուն, Վարք Մաշտոցի, Եր., 1941, ԻԱ:

Խորձենացուն և Մուշե Տարոնացուն, որոնք պետք է որ ծանոթ լինեին վրաց լեզվին ու նշանագրերին և գուցե նաև վրացի երեխաներին սովորեցնեին հայերեն (տե՛ս Խոր., Գ-ԾԴ):

Վիրքում Մեսրոպի կողմից վրաց նշանագրերի ստեղծման մասին Մովսես Խորենացու վկայությունները հիմնավորվում են Կորյունի տեղեկություններով, համաձայն որոնց՝ Մեսրոպը «...առնոյր կարգեալ նշանագիրս վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյն նմա ի Տեառնէ: Գրէր, կարգէր և օրինօք յարդարէր. և առնոյր ընդ իւր զոմանս լաւագոյնս յաշակերտաց իւրոց, յարուցեալ գնայր իջանել ի կողմանս Վրաց: Եւ երթեալ յանդիման լինէր թագավորին, որում անուն էր Բակուր, և եպիսկոպոսի աշխարհին՝ Մովսէս: Եւ առաւելագոյն հնազանդեալ նմա ըստ օրինացն Աստուծոյ՝ թագաւորին և զօրացն, հանդերձ ամենայն գաւառօքն» (Կոր., ԺԵ):

Այն հանգամանքը, որ Հայոց եկեղեցին շահագրգռված էր գիր ստեղծել և դպրոցներ բացել ոչ միայն Հայքում, այլև Վիրքում, խոսում է այս ժողովուրդների միջև նաև մշակութային սերտ համագործակցության մասին, որն այդ ժամանակ նպատակ էր հետապնդում դիմակայելու Պարսից գերիշխանությանը:

Հայ-վրացական սերտ հարաբերությունների վկայություն են նաև իշխող վերնախավում առկա միջամուսնական երկկողմ կապերը: Խորենացին գրում է, որ Հայոց թագավոր Արշակ Ա-ի որդի Արտաշէան «...զդուստր իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ումեմն Վրաց բդեշխի մեծի, որ էր ի գաւակէ Միհրդատայ, Դարեհի նախարարի, զոր կացուցեալ էր Ալեքսանդրի ի վերայ գերութեանն Վերիացոց աշխարհին... և հաւատայ նմա զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն և Պոնտոս ծովու» (Խոր., Բ-ԺԱ):

Հայ-վրացական միջամուսնական կապերի մասին վկայում է նաև Ղազար Փարպեցին, արդեն որպէս 5-րդ դարի իրողություն: Ըստ նրա՝ Հմայակ Մամիկոնյանի կնոջ քույրն ամուսնացած էր Վրաց Աշուշա բդեշխի հետ և իր այրիացած քրոջն ու նրա երեխաներին պահում և խնամում էր Աշուշայի տանը՝ Վիրքում (տե՛ս Փարպ., ԿԳ):

Միջամուսնական կապերի մասին տեղեկություններ են պահպանվել նաև վրացական աղբյուրներում: Լեոնտի Սրովելին հիշատակում է, որ Փարսման թագավորի սպանությունից հետո Փառնավազ սպարապետը «տարավ քաջն Փարսմանի կնոջն ու որդուն, և թափառեց, ապա գնաց Հայք (Մոմխիթ), քանի որ Փարսմանի կինը հայոց (սոմեխների) թագավորի դուստրն էր»¹²:

Այսպիսով՝ հայ-վրացական կապերն ունեցել են կայուն, տևական ու շարունակական բնույթ, ընդգրկել են ռազմաքաղաքական, գաղա-

¹² Լ. Մելիքսեթ-Բեկ, Վրաց աղբյուրները..., էջ 160:

փարախոսության ու մշակույթի ոլորտները և դարերի ընթացքում խորանալով՝ հասել մեր օրերը՝ որպես երկու հարևան ժողովուրդների միջև հարաբերության դրական օրինակ:

Բանալի բառեր – *Հայաստան, Վրաստան, Մովսես Խորենացի, հարաբերություններ, քաղաքականություն, գաղափարախոսություն, մշակույթ, տիրապետություն, թագավոր, եկեղեցի*

РУЗАННА АРУТЮНЯН – Армяно-грузинские отношения по Мовсеса Хоренаци. – Мовсес Хоренаци – историк V века, но его сведения относятся к давним временам. Согласно «Истории Армении» между армянами и грузинами существовали как военно-политические, так и культурные связи. Военно-политические отношения между двумя народами имелись ещё в эпоху армянских царей Ерванда, Артасеса, Тиграна, Артавазда.

Как пишет Мовсес, Грузия находилась под властью армян до 387 г., когда Армении разделили между собой Римская империя и Персия. Армянский приоритет объяснялся, в частности, религиозными соображениями: по версии Хоренаци в Грузии почитали армянских языческих богов Арамазда и Ваагна, а после установления христианства сын армянского католикоса являлся католикосом Грузии и Албании. С сектами Армянская церковь боролась не только на родине, но и в Грузии. Что касается культурных связей, о них свидетельствует хотя бы деятельность Месропа Маштоца, создавшего для грузин алфавит и открывшего детские школы; в этом ему всячески содействовал грузинский царь.

Ключевые слова: *Армения, Грузия, Мовсес Хоренаци, связи, религия, идеология, культура, церковь*

RUZANNA HARUTYUNYAN – Armenian-Georgian Relations According to Movses Khorenatsi. – According to Khorenatsi, Armenian-Georgian relations included the the military, political, ideological and cultural areas. There were military and political relations during the reign of Armenian kings Yervand, Artashes, Tigran, Artavazd who lived B.C. According to Khorenatsi, in that time Georgia was under the Armenian hegemony and it continued until 387 A.D., when Armenia was disparted between Persia and Roman Empire. The Armenian hegemony is observed in the ideology because Armenian pagan gods Aramazd and Vahagn were adored in Georgia, too. When Christianity entered in Armenia as a state religion, the son of Armenian catholicos became the yepiskopos of Georgia. The Armenian Church controlled the fight against sectarians in Armenia and in Georgia. There were close relations in the culture, too. According to Khorenatsi, Mesrop Mashtots created Armenian and Georgian alphabets and Georgian king helped Mesrop in Georgia. So Armenian-Georgian relations begin from the early times and continue till today.

Key Words: *Armenia, Georgia, Movses Khorenatsi, relations, military, policy, ideology, culture, hegemony, king, church*

IX ԴԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ ՆԵՐՄՈՒԾՎԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ

ՓԱՐԻՍԱ ՓՈՐՄՈՀԱՄՍԱԴԻ

IX դարի 30-ական թվականներին գերագույն իշխանության համար բախումների և ծայր առած ներքին երկպառակությունների՝ Զինջինների ապստամբության պատճառով սկսվեց Արաբական խալիֆայության կազմալուծումը¹: Քաղաքական իրավիճակը նպաստեց, որ խալիֆայությունից ձևական կախման կարգավիճակով ամիրայություններ ստեղծվեն Հայաստանում: Խալիֆայության նախկին վարչատարածքային սահմանները էական փոփոխությունների ենթարկվեցին:

Թուլացած խալիֆայությունը Հայաստանում անկախության ձեռքբերմանը արձագանքեց Բագրատունիներին ճանաչելով որպես «իշխանաց իշխան» և արքայական նվերներ պարգևելով²: Աշոտ Բագրատունին (862-890) սկզբում մայրաքաղաք հռչակեց Երազգավորսը, ապա՝ Բագարանը, ի վերջո՝ Անին:

Սակայն Սյունիքի Օրբեյանների, Լոռու Կյուրիկյանների և Վասպուրականի Արծրունիների կենտրոնախույս գործունեության հետևանքով չհաջողվեց երկրում ստեղծել կենտրոնամետ պետություն³:

Ամիրայություններ ձևավորեցին նաև իրանական դինաստիաներ Բուվեհյանները, Թահիրիդները և Սամանյանները: Առաջիններն իրենց հսկողության տակ վերցրին Պարսից ծոցից Ֆարսի, Խուժաստանի միջով դեպի արաբական երկրներ տանող քարավանային ճանապարհներն ու հարակից տարածքները, իսկ Սամանյանները, տեղավորվելով Սիրդարյայի և Ամուդարյայի շուրջ ընկած տարածքում, դարձան Խորասանի տիրակալները:

IX դարի կեսերին ձևավորված քաղաքական այս տարաբնույթ միավորումները, որոնք կառավարվում էին իրենց օրենքներով և կարգ ու կանոնով, չխոչընդոտեցին ավատատիրական նոր հարաբերությունների զարգացումը: Նախկին քաղաքները վերածվեցին արհեստավորական և վաճառաշահ կենտրոնների, իսկ գյուղ-քաղաք վերջնական անջատումով ձևավորվեցին նորերը, ուր արհեստների նոր ծավալումների ու նեղ մասնագիտացումների շնորհիվ խթանվեց ու բարգավաճեց առևտուրը: Քաղաքական ու տնտեսական կյանքի արմատա-

¹ Տե՛ս Արաբские завоевания и Арабский халифат (VII-X вв.), Всеобщая история. М., 1957, т. III, գլուխ VII, էջ 120:

² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. III, Եր., 1976, էջ 23:

³ Տե՛ս «Ստեփաննոս Տարսնեցոյ Ասողկան, Պատմութիւն տիեզերական», Ս. Պետերբուրգ, 1885, էջ 109:

կան տեղաշարժերին հետևեց քաղաքներում սոցիալապես ունևոր խավի ի հայտ գալը, որը բարձր ապրելակերպով թելադրում էր շուկայի պահանջարկը:

Դվինի, մասամբ Անիի պեղումներից հայտնաբերված խեցեղենի և ապակեղենի քննությամբ կարելի է դատել միջազգային նոր ձևավորված ճանապարհների հիմնական ուղղությունների մասին, վերլուծել երկիր ներկրված ապրանքի տեսականին ու ծավալները և բացատրել դրանց առնչվող զանազան երևույթներ:

Դրամագետ Խ. Մուշեղյանը հիշատակված նյութերի հետ հայտնաբերված դրամները իրավացիորեն գնահատել է իբրև դրամաշրջանառության, քաղաքական պատմության և միջազգային խնդիրները համակողմանիորեն ուսումնասիրելու կարևոր աղբյուր⁴:

Սույն հաղորդման նպատակն է համակարգված ներկայացնել IX դ. Հայաստան ներմուծված խեցեղենը՝ հնարավորինս բացահայտելով, թե մերձավորարևելյան որ երկրների աշխատանոցներից են դրանք հայտնվել հայոց քաղաքներում:

Ուսումնասիրվող նյութը Դվին քաղաքի բազմամյա պեղումներից ձեռք բերված գտածոներն են: Անիից սակավաթիվ նմուշները ամփոփված են տեսակների ընդհանուր նկարագրության մեջ:

IX դարի կեսերից սկսած և X դարում Դվինի քաղաքական պատմությունը համարվում է Բագրատունիների, Ատրպատականի ամիրաների և մասամբ Բյուզանդիայի միջև սուր բախումներով լի խառնաշփոթ մի ժամանակաշրջան:

Մինչև 894 թվականի երկրաշարժը և դրանից հետո որոշ ժամանակ Դվինը Ատրպատականի Սաջյան ամիրաների ձեռքին էր. X դարում այն անցավ Սալարյաններին:

Չնայած փոփոխական լուրջ անցուդարձին՝ քաղաքի սոցիալ-տնտեսական, առևտրական ու մշակութային կյանքի զարգացումները նպաստավոր էին: Իրողությունը վավերացնում են պեղումների շնորհիվ Դվինի Կենտրոնական թաղամասում⁵ հայտնաբերված բարձրորակ խեցեղենն ու ապակին, ինչպես նաև Աբբասյան դրամները, որոնք հնագիտական ընդհանուր հավաքածուում զգալի են:

Նպատակահարմար ենք գտել ուսումնասիրվող նյութը շարադրել հետևյալ խմբավորումով՝ ա) հասարակ խեցեղեն, բ) ջնարակած խեցեղեն, գ) հախճապակի, դ) չինական սելադոն:

Հասարակ խեցեղեն: Դվինում հայտնաբերված այս խեցեղենի կադապարանախշ և փորագիր տեսակները սակավաթիվ են:

⁴ Տե՛ս Խ. Մուշեղյան, Դրամական շրջանառությունը Հայաստանում մ.թ.ա., V, մ. թ. XIV դդ., Եր., 1983, էջ 204:

⁵ Տե՛ս Ա. Քալանթարյան, Կենտրոնական թաղամասի պեղումները 1964-70 թթ., Դվին I «Հնագիտական պեղումները Հայաստանում», № 13, Եր., 1976, էջ 82-88:

Դվինի Կենտրոնական թաղամասի X դարի շինությունների ավերակներից հայտնաբերված կաղապարանախշ անոթների բեկորներն աչքի են ընկնում արտաքին հորինվածքի բծախնդիր կերտվածքով ու գեղարվեստական մանրակրկիտ մշակմամբ:

Թասի և սափորիկի երկու բեկորների հարդարանքը բուսական է: Իրանի հարթ մակերեսին կրկնվող ռիթմով հորինված իրարահաջորդ հորիզոնական գոտիները լցված են ուռուցիկ կոկոններից ու տերևներից բաղկացած շարունակական շղթաների շարանով (աղ. 1, նկ. 2, 6)⁶: Կաղապարանախշ թասի մի բեկորի արտաքին հարդարանքում հատվածների բաժանված մակերեսը լցված է երկրաչափական վանդակներով ու բջջային զարդերով (աղ. 2, նկ. 5): Այս որակի խեցեղենի գուգահեռները հայտնի են խալիֆայության ժամանակավոր մայրաքաղաք Սամարայից⁷ (քաղաքը հիմնադրվել է 836 թ., կործանվել՝ 883 թ.), Քուֆի, Բասրա, Վասիտ, Սիրիայի ալ-Մինա, Իրանի Նիշապուր և Աֆղանստանի Լաշքարի բազարից⁸:

Որոշ մասնագետներ այն վերագրում են Իրանին՝ ընդգծելով Շոշ կենտրոնը (աղ. 1, նկ. 3)⁹:

Վերջին տարիներին կաղապարանախշ խեցեղենի բեկորներ ի հայտ են եկել Դվինի Կենտրոնական թաղամասի VIII-IX դդ. շերտերից: Ներքուստ կարմրադարչնագույն աստառով, արտաքուստ կանաչավուն մակերեսով այս բեկորների թեմատիկան ներկայացնում է նշաձև տերևների, աստղերի և թեփուկավոր ձկների մոտիվային համակցված մի կոմպոզիցիա: Պեղող հնագետ Ն. Հակոբյանը այդ բեկորների միջինասիական գուգահեռներով ենթադրում է հենց այդ տարածաշրջանից դրանց Հայաստան ներթափանցումը¹⁰:

IX-X դարերում Մերձավոր Արևելքի խեցեգործական կենտրոններում հայտնվեց հասարակ խեցեղենը փորագիր զարդերով մշակելու տեխնիկան: Առարկայի իրանի հորիզոնական գոտիների վրա փորագրվում էին եռանկյուններ, բազմանկյուններ, ուղիղ և շեղ գծեր: Փայտի փորագրության արվեստից փոխանցված զարդարման այս եղանակը խեցեղենի վրա ձեռք բերեց նոր ոճ ու բովանդակություն: Տիպորինակները հայտնաբերված են Կենտրոնական թաղամասից (աղ. 3, նկ.

⁶ Տե՛ս **Կ. Ղաֆադարյան, Ա. Քալանթարյան**, Դվին II, Դվին քաղաքը և նրա պեղումները, 1973-80 թթ., «Հնագիտական պեղումները Հայաստանում», № 20, էջ 82-83, նկ. 20:

⁷ Տե՛ս **F. Sarre**, Die keramik von samarra, Berlin, 1925, էջ 8-15:

⁸ Տե՛ս "Institute Française d'Archéologie du Proche orient", Beyrou, Damas, Amman, Bibliothèque archeologique et historique, t. CXX, Paris, 1977 և Cahiers de la delegation archéologique française en Iran, 7, Paris, 1977:

⁹ Տե՛ս **A. Pope**, Survey of Persian Art, (SPA , vol II, էջ 1471-1472, vol V, նկ. 567), **A. Lane**, Early Islamic pottery, London, 1947, նկ. 4C:

¹⁰ Տե՛ս **Н. Акопян**, Раскопки Центрального квартала Двина, Двин IV (Город Двин и его раскопки 1981-1985, Ер., 2008, նկ. 34 (աղ. XIX (5), **Грицина А.** Материалы Караханидского времени с города Шаштепе в Ташкенте, («История материальной культуры Узбекистана», вып. 22, Ташкент, 1988, էջ 134-135, նկ. 3, 12):

7): Այս որակի խեցեղենի գուգահեռները հայտնի են Սամարայից և Օրան-Կալայից¹¹:

Այս տեխնիկան փոխանցվեց նաև ջնարակած խեցեղենի բնագավառ: Այդ առումով հետաքրքիր է 1948 թվականին Դվինից հայտնաբերված գլանաձև անոթը, որի իրանի վրա հորիզոնական իրարահաջորդ երկու գոտիները բաղկացած են եռանկյունաձև փորվածքների շարանով: Հաստակն օղակաձև է, իսկ իրանի աջ կողմում օղակներից բաղկացած կանթն ավարտվում է ցցուն թմբիկով (աղ. 3, նկ. 5): Անոթի գուգահեռը հանդիպում է Սամարայում և Օրան-Կալայում¹²:

Հասարակ խեցեղենի հարդարանքում առարկայի տարածական հնարավորություններով պայմանավորված՝ կանոնիկ չափաբաժնի բեկյալ գծերի կոկիկ հորինվածքով լուծված պատկերը հաճախ ամփոփվում էր անոթի ողջ մակերեսին: Այդպիսի հարդարանքով առանձնանում են Դվինի նույն թաղամասից հայտնաբերված թանաքամանները: Չորս ոտքերի վրա հենված քառակուսի առարկաների թե՛ վերնամասի մակերեսը, թե՛ հենակներն ունեն այդպիսի զարդամոտիվներ, առնչվելով ոչ միայն փայտի փորագրությանը, այլև ճարտարապետությանն ու քանդակագործությանը յուրահատուկ զարդամոտիվներին (աղ. 3, նկ. 6, 8)¹³:

Ջնարակած խեցեղեն: Խեցեգործության մեջ անոթները միագույն ջնարակապատելու տեխնիկան հայտնի էր վաղնջական ժամանակներից: Սակայն IX դարում տեխնոլոգիական նոր միջոցներով, գունային երանգների ու զարդամոտիվների ճոխ լուծումներով առարկաները կիրառական նպատակից գատ ձեռք էին բերում նաև գեղագիտական արժեք:

Դվինում հայտնաբերված IX-X դարերի օտարամուտ ջնարակված խեցեղենը հայտնի է երկու տեսականիով՝ ա) միագույն և բ) բազմագույն:

Միագույն ջնարակապատ խեցեղենի օրինակ է հնավայրից գտնված միակ տափաշիշը, որն ունի կլոր, քիչ ուռուցիկ իրան, երկու կողմերում՝ ուսերին՝ փոքր օղակով թանձր կանթեր: Երկար պարանոցը շուրջբոլորում է ուռուցիկ գոտին, իսկ քիչ դուրս ծավլած շուրթն ու ամբողջությամբ միագույն կանաչ ջնարակով պատած մակերեսն ամբողջացնում է անոթի արտաքին հորինվածքն ու հարդարանքը (աղ. 3, նկ. 4):

Այս անոթի գուգահեռը հայտնի է Թուրքմենստանից ու գտնվել է

¹¹ Տե՛ս F. Sarre, նշվ. աշխ., աղ. V, Якобсон А. Художественная керамика Байлакана, МИА, № 67 (материалы и исследования по археологии), աղ. XXXVI, նկ. 2, 2a, 4, աղ. XXXVII, նկ. 2, 3, 4:

¹² Տե՛ս F. Sarre, նշվ. աշխ., աղ. V, Якобсон А., նշվ. աշխ., աղ. XXXVII, XXXVIII:

¹³ Տե՛ս А. Kalantarian, Dvin Histoire et Archéologie de la ville medievale, Paris, 1996, աղ. 78, նկ. 3:

խոտանված սնդկամանների համալիրում: Մասնագետների կողմից այն թվագրվում է IX դարով¹⁴:

Գլանաձև իրանով, միագլիժ ակոսով, ցածր նստուկով գավաթը նույնպես կանաչ ջնարակով է պատած և կառուցվածքով նման է վերը ներկայացված անոթին: Այս տիպի անոթի զուգահեռները բնորոշ են Սամարայի խեցեգործությանը, և բնականաբար թվագրվում են IX դարով (աղ. 3, նկ. 2)¹⁵:

Բազմագույն ջնարակած խեցեղեն: Ներմուծված խեցեղենի այս տիպը երկու տարբերակով է հայտնի: Առաջին տեսականուն բնորոշ է թասի տեսքը, որի օղակաձև հատակի վրա հենված լայն իրանն ավարտվում է դուրս ծավված շուրթով: 1947 թվականին այդպիսի մի ամբողջական թաս հայտնաբերվել է Կենտրոնական թաղամասի պեղումներից:

Անոթի ներքին դաշտը հարդարող ճառագայթները ձևավորված են գծիկների ներդաշնակ փնջերով, որոնք կենտրոնից շարեշար ձգվելով ավարտվում են դուրս լայնացող պսակի եզրին (աղ. 4, նկ. 8): Ջնարակի գուներանգներում գերակշռող են կապույտը, մուգ դարչնագույնը, կանաչը: Ջնարակած այս տիպի խեցեղենի զուգահեռները հայտնի են Միջագետքի¹⁶, Օրան-Կալայի¹⁷, Միջին Ասիայի և Սամարայի¹⁸ հուշարձաններից¹⁹:

Ներմուծված ջնարակապատ խեցեղենի երկրորդ տիպը միջին չափերի բարակապատ թասերն են, որոնց օղակաձև հատակից թեթև կորությամբ լայնացող իրանն ավարտվում է կտրած շուրթով: Ներկայանալով դարչնագույնի և նարնջագույնի խաղով հարստացված երկրաչափական տարբեր պատկերների խճանկարը վկայում է այլ աշխատանոցների հետ Հայաստանի քաղաքների ունեցած կապերի մասին: Դրանք Սամանյանների տիրապետությանը ենթակա Աֆրասիաբ և Սոգդ քաղաքներում գործող խեցեգործական կենտրոններն էին²⁰:

Այս տիպի մեկական օրինակ հայտնաբերվել է Դվինից, Անիից և Զվարթնոցից (աղ. 1, նկ. 4, 7, 8):

Հախճապակի: Դվինում հայտնաբերվել է կոբալտի և պղնձօքսիդի լուծույթներով նկարազարդված IX-X դարերի հախճապակի: Այս որակի հախճապակին սպիտակ ֆոնի վրա կոբալտի կամ պղնձօքսիդի լուծույթ-

¹⁴ Տե՛ս **Лыкошин Н.** Очерки археологического изыскания в Туркестанском крае до учреждения Туркестанского кружка любителей археологии. ПТКЛИА, (Протоколы и сообщения Туркестанского любителей археологии), 1, I, Ташкент, 1896, էջ 15:

¹⁵ Տե՛ս **F. Sarre**, նշվ. աշխ., էջ 21:

¹⁶ Տե՛ս **A. Lane**, նշվ. աշխ., նկ. 7B:

¹⁷ Տե՛ս **Якобсон А.**, նշվ. աշխ., աղ. XV, նկ. 5, 6:

¹⁸ Տե՛ս **F. Sarre**, նշվ. աշխ., նկ. 8/7, **R. Ayalon**, La potterie Islamique, Paris, 1974:

¹⁹ Տե՛ս **Брусенко Л.** Глазурованная керамика Чача IX- XII вв., Ташкент, 1986, աղ. XXVIII, նկ. 5, աղ. VIII, նկ. 5:

²⁰ Տե՛ս **Вяткин В.** Афрасиаб городище былого Самарканда, Ташкент, 1927, **Шишкина Г.** Глазурованная керамика Согда, Ташкент 1970, էջ 42, **Распопова В.** Гончарные изделия Согдийцев Чуйской долины (Труды Киргизской археологической и этнографической экспедиции), т. IV, М., 1960, նկ. 2, 10:

ների խառնուրդով նկարագարովում էր ծաղիկներով, կետերով, տերևներով, ծառերով և քուֆի արաբերեն տառերի առանձնահատուկ ոճով: Այս խմբի անոթներին արտաքուստ բնորոշ են օղակաձև հատակից դեպի լայն իրանը ձգվող պատեր, որոնք ավարտվում են դուրս ծավալած շուրթով (աղ. 1, նկ. 1): Թաց վիճակում կոբալտի կամ պղնձօքսիդի նկարագարումները անոթը հարդարում է վերոհիշյալ դեկորատիվ ինքնատիպ պատկերներով (աղ. 4, նկ. 5): Անոթներից մեկի ներքին դաշտի վրա կոբալտով հարդարված երեք սաղարթախիտ ծառերի կենտրոնում, ընդգծված է դրանց հասուն պտուղը (աղ. 2, նկ. 4):

Կոբալտով հարդարված մեկ այլ թերի թասի կենտրոնում հինգթերթանի վարդակը աշխուժանում է շուրթի եզրով մեկ ցրված կիսաշրջանների շնորհիվ (աղ. 2, նկ. 6): Վերջին տարիներին Կենտրոնական թաղամասից հայտնաբերված թասի կեսի կենտրոնում կլոր թերթերից բաղկացած ծաղիկը և շուրթը տեղ-տեղ գոտկող ֆեստոնները այս խմբի անոթների հարդարանքի մեկ այլ տարբերակն են (աղ. 2, նկ. 7):

Պղնձի օքսիդով (կանաչ երանգ) նկարագարված երկու թասերի կառուցվածքը նույնական է, տարբերությունը սուկ հարդարանքի բովանդակությունն է: Առաջին՝ սպիտակ ֆոնի վրա կանաչ երանգով պատկերված նռան բարձր ծառի հիմքը կազմող արմատներից դեպի վեր սլացող բնի վրա տերևներով հարուստ ճյուղերից կախված են հասուն պտուղները (աղ. 4, նկ. 6): Անոթի գուգահեռը հայտնի է Լուվրի թանգարանից, և մասնագետները վերագրում են Միջագետքին (աղ. 2, նկ. 2)²¹:

Նույն տիպի մեկ այլ անոթի կենտրոնում վարպետը, շեղվելով բուսական դեկորատիվ տիպօրինակներից, հարդարման միջոց է ընտրել արաբերեն քուֆի տառերը, որոնք վերծանվում են «իմ Աստված» بَرُّع (աղ. 4, նկ. 7): Այս որակի հախճապակու վերաբերյալ մասնագետները տարակարծիք են. ոմանք նախապատվությունը տալիս են Մամարային²², իսկ ուրիշները՝ Իրանին²³, անգամ՝ Իրաքի Բասրա և Քուֆի քաղաքներին²⁴:

Շողյուն հախճապակի: IX-X դարերում Մերձավոր Արևելքի խեցեգործության մեջ շողյուն ներկանյութի կիրառությունը մեծագույն հեղաշրջում էր: Այն վերջնարակային եղանակով անոթները հարդարելու տեխնոլոգիական նոր սկզբունք էր, որի շնորհիվ հորինվածքը ներկայանում էր գունային ողջ հարստությամբ և գեղագիտական առանձնահատկությամբ: Այս որակի հախճապակու կարևոր առանձնահատկությունը նկարչական կատարելությունն էր, նաև՝ հորինվածքի ճոխությունը և գունազարդման յուրահատուկ տեխնիկան, որի շնորհիվ այն դառնում էր պալատական և քաղաքային բարձր առևտրականների

²¹ St' u R. Koechlin, A propos de la céramique de Samarra, "Syria", 1926, vol. 7, fasc 3, pl. XLI, 2:

²² St' u F. Sarre, նշվ. աշխ., էջ 44:

²³ St' u A. Pope, SPA, vol. II, էջ 1485:

²⁴ St' u G. Wiet, Deux pièces de céramique égyptienne, "Ars Islamica", III, 1936, էջ 171-172:

ու իշխանավորների համար նախատեսված սպասք:

Այդ տեսակետից միանգամայն ընդունելի է Ա. Յակոբսոնի այն հարցադրումը, թե այդ տիպի խեցեղենը եկավ փոխարինելու արծաթի ճգնաժամի պատճառով արտադրությունից դուրս եկած սասանյան արծաթե սպասքին²⁵:

IX դարում շողյուն խեցեղենի գաղտնիքին տեղյակ էին սակավաթիվ երկրներում, բայց արտադրանքից օգտվում էին հսկայական տարածքներում: Միջնադարյան խեցեղենի մասնագետներից ոմանք այդ տիպի խեցեղենի հայրենիք են համարում Եգիպտոսը²⁶, իսկ ուրիշները Իրաքը կամ Իրանը²⁷:

IX-X դարերի շողյուն խեցեղեն Դվինում հայտնաբերվել է թե՛ բեկորներով, թե՛ ամբողջական նմուշներով, որոնք կազմում են մի փոքրիկ հավաքածու: Արտաքին կառուցվածքով դրանք նման են կոբալտով նկարագարոված հախճապակուն: Անոթների սպիտակ մակերեսը հարդարում են շողյունով արված սլաքները, իսկ հետնախորքին նկարագարդումները ներկայացնում են կենդանական կամ մարդկային պատկերներ: Դվինից հայտնի ամբողջական թասերից մեկի մակերեսին բաց ոսկեդարչնագույն շողյունով վերարտադրված է ծառի ճյուղին թառած, ճոխ պոչով մի թագակիր թռչուն, որի կտուցից կախված է ոստ՝ դալար շիվերով և տերևներով (աղ. 4, նկ. 4): Արտաքուստ սպիտակ ներկով պատած ֆոնի վրա դարչնագույն շողյունով արված են ձվաձև չորս շրջանակներ, որոնց միջև ընկած տարածությունը լի է թեք գծերով և խայտերով (աղ. 2, նկ. 3): Հատակին արձանագրված է հետևյալ արաբերեն քուֆի տառատեսակով հիշատակագրություն՝ «Աստված, պատրաստել է Թահան» ط م ل م الله (աղ. 2, նկ. 3): Վերջին տարիներին Կենտրոնական թաղամասից հայտնաբերվել է շողյուն թասի կեսը, որը նախորդից տարբերվում է հարդարանքը շառավղաձև ներկայացնելու նոր լուծումով:

Մեդալիոնների մեջ ստատիկ վիճակում արու և էգ քարայծերը պատկերված են մեկընդմեջ, եղննաձև մոտիվով ծածկված դաշտի սահմաններում (աղ. 1, նկ. 5): Շուրթն այստեղ շուրջբոլորում է ոչ թե կիսաշրջանների, այլ թանձր շողյունով ուղղաձիգ գոտին: Արտաքուստ նույն ձվաձև շրջանները թեք, ալիքաձև գծերի և եղննաձև համակցված զարդերով են պատված (աղ. 2, նկ. 1): Հատակին արձանագրված հիշատակագրությունն ընթեռնելի չէ ամբողջական չլինելու պատճառով:

Աշխարհի տարբեր թանգարաններում պահվող այս տիպի հախ-

²⁵ Տե՛ս **А. Якобсон**, Средневековая керамика как историческое явление, “Византийский временник”, Том. 39, М., 1978, էջ 150:

²⁶ Տե՛ս **I. Butler**, Egypt and ceramic art in the Near East, “Burlington magazine”, 1907, vol. XI, էջ 221:

²⁷ Տե՛ս **H. Saladin**, La mosquée de Sidi Ogba a Kairouan, Gaston Migeon, Manuel d’Art musulman, vol. II, Paris, 1907, էջ 11:

ճապակե թասերը նույնացվում են Սամարայում հայտնաբերված օրինակների հետ և թվագրվում են IX դարով²⁸:

Ներկայումս այս մոտեցումը վերանայման կարիք ունի, որովհետև IX-X դարերում Նիշապուրը ևս եղել է շողուն խեցեղեն արտադրող հզոր կենտրոն: Դվինում հայտնաբերված թռչունով անոթի զուգահեռը 1936 թվականին ամերիկյան արշավախումբը հայտնաբերեց Նիշապուրում²⁹:

Այսպիսով, թանկարժեք խեցեղեն սպասքը կենդանիների և մարդկանց պատկերներով հարդարելու միտումը հատուկ էր որոշ խեցեգործական կենտրոնների և պայմանավորված էր իսլամի գաղափարախոսության որոշակի սկզբունքների մերժումով: IX դարում իսլամն արդեն թափանցել էր Արաբական խալիֆայության տարածքում ապրող ժողովուրդների առօրյա կյանքի բոլոր ոլորտները, և դոգմաներից մեկով արգելվում էր կիրառական ու դեկորատիվ արվեստի առարկաների վրա կենդանի էակներ պատկերել (կենդանիներ և մարդկանց): Այդ հողի վրա իսլամի ուղղափառ գաղափարախոսության հետևորդների և ազատախոհների միջև ծավալվել էր սուր պայքար: Ամենայն հավանականությամբ, Իրաքի և Նիշապուրի որոշ արհեստանոցներ շրջանցում էին այդ սկզբունքը, ուստի անոթները հարդարելով նշված ոճով, ըստ էության, ճոխացնում էին շուկայական արտադրանքը, նպաստում նրա պահանջարկի մեծացմանը (աղ. 4, նկ. 2): Հակառակ այս հոսանքին՝ Խորասանի Աֆրասիաբ (ներկայումս՝ Սամարղանդ) խեցեգործական աշխատանոցները խստիվ հետևել են իսլամի օրենքներին և համաժամանակյա արտադրանքում խեցեղենը հարդարել սուկ երկրաչափական, բուսական և էպիգրաֆիկ մոտիվներով:

Բազմագույն շողուն հախճապակին հայտնի է երկու տեսակով: Առաջինին բնորոշ են ձիթապտղի, կանաչի, դարչնագույնի, մասամբ դեղինի խառնուրդի գուներանգներով սլաքների, օղակների, գծերի, շրջանների և ծաղիկների տարբեր համադրություններով լուծված հորինվածքներ: Դվինում ամբողջական վիճակում պահպանված բազմագույն թասի նկարագարդման ոճն ու գունային համադրությունը հորինվածքային մի գեղեցիկ ներդաշնակություն են կազմում: Թասի շուրթը երիզում են դարչնագույն շողունով արված լայն եզրագծերով սլաքները, իսկ բուն դաշտի սահմաններում ոսկեդեղնավուն երկարաբլթակ տերևների ցանցի հետնախորքում վերարտադրված է բարձրաբուն մի արմավենի՝ ներքև ճկվող 14 ճյուղերով, որոնցից երկուսի վրա ոճավորված տերևազարդի տեսքով գծագրված են արմավենու խրճերը (աղ.

²⁸ Տե՛ս **F. Ettinghausen**, Notes on the lustreware of Spain, “Ars Orientalis”, 1954, vol. I, էջ 133-156, նկ. 1, 5E; **E. Kühnel**, Islamische Kleinkunst, Berlin, 1925, էջ 216, **A. Lane**, նշվ. աշխ., նկ. 12, **Aly Bey Bahgat et F. Massoul**, La céramique musulmane, d’Égypte. Le Caire, 1930, աղ. E, նկ. 36 և 40a:

²⁹ Տե՛ս **Крачковская В.** Арабское письмо на памятниках Средней Азии и Закавказья IX-XI вв., шп. V, նկ. B, “Эпиграфика Востока”, X, М.-Л., 1955:

4, նկ. 3): Անոթի զուգահեռները հայտնի են Սամարայից, Միրիայի ալ--Մինա հնավայրից, Թունիսի և Իսպանիայի քաղաքներից (աղ. 4, նկ. 1)³⁰: Եռագույն շողյուն ջնարակով այս տեսակի խեցեղենը հայտնաբերվել է նաև միջինասիական հուշարձաններից, և մասնագետներն այն համարում են Սամարայից բերված նմուշներ ու վերագրում այդ քաղաքի արտադրանքին³¹:

Բազմագույն խեցեղենի մյուս տեսակը հայտնի է ալ կարմիր ֆոնի վրա ոսկեգույնի երկրաչափական հորինվածքների տարատեսակ պատկերներով:

Դվինում այս տեսակի խեցեղենի միայն բեկորներ են գտնվել, ուստի հնարավոր չէ ներկայացնել անոթի արտաքին կառուցվածքը: Նմանատիպ խեցեղենի զուգահեռը հայտնի է Եգիպտոսի Ֆուստատ քաղաքից, և Շնայդերը այն համարում է եգիպտական, թեև որոշ բեկորներ հայտնաբերվել են նաև Սամարայում³²:

Չինական սելադոններ: Հախճապակու բարձրորակ այս տեսականին արտադրվել է Չինաստանի Տան (618-907), Սուն (960-1280) և Մին (1662-1722) դինաստիաների տիրապետության ժամանակ՝ յուրաքանչյուր պատմափուլին բնորոշ տեխնոլոգիական մշակումներով, ինչպես նաև արտաքին ձևերի ու հորինվածքների տարբերությամբ: IX-X դարերի վաղ սելադոնները հայտնաբերվել են Անիում, իսկ Դվինում մինչև օրս այդ որակի խեցեղենի ոչ մի բեկոր չի գտնվել: Արշավախմբի բազմամյա ղեկավար, պրոֆ. Կ. Ղաֆադարյանը իրողությունը բացատրում է տեղում կիսաթափանցիկ, ծակոտկեն նուրբ թասերի զանգվածային արտադրությամբ, որն իր որակական բարձր հատկանիշներով չէր զիջում սելադոնին³³:

Սելադոնի բեկորներից առաջինը ծաղկեպսակի տեսքով մի անոթ է (աղ. 3, նկ. 1), որի զուգահեռը հայտնի է Սամարայից: Չինական խեցեղենի գիտակ Հոբսոնը այն համարում է IX դարում Յուեջժոու արհեստանոցի արտադրանք³⁴: Պահպանված մյուս բեկորները թե՛ արտաքին ձևի, թե՛ հարդարանքի առանձնահատկություններով տարբերվում են առաջինից: Ըստ երևույթին, նախքան ջնարակապատումը փորագիր և ճնշման եղանակով անոթը ծածկվել է ծաղկեզարդերով, ապա ներկվել սելադոնների բնորոշ բաց կանաչավուն երանգով (աղ. 3, նկ. 3): Դրանք ծանծաղ մի անոթի մասեր են կազմում:

³⁰ Տե՛ս **F. Sarre**, նշվ. աշխ., աղ. XIII, **A. Lane**, Medieval finds at Al-Mina in North Syria, "Archaeologia", LXXXVIII, T, Vorderstrasse, **Al-Mina**, A port of Antioch from Late antiquity to the end of the Ottomans, Neder lands, 2005, էջ 92-93, **H. Saladin**, La mosquée de Sidi Ogba a Kairouan, Paris, 1899, **O. Marçais**, Faiènces a rélflets métalliques de Kairouan, Paris, 1929:

³¹ Տե՛ս **Г. Шишкина**, Глазуванная керамика Согда, Ташкент, 1979, էջ 40, աղ. XLIII, նկ. 3, 4, աղ. XLIV, նկ. 1:

³² Տե՛ս **R. Schnyder**, Tulunidische Lüsterfayencen, "Ars Orientalis", vol. V, 1963, աղ. IV:

³³ Տե՛ս **Կ. Ղաֆադարյան**, Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Եր., 1952, էջ 229:

³⁴ Տե՛ս **R. Hobson**, A handbook of pottery and porcelain of the Far East, London, 1937, էջ 18:

Այսպիսով, IX-X դարերում Հայաստան ներմուծված խեցեղենի քննությունից պարզվում է հետևյալը.

ա) Արաբական խալիֆայության կազմալուծմամբ IX դարի I կեսից Հայաստանում, Իրանում, Խորասանում (Միջին Ասիա) առաջացան կիսանկախ ամիրություններ, որոնք փոխեցին տարածաշրջանի աշխարհաքաղաքական քարտեզն ու միջազգային հարաբերությունների բնույթը:

բ) Արտադրողական ուժերի արդյունավետ զարգացմամբ արտադրական և ավատատիրական հարաբերություններում նոր որակ արձանագրվեց: Վերակառուցվեցին հին քաղաքները, գյուղ-քաղաք տարանջատումով առաջացան նորերը, ուր արհեստների ծավալումով ու խիստ մասնագիտացմամբ խթանվեց ու բարգավաճեց առևտուրը:

գ) Չնայած քաղաքական բարդ իրավիճակին՝ Դվինը, որ խալիֆայության արևելյան տարածաշրջանի ուստիկանության կենտրոնն էր, մինչև IX դարի կեսերը, ապա X դարում շարունակեց ապրել տնտեսական ու առևտրական բարգավաճ կյանքով:

դ) Ներմուծած խեցեղենի մասնագիտական քննությամբ արդեն հայտնի են այն կենտրոնները, որոնց աշխատանոցներից ձեռք բերված արտադրանքը հայկական շուկայում զբաղեցնում էր որոշակի տեղ: Այդ կենտրոններն էին Իրաքի Սամարան, Քուֆին, Բասրան ու Վասիտը, Իրանում՝ Շոշն ու Նիշապուրը, Խորասանում՝ Աֆրասիաբը, Սոգդը և այլն:


ե) Հայկական աղբյուրագիտական տվյալներով՝ Հայաստանը, ի մասնավորի Դվինը, առևտրական կապեր է ունեցել՝ 1. միջինասիական երկրների հետ՝ Կասպից ծովի վրայով, 2. Բյուզանդիայի հետ՝ փոքրասիական ցամաքային ճանապարհով, 3. Հարավային Եվրոպայի և Աֆրիկայի հետ՝ Երուսաղեմի վրայով, 4. Գանձակով՝ Իրանի և Հարավային Ասիայի հետ³⁵: Կային և այլ ճանապարհներ, որոնց չենք անդրադառնում մեր ուսումնասիրած նյութին առնչություն չունենալու պատճառով:

IX դարում Հայաստանի առևտրական գործունեությանը նպաստ բերեց 893 թվականի հայ-բյուզանդական պայմանագրի կնքումը, որով վերացան արաբական տիրապետության սահմանային ամրությունները (Բկլյամ ալ Սուղուրը), որոնք շղթայաձև սկսվում էին Միջերկրական ծովի Կիլիկյան ափերից ու ձգվում մինչև Կամախ: Դրանք արաբական տիրապետության ժամանակ մեծապես խոչընդոտում էին Արևելքի հետ Արևմուտքի առևտրական հարաբերությունների զարգացումը³⁶:

Բանալի բառեր – *առևտուր, ներմուծում, խեցեղեն, ջնարակած խեցեղեն, շոդյուն հախճապակի, չինական սելադոններ, Հայաստան, Դվին, Սամարա, Քուֆի, Բասրա, Վասիտ, Սիրիա, Եգիպտոս*

³⁵ «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց որ է Աղուեսագիրք»: Յամսթելոտամամ, ի թուղյ Փրկչին, 1668, էջ 65-69:

³⁶ Տե՛ս **Ա. Տեր-Ղևոնդյան**, Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր), «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 2, էջ 134-149:



1



2



3



4



5



6



7



8



1



2



3




4



5




6




7






1



4



2



3



5



6



7



8





1



2



3



4



5



6



7



8



ПАРИСА ПОРМОХАММАДИ – Привозная керамика Армении в IX в. – После падения Арабского халифата на его территории возникли арабские феодальные образования – эмираты, которым принадлежали ключевые города и торговые дороги региона. Один из таких эмиратов представлял собой город Двин, тесно связанный торговлей и культурой с соседними регионами. При раскопках, начатых в 1937 г. и продолжающихся донныне, было обнаружено большое количество привозной керамики, относящейся к IX–X вв.; этот материал обследован, систематизирован и датирован по различным артефактам. Изучение керамики показало, что из центров этого ремесла в Иране, Ираке, Сирии, Египте и Центральной Азии в Двин привозили как простые, так и глазурированные керамические, а также фаянсовые изделия. Торговые пути, по которым их привозили, не раз упоминаются в армянских письменных источниках.

Ключевые слова: *торговля, импорт, поливная керамика, люстровый фаянс, китайский селадон, Куфи, Басра, Сирия, Египет*

PARISA POORMOHAMMADI – The Pottery Imported to Armenia in IX Century. – The fall of the Caliphate in the middle of the IX century changed the geopolitical policy of the region.

In the district, new states called emirates were established. Dvin was one of the emirates and played an active role in the regional affairs and international markets. The excavations carried out in the city since 1937 until nowadays have revealed a great amount of imported ceramics (in common, glazed and faience varieties), which serve as a source to elucidate the trade relations between Armenia and the neighboring countries. The investigation and detailed analysis of the subject brought the author to the following conclusions. Armenia had trade relations and imported pottery from Iran, Iraq, Syria, Egypt, Central Asia and China. It was noticed, that the imported pottery from the workshops of Samara (Iraq), Nishapour (Iran), Al-Mina (Syria) and Fustat (Egypt) arrived. Ceramics was brought to Dvin by trade routes mentioned above. Besides, these trade routes are mentioned in the Armenian written sources.

Key words: *trade, import, ceramics, glazed pottery, lustre faience, Chinese celadon, Armenia, Dvin, Samarra, Kufi, Basra, Wasit, Syria, Egypt*

ՏԱԹԵՎԻ ԴՊՐՈՑԻ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

ՄԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Տաթևի դպրոցի փիլիսոփայությունը միջնադարյան հայ իմաստասիրության գագաթնակետն է, հետևաբար այդ դպրոցի բնույթի ու եղանակի, հայոց հոգևոր մշակությունում դրա տեղի ու դերի հարցերի պարզաբանումը կարևոր է՝ ավելի հստակ պատկերացում կազմելու այդ դպրոցի, դրա ներկայացուցիչների տեսական-փիլիսոփայական հայացքների մասին:

Խորհրդային շրջանում Տաթևի դպրոցի առանձին ներկայացուցիչների փիլիսոփայությանը հանգամանորեն անդրադարձել են հայ փիլիսոփայական մտքի նշանավոր հետազոտողներ Հ. Գաբրիելյանը¹, Վ. Չալոյանը², Ս. Արևշատյանը³, Գ. Գրիգորյանը⁴ և ուրիշներ: Հենվելով նրանց հետազոտությունների վրա՝ Տաթևի դպրոցի փիլիսոփայությունը գնահատելու համար կարող ենք ձևակերպել հետևյալ հարցադրումները. ա) ի՞նչ է նշանակում «Տաթևի փիլիսոփայական դպրոց» արտահայտությունը, ովքե՞ր էին դրա ներկայացուցիչները, բ) ո՞ր փիլիսոփայական ուղղության կամ ո՞ր «կուսակցության» էին նրանք պատկանում. իդեալիստներ՞ էին, թե՞ մատերիալիստներ, ռեալիստներ՞ էին, թե՞ նումինալիստներ, «շահագործո՞ղ, թե՞ շահագործվող» դասակարգի գաղափարակիրներ էին և այլն, գ) այդ դպրոցը գործել է Հայաստանի և հայոց մշակույթի ծաղկման, թե՞ անկման շրջանում. եթե ծաղկման, ապա դա Միջնադարի՞, թե՞ Վերածննդի դարաշրջանի փիլիսոփայություն էր, դ) եթե Միջնադարի փիլիսոփայություն էր, ապա դա սխոլաստիկական փիլիսոփայություն էր, թե՞ ոչ, այդ դպրոցում փիլիսոփայությունը ծառայեցվո՞ւմ էր աստվածաբանությանը, թե՞ դրա ներկայացուցիչները փորձում էին փիլիսոփայությունը ազատել աստվածաբանության կապանքներից կամ փիլիսոփայության միջոցով խարխլել եկեղեցու գաղափարախոսության հիմքերը: Փորձեմ պատասխանել այս հարցադրումներին՝ առաջնորդվելով քննարկվող նյութի տրամաբանությամբ և ոչ թե հերթականությամբ:

¹ Տե՛ս Հ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, Եր., 1958, **նույնի**՝ Հայ փիլիսոփայության պատմություն, Եր., 1976:

² Տե՛ս Վ. Կ. Չալոյան, Հայոց փիլիսոփայության պատմություն, Եր., 1975:

³ Տե՛ս **Аревшатын С. С.** Философские взгляды Григора Татеваци, Եր., 1957, **նույնի**՝ К истории философских школ средневековой Армении (14 в.). Եր., 1980:

⁴ Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, Եր., 1980:

Հայ փիլիսոփայության պատմությունը՝ որպես հայագիտական առանձին գիտակարգ, ձևավորվեց 20-րդ դարի 40-50-ական, այնուհետև ծաղկում ապրեց 60-80-ական թվականներին Խորհրդային Հայաստանում, որտեղ գոյություն ունեւորվեցին ինչ բացատրող մեկ «գիտական» փիլիսոփայական ուղղություն՝ խորհրդային մարքսիզմ-լենինիզմը՝ փիլիսոփայության պատմության ուսումնասիրության իր անփոփոխ սկզբունքներով ու կադապարներով, իր անառարկելի ու «անխոցելի» մեթոդաբանական հարացույցով⁵: Այդ սկզբունքներից գլխավորն այն էր, որ փիլիսոփայության պատմությունը ներկայացվում էր որպես երկու կուսակցությունների՝ մատերիալիզմի և իդեալիզմի, դիալեկտիկայի ու մետաֆիզիկայի պայքար, իսկ այդ կուսակցություններն իրենց հերթին արտահայտում էին տարբեր դասակարգերի, սոցիալական խմբերի շահերն ու գաղափարախոսությունները. մատերիալիզմը, որպես կանոն, առաջադիմական, իսկ իդեալիզմը՝ հետադիմական դասակարգերի փիլիսոփայությունը: Այս մեթոդաբանական սկզբունքի լույսի ներքո է նաև հիմնականում վերլուծվել ու գնահատվել միջնադարյան հայ, ի մասնավորի Տաթևի դպրոցի փիլիսոփայությունը: Այսինքն՝ հայ փիլիսոփա-պատմաբանները «մութ դարերի», սխոլաստիկական, «տերտերական», կրոնական «մեռած» գաղափարներով ներծծված միջնադարի փիլիսոփայական-աստվածաբանական ուսմունքների ուսումնասիրությունն արդարացնելու (չմոռանանք, որ դա խորհրդային տարիներին կարող էր նաև դիտվել որպես ազգայնականության դրսևորում) համար ստիպված էին փնտրել ու գտնել մատերիալիզմի և իդեալիզմի, դիալեկտիկայի ու մետաֆիզիկայի, առաջադիմական ու հետադիմական սոցիալական խմբերի պայքարի հետքեր: Իհարկե, հնարավոր էին չնչին, ոչ էական շեղումներ գլխավոր մեթոդաբանական սկզբունքից: Օրինակ, ի տարբերություն «ուղղափառ» մարքսիստ Հ. Գաբրիելյանի, որը փիլիսոփայության պատմության մեջ երկու կուսակցությունների պայքար ասելով հասկանում էր միայն մատերիալիզմի ու իդեալիզմի, առաջադեմ ու հետադեմ խավերի պայքարի պատմություն, Վ. Չալոյանը ևս գործածում է կուսակցականության երկանդամության սկզբունքը, սակայն շեղվելով «ուղղափառ» գծից, նա հայ փիլիսոփայության մեջ առանձնացնում է երկու ուղղություն՝ հայկական քրիստոնեական և հայկական հելլենիստական, այնուհետև՝ «աշխատավոր ժողովրդի» և «շահագործող դասակարգերի» փիլիսոփայություն: Վ. Չալոյանը Տաթևի դպրոցի փիլիսոփայությունը համա-

⁵ Միջնադարի, ի մասնավորի հայ փիլիսոփայությունը մարքսիստական մեթոդաբանությամբ լուսաբանելու թերությունների, դրանց հաղթահարման ու նոր մոտեցումների կիրառման անհրաժեշտության մասին տե՛ս Ս. Ս. Արևշատյանի, Հ. Ա. Գևորգյանի, Հ. Ղ. Միրզոյանի և Կ. Ա. Միրումյանի հոդվածները «Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում. Հայ փիլիսոփայության պատմության մեթոդաբանական հարցեր» ժողովածուում, Եր., 1992:

րում է «շահագործող դասակարգերի առաջադեմ խավերի» փիլիսոփայություն (ուշագրավն այն է, որ հակառակ մարքսիզմի մեթոդաբանական սկզբունքի՝ Վ. Չալոյանը միջնադարյան հայ իրականության մեջ չի գտնում հակամարտող մյուս կողմի՝ «շահագործող դասակարգերի հետադեմ խավերի» ներկայացուցիչներ, թեև պնդում է դրանց միջև պայքարի գոյության մասին):

Բնականաբար, փիլիսոփայության պատմության կուսակցականության սկզբունքը ոչ միայն հանգեցնում էր փիլիսոփայապատմական նյութի խեղաթյուրված, աղճատված վերակազմությանը, «միջնադարյան մտածողներին արհեստականորեն իրար հակադրելու, երբեմն էլ գոյություն չունեցող ուղղությունների ստեղծման համար»⁶, այլև հակասության մեջ էր մտնում մարքսիստական մեթոդաբանության մյուս սկզբունքի՝ պատմականության հետ, որը պահանջում է անցյալի մտածողների հայացքները գնահատելիս հաշվի առնել պատմամշակութային համատեքստը, դարաշրջանի հոգևոր հարացույցը, փիլիսոփայության կապը դարաշրջանի նյութական ու հոգևոր այլ իրողությունների հետ, այլ ոչ թե մտածողներին գնահատել ըստ այն բանի, թե որքանով են նրանց հայացքները համապատասխանում կամ չհամապատասխանում մարքսիստական (դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի) փիլիսոփայությանը: Այլ խոսքով, հետազոտողները միջնադարյան աստվածաբան մտածողների ուսմունքներում փնտրում էին մատերիալիզմի դրսևորումներ, միտումներ, տարրեր, դիրքորոշումներ, եկեղեցու գաղափարախոսությանն ու աստվածաբանությանը հակասող գաղափարներ և այլն, ինչը, ի դեպ, հնարավոր է գտնել, եթե միտումնավոր անտեսենք մշակութային համատեքստը, միջնադարյան մտածողության յուրահատկությունները, եթե լուսավորական կամ ժամանակակից մտածողության չափանիշներով գնահատենք միջնադարյան մտածողների հայացքները, կամայականորեն ու խիստ սուբյեկտիվորեն մեկնաբանենք միջնադարյան տեքստերի բովանդակությունը: Օրինակ՝ ունիվերսալիաների (ընդհանրականների) հիմնահարցի մեկնաբանության և գնահատության ժամանակ հայ փիլիսոփա-պատմաբանները ելնում էին ոչ միայն փիլիսոփայության պատմության ուսումնասիրության մարքսիստական այն սկզբունքից, որ փիլիսոփայության պատմությունը երկու հիմնական ուղղությունների՝ մատերիալիզմի և իդեալիզմի պատմություն է, այլև Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի այն դրույթից, որ նոմինալիզմն ընդհանրապես մատերիալիզմի առաջին արտահայտությունն էր: «Նոմինալիստների և ռեալիստների հարցադրման մեջ, - գրում է Գ. Գրիգորյանը, - յուրովի արտացոլվել է փիլիսոփայության երկու ուղղությունների՝ մատերիալիզմի և իդեալիզմի պայքարը:

⁶ Ս. Ս. Արևշատյան, Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում, «Հայ իմաստասիրությունը հոգևոր մշակույթի համակարգում...» նշված ժողովածուն, էջ 5:

Ընդունելով ընդհանուրի առաջնությունն ու առանձինի նկատմամբ անկախ գոյությունը, ռեալիստները դրանով իսկ ընդհանուրը ճանաչում էին որպես նախասկիզբ և փիլիսոփայության հիմնական հարցը լուծում էին իդեալիստորեն, մինչդեռ նոմինալիստները, առանձինը ընդունելով որպես հիմք ընդհանուրի համար, դրսևորում էին հիմնական հարցը մատերիալիստորեն մեկնաբանելու միտում, տենդենց: Սակայն, նոմինալիզմն ու ռեալիզմը, իհարկե, չեն նույնանում մատերիալիզմի և իդեալիզմի հետ»⁷: Այլ խոսքով, մարքսիզմի տեսանկյունից նոմինալիզմը համարվում էր մատերիալիստական միտումներ պարունակող, հետևաբար՝ առաջադիմական, իսկ ռեալիզմը՝ հետադիմական ուղղություն: Ըստ այդմ՝ գայթակղություն կար նշանավոր մտածողներին այս կամ այն չափով համարելու նոմինալիստ կամ դասելու նոմինալիստների (հատկապես նրանց, ովքեր տարբեր պատճառներով տարածայնություններ ունեին եկեղեցու հետ) շարքին: Հավանաբար, էլնելով մեթոդաբանական այս դիրքորոշումից (ինչպես նաև յուրովի մեկնաբանելով ունիվերսալիաների հիմնահարցը), հայ փիլիսոփա-պատմաբանները միջնադարյան հայ փիլիսոփայության մեջ առանձնացրել են նոմինալիստական ուղղությունը (ըստ որի՝ սկզբնավորողը եղել է Վահրամ Բաբունին, իսկ շարունակողներն ու զարգացնողները՝ Հովհան Ռրոտնեցին և Գրիգոր Տաթևացին), ինչը, ակնհայտորեն, փիլիսոփայապատմական նյութը «մատերիալիստորեն» ընթերցելու վկայություն է:

Մատերիալիստական միտումներ հատկապես դյուրին էր գտնել տաթևցիների՝ ընդհանուր առմամբ օբյեկտիվ իդեալիստական ուսմունքներում, եթե անտեսենք դրանց փիլիսոփայման, գոյաբանական և իմացաբանական հարցերի լուծման յուրահատկությունները, եթե միջնադար ներխուժենք մարքսիզմի կտրոդ-հանող, պատժող-դատապարտող գործիքակազմով, կռահող-չհասկացող դրոշմակնիքով, միայն մարքսիզմին հետաքրքրող, հատկապես «փիլիսոփայության հիմնական հարցին» առնչվող հարցապնդումներով: Օրինակ, այն հարցին, թե որն է որին հաջորդում՝ նյութը զգայությանը, թե զգայությունը նյութին, Հովհան Ռրոտնեցին, ըստ Վ. Չալոյանի, «տալիս է ուղղակի և աներկմիտ պատասխան, որտեղ մեծագույն պարզությամբ ընդգծված է մատերիալիստական աշխարհայացքի կարևորագույն դրույթը: Նախ՝ բնության, զգայական իրերի առաջնայնության և զգայությունը կրողի երկրորդայնության հաստատումը...», երկրորդ՝ «զգայությունը դիտվում է իբրև մարմնի ատրիբուտ. այստեղ գոյություն ունի հենց այնպիսի հարաբերակցություն, ինչպես առաջին դեպքում, այն է. առաջինը (մարմինը) պայմանավորում է երկրորդը (զգայությունը)...»⁸: Շարունա-

⁷ Գ. Հ. Գրիգորյան, Միջնադարյան հայ փիլիսոփայության հանգուցային հարցերի շուրջ, Եր., 1987, էջ 55:

⁸ Վ. Կ. Չալոյան, նշվ. աշխ., էջ 400:

կելով այս ոգով՝ Վ. Չալոյանը կարծում է, որ աշխարհի, մարդուն շրջապատող ռեալ իրերի ու երևույթների իմացության հնարավորության հարցը Որոտնեցին դարձյալ լուծում է մատերիալիստորեն: Ահավասիկ, այս ճանապարհով օբյեկտիվ իդեալիստական, աստվածապաշտական (թեիստական) ու արարչապաշտական (կրեացիոնիստական) ուսմունքը հնարավոր է դառնում ընթերցել ու մեկնաբանել մատերիալիստորեն, ինչը, բնականաբար, հանգեցնում է փիլիսոփայապատմական նյութի խեղաթյուրված վերակազմությանը, միջնադարյան մտքի յուրահատկությունների գանգառմանը, հետևաբար նաև՝ միջնադարյան մտածողների հայացքների սխալ գնահատմանը:

Փիլիսոփայության կուսակցականության սկզբունքը, ինչպես նաև հասարակական-տնտեսական ֆորմացիաների կամ մշակութային դարաշրջանների արժեքային գնահատությունը, հասարակական կյանքում «երկաթե օրինաչափությամբ» գործող «օրենքների» ընդունումը և այլն Վ. Չալոյանին հիմք տվեցին պնդելու, թե 10-14-րդ դարերում Հայաստանի մշակույթում տեղի է ունեցել եվրոպականին հանգույն Վերածնունդ, այդ թվում՝ փիլիսոփայության ոլորտում, որի ներկայացուցիչներից էին նաև Տաթևի դպրոցի ուսուցչապետեր Հովհան Որոտնեցին և Գրիգոր Տաթևացին: Այսինքն՝ վերջիններս ոչ թե Միջնադարի, այլ Վերածննդի դարաշրջանի փիլիսոփայության ներկայացուցիչներից են: Իսկ Միջնադարի և Վերածննդի փիլիսոփայությունները, ընդհանրություններով հանդերձ, տիպաբանորեն իրարից տարբերվում են: «Վերածնության փիլիսոփայությունն սկսվեց այն դրությունից, - գրում է Վ. Չալոյանը, - որ հակառակ տիրապետող մտածողության հանդես եկան առանձին, ինքնուրույն, եկեղեցու ուսմունքից ու դոգմաններից անկախ, հաճախ հակասական և կրոնին հակադիր գաղափարներ ու մտքեր, երբեմն նույնիսկ հայացքների ամբողջ սիստեմներ: Դա փիլիսոփայության պայքարն էր եկեղեցու դեմ, հանուն ինքնուրույն, աստվածաբանությունից անկախ, գոյության: Եվ փիլիսոփայությունը որքան ավելի էր կարողանում ազատվել թեոլոգիայի կապանքներից, այնքան ավելի շատ էր ձեռք բերում մտածողության ինքնուրույնություն, նպատակ ունենալով բնական ու հասարակական երևույթները ընկալել այնպես, ինչպես նրանք գոյություն ունեն: Ահա թե ինչու փիլիսոփայությունը գնալով ավելի ու ավելի էր հակվում դեպի պանթեիզմն ու մատերիալիզմը»⁹:

Ընդհանուր առմամբ Վ. Չալոյանը ճիշտ է բնութագրում փիլիսոփայության վիճակը եվրոպական Վերածննդի դարաշրջանում, սակայն դրանից հետո դեռ մնում է հիմնավորել, թե եղել է արդյոք նման «անցումային» իրավիճակ Հայաստանում, 10-14-րդ դդ. հայոց մշակույթում:

⁹ Վ. Կ. Չալոյան, Հայկական Ռենեսանս, Եր., 1964, էջ 120:

Եթե մեզանում, համենայն դեպս փիլիսոփայության մեջ, նույնպես եղել է Վերածնունդ, ապա պետք է արձանագրենք ու ցուցադրենք այդ «վերածննդական» բնույթի երևույթները, պետք է գտնենք այնպիսի նոր տիպի մտածողներ, ովքեր «հակառակ տիրապետող մտածողության հանդես եկան առանձին, ինքնուրույն, եկեղեցու ուսմունքից ու դոգմաներից անկախ, հաճախ հակասական և կրոնին հակադիր» գաղափարներն երով ու մտքերով: Վ. Չալոյանի կարծիքով, մեզանում հայկական Վերածնության փիլիսոփայության ամենանշանավոր ներկայացուցիչներից էին Հովհան Ռոտունեցին և Գրիգոր Տաթևացին, ովքեր, սակայն, ոչ միայն աստվածաբան-փիլիսոփաներ էին, այլև հայոց եկեղեցու վարդապետներ, առաքելական եկեղեցու դավանաբանության նվիրյալ պաշտպաններ, հակամիարարական շարժման առաջնորդներ: Այսինքն՝ մտածողներ ու գործիչներ, ովքեր սկզբունքորեն չէին կարող «եկեղեցու ուսմունքից ու դոգմաներից անկախ» դիրքորոշում ունենալ, ովքեր, լինելով աստվածաբաններ, չէին կարող հանդես գալ աստվածաբանության դեմ, ովքեր, պայքարելով Հռոմի կաթոլիկ եկեղեցու սանձազերծած «դավանաբանական պատերազմի» դեմ, չէին կարող աշխարհայացքային ու կրոնաաստվածաբանական նույնիսկ աննշան հարցերում շեղվել ուղղափառ և ավանդական ուսմունքից: Ընդհակառակը, հենց նրանք էին, որ ի պաշտոնե կոչված էին հիմնավորելու ու պաշտպանելու հայոց եկեղեցու վարդապետությունը, ծիսակարգն ու ավանդույթները արտաքին ու ներքին հարձակումներից, տեսականորեն հիմնավորելու թե՛ քրիստոնեական կրոնի և թե՛ հայոց եկեղեցու դավանաբանական սկզբունքները: Եվ բնավ զարմանալի չէ, որ ժամանակակիցները հենց այդպես են հասկացել ու գնահատել նրանց ազգապահպան գործունեությունը: Օրինակ, իր ուսուցչի՝ Գրիգոր Տաթևացու մասին Մատթեոս Ջուղայեցին հետևյալ կերպ է արտահայտվել. «Այլ և արար գիրս յոգնախմաստք ընդդեմ ամենայն ազգաց, ճշմարիտ ցուցանելով զհայք. և արար զբանս խրատականս. և իմաստս. և հանճարս. և իմաստնացոյց զազգս հայոց՝ քան զամենայն ազգս. և ուղղեաց զկարգս. և զսահմանս եկեղեցոյս»¹⁰:

Ռոտունեցու և Տաթևացու փիլիսոփայական հայացքների՝ Վ. Չալոյանի վերլուծությունից (եթե անգամ անձանոթ լինենք դրանց բնագրերին) պարզ երևում է, որ մենք գործ ունենք տիպիկ միջնադարյան մտածողների, միջնադարյան փիլիսոփայությանը բնորոշ հարցադրումների ու լուծումների հետ: Վ. Չալոյանի վերլուծություններում չենք տեսնում Վերածննդի դարաշրջանի փիլիսոփայության ո՛չ շունչ, ո՛չ ոգի, ո՛չ էլ առանձին գաղափարներ կամ միտումներ: Բհարկե, արվում են պնդումներ այս կամ այն հարցի մատերիալիստական լուծումների կամ

¹⁰ Մատթեոս Ջուղայեցի, Վարք Գրիգոր Տաթևացու, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. թիվ 6607, էջ 5բ:

կռահումների մասին, սակայն բնավ հիմնավորված չէ դրանց կապը Վերածննդի փիլիսոփայության հետ, մանավանդ որ վերջինս բնավ էլ մատերիալիստական բնույթ չունի: «Մատերիալիստական իմացաբանություն կամ տրամաբանություն» բառակապակցությունը դեռ ոչինչ չի ասում Վերածննդի փիլիսոփայության առկայության մասին: Չնայած դրան՝ Վ. Չալոյանը եզրակացնում է. «Այսպիսով, Հայաստանի Վերածնության շրջանի շահագործող դասակարգերի առաջադեմ խավի փիլիսոփայությունը հաստատվեց ինքնուրույն և աստվածաբանությունից անկախ մտածողության ճանապարհի վրա, առաջ բերեց նոր հարաճուն հետաքրքրություն դեպի անտիկ և ուշ հելլենիստական հայ փիլիսոփայությունը, առաջադրեց իր մատերիալիստական իմացաբանությունը և տրամաբանությունը: Դա այն նոր մտածողությունն էր, որը կարողանում էր արտահայտել ռեալ՝ երկրային, աշխարհի և մարդու մտածողության հարաբերություններն իրենց նոր հասկացությամբ»¹¹:

Տաթևի դպրոցի փիլիսոփայության գնահատությանը վերաբերող մյուս հարցը փիլիսոփայության և աստվածաբանության, աշխարհիկ գիտելիքի և հավատի տեսության հարաբերակցության հարցն է: Հայ փիլիսոփա-պատմաբաններն իրավացիորեն նկատում են, որ 10-14-րդ դարերի հայ փիլիսոփայությունը հարստանում է աշխարհիկ գիտելիքներով, որ աստվածաբան-փիլիսոփաները հենվում են ինչպես անտիկ հունական դասականների, այնպես էլ հայկական հելլենիզմի փիլիսոփայության վրա: Այստեղից էլ արվում է այն հետևությունը, թե 10-14-րդ դարերի փիլիսոփաները, այդ թվում նաև Տաթևի դպրոցի ներկայացուցիչները, ձգտում էին (Գ. Գրիգորյանի խոսքերով՝ «կամա թե ակամա, գիտակցելով կամ առանց գիտակցելու») «նեղացնել» աստվածաբանության շրջանակները՝ ավելացնելով և ընդլայնելով աշխարհիկ գիտելիքների ծավալը¹²: Վ. Չալոյանը նույնպես համոզված գրում է, որ այս շրջանի «շահագործող դասակարգի առաջադեմ խավի փիլիսոփայությունը հաստատվեց ինքնուրույն և աստվածաբանությունից անկախ մտածողության ճանապարհի վրա, առաջ բերեց նոր հարաճուն հետաքրքրություն դեպի անտիկ և ուշ հելլենիստական հայ փիլիսոփայությունը, առաջադրեց իր մատերիալիստական իմացաբանությունը և տրամաբանությունը»¹³: Այս տեսակետին հակադրվում է Հ. Գաբրիելյանը, որը, օրինակ, Տաթևացու մասին գրում է, թե «լինելով 14-րդ դարի հայ առաջավոր մտքի վերջին աչքառու ներկայացուցիչը՝ այնուամենայնիվ Տաթևացին ոչ միայն հիմնական հարցերում դեռ կապված է հնի հետ, այլև գիտակցորեն աշխատում է կրոնը գիտությունից վեր դասել,

¹¹ Վ. Գ. Չալոյան, Հայկական Ռենեսանս, էջ 152:

¹² Տե՛ս Գ. Հ. Գրիգորյան, Միջնադարյան հայ փիլիսոփայության հանգուցային հարցերի շուրջ, էջ 10-15:

¹³ Վ. Գ. Չալոյան, Հայկական Ռենեսանս, էջ 152:

որի համար էլ նա սրբացվել է հայ եկեղեցու կողմից»¹⁴:

Իսկապես, ի տարբերություն նախորդ դարերի, այս շրջանի (10-14-րդ դդ.) հայ փիլիսոփայությունն օգտվել է բազմազան ու բազմալեզու աղբյուրներից, այդ թվում՝ աշխարհիկ: Սակայն սխալ կլինի պնդել, թե այս շրջանի փիլիսոփայության գլխավոր միտումը կրոնական մտածողության սահմաններից դուրս գալու, աստվածաբանության ճնշումից փիլիսոփայության ազատագրման ձգտումն էր: Ընդհակառակը, այս շրջանի փիլիսոփայության բնորոշ գիծը աստվածաբանությունը փիլիսոփայությամբ հարստացնելն էր կամ՝ աստվածաբանության փիլիսոփայականացումը և, դրանով իսկ, աստվածաբանության դիրքերի ամրապնդումը: Թե՛ քանակական և թե՛ որակական առումներով աշխարհիկ գիտելիքի ավելացումը, անտիկ ու հելլենիստական ավանդույթներին դիմելը պետք է դիտարկել գործառնության տեսանկյունից, այսինքն՝ թե դրանք ի՞նչ դեր են խաղացել տիրապետող գաղափարախոսության պահպանման ու ամրապնդման կամ, ընդհակառակը, խարխլման ու թուլացման գործում: Նշենք, որ այդ աշխարհիկ կամ անտիկ փիլիսոփայական աղբյուրները հիմնականում տրամաբանական բնույթի էին, այսինքն՝ եկեղեցու համար աշխարհայացքային առումով գրեթե ոչ մի վտանգ չէին ներկայացնում: Ընդհակառակը, դրանց մեկնությունները վերջին հաշվով կոչված էին սպասարկելու աստվածաբանությանը: Իսկ եթե հանդիպում ենք բնափիլիսոփայական և բնագանգական երկերի, ապա դրանցում շեմքից մերժվում և քննադատվում են այն գաղափարները, որոնք համահունչ չեն եկեղեցու վարդապետությանը: Այլ հարց է, որ աշխարհիկ գիտելիքի ներմուծումը, անկախ դրա գործառնության նշանակությունից, առարկայորեն կարող է (անշուշտ, առաջընթացի համար բարենպաստ պայմանների առկայության դեպքում) նպաստել փիլիսոփայության և աստվածաբանության տարանջատման կամ, ընդհանուր առմամբ, աշխարհականացման գործընթացին: Այս տեսակետից որոշ իմաստով ընդունելի է Հովհան Ռոոտնեցու փիլիսոփայական հայացքներին Գ. Գրիգորյանի տված գնահատականը. «Անշուշտ, որպես իր դարի գավակ, որպես միջնադարյան իմաստասեր Ռոոտնեցու հայացքների համակարգում դեռևս զգալի չափերի է հասնում կրոնաաստվածաբանականը և նրա մոտ գիտական, աշխարհիկ գիտելիքը հայտնի չափով հանդես է գալիս որպես աստվածաբանական «ճշմարտությունները», թեզերն ու սկզբունքները հավաստողի ծառայական դերով: Բայց պատմական պրոգրեսի առումով էականն այն է, որ այդ երևույթին զուգահեռ նա մեծ հետաքրքրություն է դրսևորել աշխարհիկ գիտելիքների նկատմամբ, դրանք ուսումնական ծրագրերի մեջ մտցնելու պահանջ է առաջադրել, և ինքն անձամբ առավելագույն չափով անդրադարձել է դրանց լուսաբանման ու մասսայականացման խնդրին, որոնցով նա օբյեկտիվ-

¹⁴ Հ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, էջ 211:

րեն խթանել է գիտելիքների հետագա առաջընթացը»¹⁵:

Տաթևի դպրոցի փիլիսոփայության գնահատման հետ կապված մյուս խնդիրն այն է, թե պետք է արդյոք «տաթևցիների» փիլիսոփայությունը որակել որպես սխոլաստիկական (դպրոցային): Վ. Չալոյանը նշում է, որ Տաթևի դպրոցի ներկայացուցիչները պայքար էին մղում «Արևմուտքի սխոլաստիկայի»՝ Հայաստանում և հարակից երկրներում բնավորված կաթոլիկադավան մտածողների դեմ, ընդ որում՝ այդ պայքարը չէր սահմանափակվում կրոնի շրջանակներով, քանի որ տաթևցիները օգտվում էին նաև ոչ կրոնական բնույթի փիլիսոփայական նյութից՝ անտիկ աշխարհի դասական և հայկական ուշ հելլենիզմի փիլիսոփայությունից: Ավելի լայն համատեքստում հակառակ տեսակետն էր պաշտպանում Հ. Գաբրիելյանը, ըստ որի՝ «Լուսավորչական եկեղեցու ջատագովները (սկսած ունի նաև Վ. Չալոյանին ու Ս. Արևշատյանին – Ս. Ջ.) աշխատել և աշխատում են ապացուցել, թե իբր և՛ Որոտնեցին, և՛ Տաթևացին, լինելով պապականության հակառակորդներ, չեն ազդվել Արևմտյան Եվրոպայի սխոլաստիկայից և, մանավանդ, կաթոլիկության ներկայացուցիչներից: Պատմական փաստերը բոլորովին այլ բան են ասում»¹⁶: Վերլուծելով ու գնահատելով Որոտնեցու հայացքները՝ նա անում է հետևյալ եզրակացությունը. «Որոտնեցին ընդհանուր աշխարհայեցողության հարցերում դեռ միջնադարյան մակարդակից վեր չի բարձրանում և սխոլաստիկական նրա աստվածաբանության հիմնական մեթոդն է»¹⁷:

Իսկապես, ինչպե՞ս կարող էր միջնադարյան, հատկապես հասուն շրջանի փիլիսոփայությունը չլինել սխոլաստիկական, մանավանդ, եթե միջնադարում, կրոնական գաղափարախոսության միահեծան իշխանության պայմաններում փիլիսոփայման օրինական այլ ձև բացառվում էր, եթե սխոլաստիկական միջնադարյան մտքի զարգացման օրինաչափ փուլն էր, եթե սխոլաստիկական ինքնին փիլիսոփայության հեղինակության բարձրացման վկայություններից էր և այլն: Կարծում եմ՝ այս դեպքում իր դերն է խաղացել միջնադարյան սխոլաստիկայի նկատմամբ մարքսիստական փիլիսոփայության մեջ արմատավորված միանշանակ բացասական վերաբերմունքը: Մինչդեռ միջնադարում սխոլաստիկայի ի հայտ գալը առաջադիմական երևույթ էր, աստվածաբանության և փիլիսոփայության փոխհարաբերության նոր մակարդակ, փիլիսոփայության կարգավիճակի օրինականացման, Ս. Գրքի ճշմարտությունների մեկնաբանության ռացիոնալ ձև, իմացության սուբյեկտի գիտակցության մեջ եթե ոչ կոպեռնիկոսյան (չնեղացնենք Ի. Կանտին), ապա գոնե յուրահատուկ հեղաշրջման սկիզբ: Եթե բանականության մի-

¹⁵ Գ. Հ. Գրիգորյան, Հովհան Որոտնեցու փիլիսոփայական ուսմունքը, էջ 223:

¹⁶ Հ. Գ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, էջ 159:

¹⁷ Նույն տեղում, էջ 164:

ջոցով հնարավոր է հիմնավորել Հայտնության ճշմարտությունները, ստեղծել «բանականացված հավատք», ապա նշանակում է, որ բանականությունը արժեքավոր գործիք է աստվածիմացության գործում, նշանակում է մարդը իր կարողություններով ի վիճակի է հասկանալու Հայտնության ճշմարտությունները: Իսպանացի փիլիսոփա Օրտեգա-ի-Գասետի կարծիքով, բանականության նմանատիպ արժևորումը փոխակերպում է քրիստոնեական կյանքի կառուցվածքը. «Մարդը, որը ոչ վաղ անցյալում նվաստացված էր, սկսում է ինքնահաստատվել, հավատալ իր սեփական գործություններին: Եվ, եթե, մի կողմից, նա կարիք է զգում հավատի միջոցով գերբնական պայծառացման, ապա մյուս կողմից, հանգում է այն համոզման, որ հավատն իր հերթին կարիք է զգում մարդու կողմից լուսավորման: Հավատքի ներսում արմատավորվում է մարդկային բանականությունը: Հայտնությունը, Աստծո խոսքը կարիք է զգում այն բանի, որ դառնա աստվածային Բանի մասին մարդկային գիտություն: Այդ գիտությունը սխոլաստիկական աստվածաբանությունն է»¹⁸:

«Տաթևցիներին» փիլիսոփայությունը (դա ստեղծվել է եկեղեցուն կից դպրոցում, եկեղեցու կողմից հիմնադրված ու վերահսկվող-կառավարվող համալսարանում), փիլիսոփայման կերպը, հետազոտման ու շարադրման մեթոդը սխոլաստիկական էին, նույնիսկ նրանց աշխատությունների բովանդակությունն ու կառուցվածքը համապատասխանում էին եվրոպական փիլիսոփայության մեջ տարածված սխոլաստիկական հանրահայտ «հավաքումներին»: Օրինակ՝ Տաթևացու «Գիրք հարցմանցը» հանրագիտարանային մի աշխատություն է, որն իր բովանդակությամբ, նյութի ընդգրկունությամբ, կառուցվածքով, հարց ու պատասխանների շարադրման եղանակով, մինչև իսկ իր «ձիաբեռ» քաշով նմանվում է սխոլաստիկական «հավաքումներին»¹⁹: «Հավաքումների» նմանություն ունենին Որոտնեցու և Ջուղայեցու որոշ քարոզներ: Իսկ ինչ վերաբերում է կաթոլիկադավան մտածողների և տաթևցիների փիլիսոփայական առնչություններին, ապա Ս. Արևշատյանը «Միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական դպրոցների պատմության շուրջ (14-րդ դար)» աշխատության մեջ ցույց է տվել, թե լատին մտածողներ Բարթոլոմեոս Բոլոնիացու և Պետրոս Արագոնացու երկերը, նրանց և հայազգի կաթոլիկների կողմից արված թարգմանությունները ինչ ազդեցություն են գործել տաթևցիների փիլիսոփայական ուսմունքների վրա: Դա հայ-եվրոպական մշակութային-փիլիսոփայական փոխառնչությունների մի ուսանելի դրվագ է, որը կարոտ է ավելի

¹⁸ **Ortega-i-Gasset X.** Избранные труды. М., 2000, с. 363-364.

¹⁹ Մ. Օրմանյանի գնահատմամբ՝ «թե՛ ոճով և թե՛ պարունակությամբ համահավասար կերպարան և արժեք ունի միջին դարերու հռչակեալ լատին աստուածաբաններուն, Թովմաս Ակուինացիի, Ալբերտոս Մուրեցիի և Սկոլտոս Էրինացիի... գործերուն հետ, հանգիտակշիռ առաւելութիւններով և համանման թերութիւններով» (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. 2, Կ. Պոլիս, 1914, էջ 2029):

մանրամասն ուսումնասիրության:

Տաթևի դպրոցի փիլիսոփայության գնահատման հետ կապված հաջորդ հարցը, որը գուցե պետք էր դիտարկել սկզբում, վերաբերում է հենց «Տաթևի դպրոցի փիլիսոփայություն» բառակապակցության մեկնաբանությանը: Ովքե՞ր էին այդ դպրոցի ներկայացուցիչները: Հ. Գաբրիելյանը «Հայ փիլիսոփայական մտքի պատմության» երկրորդ հատորում «Նովիսալիզմի զարգացման ընթացքը» գլխում անդրադառնում է Հովհան Ռոոտնեցու և Գրիգոր Տաթևացու, իսկ «Փիլիսոփայական միտքը 15-16-րդ դարերում» գլխում՝ Առաքել Սյունեցու փիլիսոփայական հայաքննիչի վերլուծությանը: Վ. Չալոյանը «Հայոց փիլիսոփայության պատմություն» մենագրությունում «Ֆեոդալական հասարակության ծաղկման շրջանի փիլիսոփայությունը (10-15-րդ դդ.)» գլխում առանձնացնում է «Շահագործող դասակարգերի առաջադեմ խավերի փիլիսոփայությունը՝ Տաթևի դպրոցը (14-15-րդ դդ.)» ենթագլուխը, որում վերլուծում է Հովհան Ռոոտնեցու և Գրիգոր Տաթևացու փիլիսոփայական հայացքները: Իսկ «Երկրի դեգրադացիայի և անկման շրջանի փիլիսոփայությունը (15-17-րդ դդ.)» գլխում անդրադառնում է միայն Առաքել Սյունեցու փիլիսոփայությանը: Երկու մասնագետներն էլ ոչ մի խոսք չեն ասում Առաքել Սյունեցու ժամանակակից, Տաթևացու շնորհալի աշակերտներից մեկի՝ Մատթեոս Ջուղայեցու մասին²⁰: Մինչդեռ վերջինիս հոգևոր ժառանգության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում աստվածաբանական-փիլիսոփայական նյութը, որն արժանի է առանձին վերլուծության ու գնահատության²¹:

Փաստորեն, թե՛ Հ. Գաբրիելյանը և թե՛ Վ. Չալոյանը Տաթևի դպրոցի փիլիսոփայությունը բաժանում են երկու շրջանի՝ ծաղկման ու անկման, որոնց տարբերությունը ըստ երևույթին պայմանավորված է ոչ այնքան ժամանակաշրջանով, որքան փիլիսոփայման կերպով: Օրինակ՝ թե՛ Հ. Գաբրիելյանը և թե՛ Վ. Չալոյանը Առաքել Սյունեցու փիլիսոփայությունը համարում են հետընթաց քայլ Ռոոտնեցու և Տաթևացու համեմատ՝ առաջին հերթին նկատի ունենալով այն, որ Սյունեցին փիլիսոփայությունը հետևողականորեն ծառայեցնում է աստվածաբանությանը և եկեղեցու գաղափարախոսությանը: «Իր փիլիսոփայական աշխարհայացքով Առաքել Սյունեցին, - գրում է Հ. Գաբրիելյանը, - շարունակեց Տաթևացու գիծը՝ ավելի թեքվելով դեպի աջ»²²: «Եթե նրա նախորդները՝ Հովհան Ռոոտնեցին և Գրիգոր Տաթևացին զգալի չափով դուրս եկան աստվածաբանության շրջանակներից և որոշ ինքնուրույ-

²⁰ Տե՛ս **Լ. Խաչիկյան**, Մատթեոս Ջուղայեցու կյանքն ու գործունեությունը, «Բանբեր Մատենադարանի», թիվ 3, 1956, **Ն. Թովմասյան**, Սոցիալ-տնտեսական միտքը Հայաստանում 15-18-րդ դարերում, Եր., 1982:

²¹ Տե՛ս, օրինակ, **Մ. Ա. Զաքարյան**, Հայ իմաստասերներ, Գիրք երկրորդ (Մատթեոս Ջուղայեցի, Առաքել Սյունեցի), Եր., 1997:

²² **Հ. Գ. Գաբրիելյան**, Հայ փիլիսոփայական մտքի պատմություն, հ. 2, էջ 228:

նություն հաղորդեցին փիլիսոփայությանը, ապա Առաքել Սյունեցին, - գրում է Վ. Չալոյանը, - կրկին վերադարձավ աստվածաբանությանը, փիլիսոփայությունը ենթարկեց եկեղեցու ու նրա սպասավորների պահանջներին: Դրանով է բացատրվում այն, որ նրա մոտ այլևս չկար տեսական մտածողության նախկին թափը, չկար նոր հարցերի դրում ու լուծում, նույն Տաթևի դպրոցի կողմից առաջ քաշված փիլիսոփայական հայտնի պրոբլեմների նոր փաստարկում»²³:

Այս գնահատումների հետ կապված նշեմ հետևյալը. նախ՝ եթե «դպրոց» բառը բուն իմաստով մեկնաբանենք, ապա ճիշտ կլիներ ասել «գլաձոր-տաթևյան դպրոց», որովհետև տաթևյանը գլաձորյան դպրոց-համալսարանի անմիջական շարունակությունն էր և հոգևոր առումով՝ դրա ժառանգորդը: Պարզապես տաթևցիները անհամեմատ մեծ ուշադրություն դարձրին փիլիսոփայությանը: Երկրորդ՝ նպատակահարմար չէ ժամանակագրական իմաստով Տաթևի դպրոցը բաժանել երկու հատվածի՝ ծաղկման ու անկման: Եթե նկատի ունենանք երկրի քաղաքական, սոցիալ-տնտեսական իրավիճակը, ապա էական տարբերություն չկար մի կողմից Որոտնեցու և Տաթևացու, մյուս կողմից՝ Սյունեցու և Ջուղայեցու ապրած ժամանակահատվածների միջև: Երրորդ՝ էական տարբերություն չկար նաև աշխարհայացքային առումով. Սյունեցին ու Ջուղայեցին իրենց աստվածաբանական-փիլիսոփայական հիմնական գործերը գրել են Տաթևացու կենդանության ժամանակ, որոշ դեպքերում էլ՝ նրա հորդորանքով ու ղեկավարությամբ (օրինակ՝ հայտնի է, որ Սյունեցու գլխավոր փիլիսոփայական երկը՝ Դավիթ Անհաղթի «Սահմանք իմաստասիրութեան» երկի մեծածավալ մեկնությունը, գրվել է Տաթևացու խորհրդով): Ասել է թե՛ նրանք ունեին ընդհանուր նպատակ (հայոց եկեղեցու դավանաբանության ջատագովություն, պայքար միարարականների դեմ և այլն), ուստի «աշխատանքի բաժանման» հետևանքով և «ուժերի տնտեսման» սկզբունքին համապատասխան՝ յուրաքանչյուրը հանձն էր առել լուծել որոշակի խնդիր: Այսպես, եթե նույնիսկ ընդունենք, որ Որոտնեցու և Տաթևացու համեմատ Սյունեցին «թեքվել է դեպի աջ», ապա դա պետք է գնահատել ոչ թե իբրև «անկման փիլիսոփայության» արտահայտություն, այլ ժամանակի կրոնադավանաբանական պայքարի ոգուց թելադրված հրամայականի կատարում: Առաքել Սյունեցին, Դավիթ Անհաղթի աշխարհիկ փիլիսոփայությունը մեկնաբանելով քրիստոնեության ոգով, կիրառելով սխոլաստիկական իմաստասիրման եղանակներն ու մեթոդները, ձգտում էր իր գաղափարական հակառակորդներին ցույց տալ, որ մեծանուն հայ փիլիսոփան «հայոց դատի», հայոց եկեղեցու դավանաբանության պաշտպաններից է, որի վաստակը հաշվի առնելով՝ առաքելական եկեղեցին ժամանա-

²³ Վ. Կ. Չալոյան, Հայոց փիլիսոփայության պատմություն, էջ 448:

կին նրան սրբացրել է: Այլ խոսքով, տաթևցի չորս մտածողները միևնույն դպրոցից էին, ունեին միասնական ու ընդհանուր նպատակ, բայց տարբեր խնդիրներ, ուստի այդ դպրոցի փիլիսոփայությունը պետք է դիտարկվի մի ամբողջության մեջ:

Բանալի բառեր – *միջնադարյան հայ փիլիսոփայություն, Հովհան Որոտնեցի, Գրիգոր Տաթևացի, Առաքել Մյունեցի, Մատթեոս Ջուղայեցի, աստվածաբանություն, սխոլաստիկա, հավատ և բանականություն, Միջնադար և Վերածնունդ*

СЕЙРАН ЗАКАРЯН – Об оценке философии татевской школы. – В статье анализируется специальная литература, посвящённая философской школе Татева, и делается заключение, что исследователям необходимо: 1. отказаться, занимаясь историей философии, от ряда положений марксистской методологии и, систематизируя философско-исторический материал, руководствоваться принципом историзма; 2. принимать во внимание способ и метод средневекового философствования, соотношение в средневековой науке философии и богословия, особенности философского познания в средние века; 3. рассматривать наследие представителей Татева не в рамках отдельных периодов (расцвет, упадок), а как философию одного и того же периода, причём учитывать, что, стремясь к общей цели, каждый из татевских учёных решал особую задачу.

Ключевые слова: *средневековая армянская философия, Иоанн Воротнеци, Григор Татеваци, Аракел Сюнеци, Маттеос Джугаеци, богословие, схоластика, вера и разум, Средневековье и Возрождение*

SEYRAN ZAKARYAN – On the Issue of Tatev School Philosophy Evaluation. – Analyzing the available philosophical and historical literature on Tatev School, the author of the article has come to the conclusion that it is necessary a) to renounce some provisions of Marxist methodology in the History of philosophy and be guided by the principle of historic authenticity of recomposing philosophical and historical material, 2) to consider the way and method of medieval philosophizing, the correlation of philosophy and theology in medieval philosophy, the peculiarities of the status of philosophy in the Middle ages, c) to observe the philosophy of Tatev not as that of different periods (prosperity and recession), but as philosophy of the same period, moreover, considering that each of them solved different problems within the scope of common goal.

Key words: *medieval Armenian philosophy, Hovhan Vorotheni, Grigor Tatevatsi, Arakel Syunetsi, Mattheos Jughayetsi, theology, scholastic, faith and reason, the Middle Ages and Renaissance*

**ԽՈՍՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.
ՄԵՂՄԱՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՓՈԽԱՐԿՈՒՄ**

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Խոսքի արժանիքները մշտապես եղել են գիտական ուշադրության առարկա: Դեռևս անտիկ աշխարհում քննարկման խնդիր են եղել խոսքի տարատեսակ դրսևորումները, դրանց բնութագրական հատկանիշները՝ ճշգրտություն, սեղմություն, հարստություն, բազմազանություն, արտահայտչականություն և այլն: Վերջին տասնամյակներին հայ իրականության մեջ առավել մեծացավ հետաքրքրությունը խոսքի նկատմամբ, երբ ակնհայտ դարձավ, որ խոսքարվեստին տիրապետելը, այսինքն՝ ոչ միայն ճիշտ ու գրագետ, այլև արտահայտիչ խոսելը կարևորագույն պայմաններ են հասարակությանը ինտեգրվելու, հասարակական կյանքում սեփական տեղն ու դիրքը ունենալու, սոցիալական այս կամ այն միջավայրում հաստատվելու համար:

Մեզանում հաճախ են քննարկման առարկա դարձել խոսքի զանազան արժանիքներ, մասնավորապես գեղարվեստական ոճի ուսումնասիրության տեսանկյունից դիտարկվել են պատկերավոր կամ արտահայտիչ խոսքի կառուցման ինչ-ինչ միջոցներ՝ փոխաբերություն, մակդիր, համեմատություն¹, առանձին դեպքերում՝ նաև խոսքի ճշգրտություն, մաքրություն, մատչելիություն և այլն²: Խոսքի արժանիքների առանձին տեսակներ, որոնք կիրառվում են նաև գործառական այլ ոճերում (առօրյա-խոսակցական, պաշտոնական, գիտական և այլն), մասամբ դուրս են մնացել հայերեն խոսքի մշակույթի հետաքրքրության շրջանակներից: Այստեղ քննարկվող տեսակները (մեղմասություն և փոխարկում) խոսքի արժանիքների հենց այդ տեսակներից են: Դրանց միասնաբար քննությունը արդարացված է նաև այն առումով, որ արտահայտության առանձին ձևերում, որոնց մասին ստորև կխոսվի, դրանք դրսևորում են որոշակի ընդհանրություններ:

Արտահայտիչ, պատկերավոր խոսքը անհամեմատ տպավորիչ է, ուժեղ, հարստացնում է խոսքի բովանդակությունը, զորացնում է արդ-

¹ Տե՛ս **Հ. Հարությունյան**, Գեղարվեստական խոսք, Եր., 1986, **Օ. Բաբայան**, Փոխաբերությունը արդի հայերենում, Եր., 1998, **Ա. Մարություն**, Հայոց լեզվի ոճաբանություն, Եր., 2000, **Վ. Միրզոյան**, Ճարտասանություն, Եր., 2004, **Լ. Եզեկյան**, Հայոց լեզվի ոճագիտություն, Եր., 2007 և այլն:

² Տե՛ս **Պ. Պողոսյան**, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք երկրորդ, Եր., 1991, **Լ. Եզեկյան**, Խոսքի ճշտություն և ճշգրտություն, «Բանբեր Երևանի համալսարանի, Բանասիրություն», 139.2, Եր., 2013:

յունավետությունը և ոչ միայն լսողի/լսարանի վրա ազդելու մեծ ներուժ ունի, այլև արթնացնում է նորանոր զգացումներ, խթանում է երևակայությունը: Դրանով խոսքի առարկան լսարանի համար դառնում է առավել հետաքրքիր, իսկ հաղորդվող միտքը՝ ավելի ընկալելի:

Խոսքի արտահայտչականությունը պայմանավորող լեզվական միջոցները սովորաբար տարանջատում են պատկերավորման և արտահայտչական տեսակների³: Առաջինների բնորոշ հատկանիշը համարվում է պատկերի ստեղծումը. դրանք հիմնականում **դարձույթներն են** (համեմատություն, փոխաբերություն, փոխանունություն, հեզնանք, չափազանցություն, մակդիր, խորհրդանիշ և այլն): Երկրորդների համար իբրև տարբերակիչ հատկանիշ է առանձնացվում սովորական չեզոք խոսքից հուզականությամբ կամ արտահայտչական այլ նրբերանգներով տարբերվելը. դրանք առավելապես **բանադարձումներն են** (հարանունություն, աստիճանավորում, կրկնաբերություն, հակադրություն, բազմաշաղկապություն, զեղչում, բառախաղ, ճարտասանական հարց, շրջասույթ, շրջադասություն և այլն):

Վերջին շրջանում առավել ընդունված է այդ տեսակները դիտարկել միասնաբար՝ որպես պատկերավորման կամ արտահայտչական կամ պարզապես՝ պատկերավորման-արտահայտչական միջոցներ: «Խոսքի հուզական արտահայտչականության հնարավոր է հասնել, գրում է ռուս հետազոտող Ա. Ռադուգինը, - լեզվի պատկերավորման և արտահայտչական միջոցներով՝ բանադարձումներով, դարձույթներով, ասացվածքներով, դարձվածքային արտահայտություններով, թևավոր խոսքերով, ինչպես նաև հնչերանգով և շարժումներով»⁴: Բոլոր դեպքերում, տարաբնույթ անվանումներից ու դասակարգումներից լեզվական այդ միջոցների բնույթն ու բովանդակությունը և դրանց նկարագրությունը չեն փոխվում:

Դարձույթներն ու բանադարձումները, այսինքն՝ խոսքի պատկերավորման-արտահայտչական միջոցները, դրսևորվում են լեզվի բոլոր մակարդակների միավորներով՝ հնչյունաբանությունից մինչև շարահյուսություն: Քննարկվող միջոցների դրսևորման հիմնական ոլորտը լեզվի բառային և քերականական մակարդակներն են:

Մեղմասություն (հուն.՝ **euphemi. eu** - լավ, **phemi** - խոսում եմ). հասկացությունը ունի նեղ և լայն ըմբռնումներ: Առաջինի դեպքում մեղմասությունը տհաճ, կոպիտ բառերի ու արտահայտությունների փոխարինումն է վայելուչ համարվող հոմանիշներով, որոնք նվազեցնում են ոչ վայելուչ կամ բացասական հասկացությունները: Մեղմասությունների

³ Տե՛ս **Ս. Մեյրոնյան**, Ակնարկներ հայոց լեզվի ոճաբանության, Եր., 1984, **Ա. Մարություն**, նշվ. աշխ., **Լ. Եզեկյան**, նշվ. աշխ., **Թ. Շահվերդյան**, Ոճագիտություն, Եր., 2010 և այլն:

⁴ **А. Радугин**, Русский язык и культура речи, М., 2004, с. 95. Տե՛ս նաև **Վ. Միրզոյան**, նշվ. աշխ., էջ 202-278:

ծագումը պայմանավորված է եղել դրանց հենց այդ հատկանիշով: Երկրորդ՝ այսպես ասած՝ ավելի լայն ըմբռնմամբ՝ մեղմասությունը կիրառվում է կտրուկ կամ ուղղակի խոսքը ավելի բարեկիրթ կամ մեղմացված համանշային տարբերակով հնչեցնելու նպատակով: Այլ ձևակերպմամբ՝ մեղմասությունը «արտահայտչական տեսակետից չեզոք բառ կամ արտահայտություն է, որը գործածվում է համանշային լեզվական միավորի փոխարեն»⁵:

Առաջին տեսակետի կողմնակիցներից Էդվարդ Ադայանը այսպես է բնութագրում արտահայտչական այդ միջոցը. «Էվֆեմիզմ է կոչվում «անքաղաքավարի» կամ «անհարմար» համարվող բառերի փոխանակումը նորերով: Սա նույնպես իր հիմքում ունի այս կամ այն դասակարգի յուրահատուկ մոտեցումը և արտահայտում է նրա «ավելի քաղաքավարի», «ավելի կիրթ» խոսելու ձգտումը՝ ի հակադրություն մյուս դասակարգերի «գռեհիկ լեզվի»: Օրինակ՝ **հարգանացու հավաստիքը**, փոխանակ՝ **բարև, համեցեք**, փոխանակ՝ **մտեք, կարծեմ դուք սխալվում եք**, փոխանակ՝ **ստում եք** և այլն»⁶: Նույն մոտեցմամբ՝ լեզվաբանը **Էվֆեմիզմի** մի տեսակ է համարում նաև **տաբուն**, երբ «զանազան նախապաշարունակների, սնտոհապաշտությունների ու կրոնական հավատալիքների շնորհիվ խուսափում են որոշ առարկաների անունները տալուց և նրանց մասին խոսելիս զանազան արտահայտություններ են գործածում»⁷: Հարցը սկզբունքորեն այս տեսանկյունից է ներկայացված նաև հայերենի «Ոճաբանական բառարան»-ում, որտեղ **Գեղասություն** բառահոդվածի տակ կարդում ենք. «1. Տիպիկ բառերի և արտահայտությունների փոխարինումը վայելուչ համարվող հոմանիշներով: 2. Այնպիսի բառերի գործածություն, որոնք նվազեցնում, մեղմացնում են բացասական, անվայելուչ համարվող հատկանիշները: *Մեղմասություն: «Ճիշտ չեք ասում», փոխ. «Սուտ եք ասում», անհամակրելի, փոխ. ասելի, սիրտը թափել (փսխել), վախճանվել. հոգին ավանդել (մեռնել), հանգուցալ (մեռել)...*»⁸: (Ի դեպ, հեղինակային վերաբերմունքի մասին է խոսում նաև բառարանագրի կողմից **Գեղասություն** տերմինի գործածությունը):

Բերված օրինակներից դժվար չէ նկատել, սակայն, որ հասկացության նեղ և լայն ըմբռնումների սահմանները խիստ հարաբերական են, և առաջինը ըստ էության չի սահմանափակվում միայն «անքաղաքավարի» կամ «անհարմար» համարվող բառերը «ավելի քաղաքավարի» կամ «ավելի կիրթ» ձևակերպելու պայմանով. **բարև**-ը բնավ էլ անքաղաքավարի կամ անհարմար չէ **հարգանացու հավաստիք**-ի համեմատ. վերջինը՝ որպես ողջույնի ձև, բնորոշ է բարձր ոճերին և գործածվում է

⁵ E. Зверева, Основы культуры речи, М., 2008, с.126.

⁶ Է. Ադայան, Լեզվաբանության ներածություն, Եր., 1967, էջ 300:

⁷ Նույն տեղում, էջ 301:

⁸ Ֆ. Խլղաթյան, Ոճաբանական բառարան, Եր., 2000, էջ 39-40:

որոշակի խոսքային միջավայրում, **բարև**-ը համագործածական բառ է, ունի ընդհանրական-չեզոք բնույթ: Մեղմասությունը ակնհայտորեն ավելի լայն նշանակություն ունի, և հենց դրանում է մեղմասության արտահայտչական մեծ ուժը:

Ոճական այդ բանադարձումը ստորև ներկայացվում է իր այդ երկու նշանակություններով. դրանք բառեր կամ արտահայտություններ են, որոնք **ա)** որոշակի իրավիճակում խոսողին կամ գրողին առավել նպատակահարմար են թվում գործածել՝ հաղորդակցման նորմալ պայմաններ ապահովելու համար, **բ)** փոխարինում են ոչ այնքան բարեկիրթ, կտրուկ, կոպիտ, ոչ տեղին հոմանշային տարբերակ(ներ)ի՝ խոսքը հաճելի, մեղմ, վայելուչ դարձնելու նպատակով: Օրինակ՝ «Նա անշնորհքի մեկն է» ասելու փոխարեն՝ ասվում է՝ «Նա բարեկիրթ մարդկանցից չէ», կամ՝ «Մեր պահանջները չկատարելու դեպքում Դուք խստորեն կպատժվեք» ասելու փոխարեն՝ գործընկերոջը բարեկիրթ երևալու, հարգալից ներկայանալու համար ասվում է՝ «Մեր պահանջները չկատարելու դեպքում Դուք խնդիրներ կունենաք»: ՀՀ-ում 2014-ի նոյեմբերին դրամի անսպասելի արժեզրկումը մեծ շփոթ առաջացրեց հասարակության մեջ, և Կենտրոնական բանկը, խուսափելու համար **արժեզրկում** տերմինից, անմիջապես շրջանառության մեջ դրեց **ճշգրտում** հասկացությունը. «Դրամի **արժեզրկում**»//«Դրամի **փոխարժեքի նվազում**»⇒«Դրամի **փոխարժեքի ճշգրտում**»: Կամ՝ Ո՛չ ասելու փոխարեն՝ ասվում է. «Ցավում եմ, բայց Ձեր առաջարկությունը չեմ կարող ընդունել»: Բերված խոսքային տարբերակները բոլորն էլ ըստ էության արտահայտում են նույն բովանդակությունը, բայց տարբեր ձևակերպումներով:

Մեր օրերում, երբ խոսքային հաղորդակցումը գործնական կարևոր նշանակություն է ձեռք բերում, մեղմասության ձևերին տիրապետելը նախապայման կարող է դառնալ հաղորդակցման արդյունավետությունը ապահովելու համար:

Մեղմասությունը գործածվում է երկու որոշակի նպատակներով.

ա) Մեղմասության ենք դիմում նախ և առաջ խոսքի առարկայի իրական բնութագիրը կամ անվանումը պարկեշտ կամ ոչ կոպիտ հնչեցնելու, հաղորդակցումը բարեկիրթ մակարդակում պահելու նպատակով՝ «խիստ պահպանողական» (հետամնաց), «հրաժեշտ տալ կյանքին» (մեռնել), «Նա երեխայի է սպասում» (Նա հղի է), «Դուք այնքան էլ ճիշտ չընկալեցիք իմ ասածը» (չհասկացաք), «տարեց, ոչ երիտասարդ» (ծեր), «ոչ այնքան երջանիկ» (դժբախտ), «Չեմ կարծում, որ դուք այդ հարցում ճիշտ եք» (սխալվում եք), «Նրան դժվար է գեղեցկուհի կոչել» (տգեղ կնոջ մասին), «Ո՛ւմ աճյունն է հանգչում Օշականում» (Ո՛վ է թաղված Օշականում) և այլն: Նման մեղմասությունները նվազեցնում են անցանկալի ելքի, վատ տեղեկության տպավորությունը, մեղմում են լսարանի վրա հնարավոր ծանր ազդեցությունը: Պատահական չէ, որ մահվան ու թա-

դումի հետ կապված գործողությունները լեզվական տեսակետից իրացվում են գրեթե բացառապես մեղմասությունների միջոցով:

Կա նաև հակառակ երևույթը, երբ համեմատաբար կիրթ, մեղմ խոսքի փոխարեն՝ գործածվում է ավելի խիստ արտահայտություն: Օրինակ՝ «Դուք ինձ չեք հասկանա» - «Ինձ հասկանալը ձեր ուժերից վեր է» - «Դեռ շատ հաց ու պանիր պիտի ուտեք, որ ինձ հասկանաք» - «Դա Ձեր վտիտ ուղեղի բանը չէ», «Անտեղյակ» - «Ուղտի ականջում քնած»:

բ) Մեղմասությունը գործածվում է երևույթի բուն էությունը քողարկելու նպատակով: Սա ավելի հաճախ հանդիպում է այնպիսի իրողություններ ներկայացնելիս, որոնց մասին սովորաբար լռում ենք կամ հրապարակավ շատ չենք խոսում: Մեղմասությամբ ակնարկ է արվում. լսարանին վերապահվում է կռահել, հասկանալ խոսքի ամբողջ բովանդակությունը: Մասնագիտական յուրաքանչյուր բնագավառ, հասարակական կյանքի ոլորտ ունի քողարկող մեղմասություններ, որոնք խոսքին առանձնահատուկ նրբերանգներ են հաղորդում: **Տնտեսության բնագավառում** դրանք գործածվում են, օրինակ, երբ խոսվում է գների աճի, տնտեսական անհաջողությունների, անցանկալի այլ իրողությունների մասին՝ «գների ազատականացում», «ֆինանսական դաշտի կայունացման քաղաքականություն»: **Պետական-վարչական գործունեության մեջ** մեղմում են իրողության կամ երևույթի տպավորությունը, առանձին դեպքերում՝ սքողում կատարվածը, ինչպես՝ «գնալ ծայրահեղ քայլերի» (պատժել, ոչնչացնել), «բարձրագույն պատիժ սահմանել» (դատապարտել մահվան), «էթնիկական գտում» (այն անձանց տեղահանում կամ ոչնչացում, որոնք չեն պատկանում տվյալ տարածքում գերիշխող ազգին): **Ռազմական ոլորտում**, օրինակ, եթե խոսքը սեփական գործողությունների մասին է, ընդունված չէ դրանք անվանել ագրեսիա, բռնագավթում: Այս ոլորտում հանդիպող մեղմասություններ են՝ «օբյեկտ» (ռազմական գաղտնի կենտրոն), «համարժեք գործողություններ», «ոչ անհամարժեք պատասխան տալ» (կրկնակի ժխտումով) (խիստ պատասխան), «լարվածությունը պահպանվում է» (կարող են լինել վիրավորներ և սպանվածներ), «խաղաղապահ զորքերի տեղակայում» (ռազմական միջամտություն), «պատժամիջոցների կիրառում» (ռազմական կամ տնտեսական միջամտություն) և այլն:

Քաղաքական մեղմասությունները երբեմն որպես միջոց են գործածվում ապակողմնորոշելու հասարակական կարծիքը, երկակի ստանդարտներով գնահատելու իրավիճակը կամ իրողությունները: Ամերիկացի լեզվաբան Չ. Օսգուդը գրում է, որ **պարտիզան** կոչվողները նույն հաջողությամբ կարող են անվանվել **ազատամարտիկ**, **խռովաբար** կամ **ահաբեկիչ**՝ պայմանավորված նրանով, թե ինչպես ենք ցանկանում, որ մարդիկ վերաբերվեն նրանց⁹: Հայաստան-Ադրբեջան հա-

⁹ Տե՛ս **Л. Богданова**, *Стилистика русского языка и культура речи*, М., 2011, էջ 135:

կամարտությունների առիթով ՀՀ նախկին արտգործնախարարներից մեկի անզգույշ արտահայտությունը (ԼՂՀ **ազատագրված տարածքներ**-ի փոխարեն՝ **գրավյալ տարածքներ**) արժանացավ հանրության խիստ գնահատականին: Կամ՝ ուկրաինական հայտնի դեպքերի ժամանակ այդ երկիր մուտք գործող շարասյունը ամենատարբեր որակումներ ստացավ՝ պայմանավորված տարբեր քաղաքական ուժերի և հակամարտող կողմերի վերաբերմունքով՝ «հումանիտար օգնություն» - «զուտ մարդասիրական առաքելություն» - «ռուսական լայնամասշտաբ միջամտություն» - «անմիջական ներխուժում»:

Մեղմասությունը օգնում է նաև խուսափելու անհարկի որոշակիությունից (կոնկրետությունից): Այս դեպքում խոսքը հնչում է որպես **ակնհայտություն**. հաճախ են գործածվում անորոշ դերանուններ, վերացական բառեր ու արտահայտություններ: Օրինակ՝ «Եթե ինչ-որ մեկը այդ առիթով որևէ բան ունի ասելու կամ ինչ-ինչ պատճառներով ումանցից վիրավորված է, ապա կարող է այդ մասին բարձրաձայնել», «Ինքներդ էլ հիշում եք, թե ինչն ինչոց է, այսուհանդերձ, ձեր թույլտվությամբ՝ ես հարկ եմ համարում վերստին հիշեցնել...»:

Մեղմասությունը խոսքի արտահայտչականությունը ապահովող բառային-շարահյուսական կարևոր միջոց է:

Մեղմասության մի տեսակ է **տարակուսանքը**: Ասվում է ակնհայտ ճշմարտություն, սակայն փոքր-ինչ վարանում ու տարակուսանք ցուցադրելով՝ խոսողը ոչ միայն դրանով դրսևորում է իր հարգանքն ու պատասխանատվությունը լսարանի հանդեպ, այլև նրբորեն խուսափում է իր ելույթին խրատական երանգներ տալուց: Օրինակ՝ «Կարծում եմ՝ ճիշտ կլինեք, որ պահպանեիք վարվեցողության տարրական կանոնները», «Իմ ունեցած տեղեկություններով, իսկ դրանք չեն կարծում, որ հավաստի չեն, պայմանագիրը դեռ չի ստորագրվել»: Այլ կաղապարներ՝ «Եթե սխալվեմ, ինձ ուղղե՛ք», «Մենք մտահոգվելու հիմք ունենք», «Անկեղծ ասած՝ լավ չեմ հասկանում...», «Մտածելու տեղիք է տալիս»:

Մեղմասությունների գործածությունը մեծ չափով պայմանավորված է սոցիալական միջավայրով, խոսքի բովանդակությամբ և հաղորդակցվող կողմերի փոխհարաբերությամբ: Կան մեղմասություններ, որոնք առավել բնորոշ են սոցիալական այս կամ այն միջավայրին, մասնագիտությանը կամ հանրության այս կամ այն շերտին: Օրինակ՝ **բժշկության բնագավառ**՝ «Մենք կորցնում ենք հիվանդին» (մեռնելու մասին), «վատ հիվանդություն» (քաղցկեղ), «գոյացություն» (ուռուցք, խոց), «սահմանափակ հնարավորությունների տեր» (հաշմանդամ), **դիվանագիտություն**՝ «անկանխատեսելի հետևանքներ» (զինված ընդհարում, զոհեր և այլն), «Այդ առաջարկը նրանք իրենց համար ընդունելի չեն համարում» (մերժում են), **պետական-վարչական գործունեություն**՝ «սահմանադրական կարգի հաստատում» (պատերազմ, պատերազմա-

կան գործողություններ), «բարձր ռիսկայնության խմբեր» (սոցիալական և ազգային խմբերի կարգավիճակը սահմանող արտահայտություն), «ծառայողական օգտագործման համար» (գաղտնի փաստաթղթերի մասին), **որոշ մասնագիտությունների և ծառայությունների անվանումներ**՝ «կանանց բժիշկ» (գինեկոլոգ), «կանանց վարսավիրանոց» (գեղեցկության սրահ), «տեխնիկական սպասարկման անձնակազմ» (սպասավոր/ուհի, հավաքարար/ուհի), «սգո ծառայություններ» և այլն:

Այն, ինչ ընդունելի է սոցիալական մի միջավայրում և համարվում է բարեկիրթ, այլ միջավայրում կարող է միանգամայն անընդունելի լինել: Դա առավել զգալի է, երբ խոսքը վերաբերում է գրական լեզվով հաղորդակցվողներին՝ մի կողմից, մյուս կողմից՝ նրանց, որոնց համար հաղորդակցման միակ կամ հիմնական միջոցը իրենց բարբառն է կամ խոսակցական լեզուն¹⁰: Առաջինների միջավայրում գործածվող մեղմասությունը կարող է նույնիսկ ծիծաղելի հնչել երկրորդների միջավայրում կամ պարզապես չընկալվել: Այս իմաստով բնորոշ է, օրինակ, Գրիգոր Նարեկացուն տրված բնութագրությունը: Արևմտահայ քննադատ Արշակ Չոպանյանը, խոսելով Նարեկացու՝ աստվածային էությանը հաղորդակից լինելու և այդ էության ուժեղ ազդեցությունները բանաստեղծական ներշնչանքի վերափոխելու մասին, գրում է. «Ու Նարեկացին հասած է այն հազվադեպ վիճակին, ուր ա՛լ կտրված է աշխարհեն, տեսակ մը հողեն վեր, մարմինեն դուրս կյանքի մեջ մտած, ուր երկրավոր իրերը այլակերպված կ'երևան և ուր ա՛լ կ'սկսի գերերկրավորին տեսությունը: Նարեկացին **աստված տեսած է**»¹¹: Նորագույն ժամանակների հայ քննադատը, սկզբունքորեն համաձայնելով Չոպանյանի կարծիքին, հավելում է այն միտքը, որ միջնադարի մեծ բանաստեղծը նաև շատ իրական ու վառ գույներով է նկարագրում կնոջ արտաքինը, կանացի կենդանի հմայքները, և ակնարկելով Նարեկացու՝ կին արարածի հետ մտերիմ շփման մեջ լինելու հանգամանքը՝ գրում է. «Թերևս մեծ մեղք գործած չեմ լինի, եթե օգտվելով Չոպանյանի գեղեցիկ խոսքից՝ ասեմ, որ Նարեկացին **կին տեսած է**». կինն այցելել է նրան խուցի մեջ, այրի մեջ, կյանքի արահետներում: Կինը մնացել է որպես հավերժական թախիժ, տանջող կարոտ, հավիտենական ձգող մեղք. և դա խոր հետք է թողել նաև բանաստեղծի տողերի վրա»¹²:

Եվ հակառակը, առաջինների միջավայրում ընդունված են մեղմասություններ, որոնք սովորական չեն երկրորդների համար, օրինակ՝ **հղի** բառի փոխարեն հաճախ գյուղական միջավայրում գործածում են **ծանր ոտք**, **պատճառավոր** արտահայտությունները («Էն ժամանակ մեր Մարոն էլ **ծանր ոտք** էր. աշխուժությունը կորցրել էր»), որոնք սոցիա-

¹⁰ Տե՛ս www.krugosvet.ru/enc/gumanitarnye_nauki/lingvistika/EVFEMIZM.html

¹¹ Ա. Չոպանյան, Երկեր, Եր., 1988, էջ 300:

¹² Հ. Թամրազյան, Երկեր, Ա, Եր., 2006, էջ 407:

լական այլ միջավայրում կարող են ընկալելի չլինել:

Փոխարկում (լատ.՝ **conversio**– փոփոխություն, մի բանից մեկ այլ բանի վերածվելը): Լեզվաբանության մեջ սովորաբար առանձնացվում են **բառային և քերականական** փոխարկումներ¹³: Առավել տարածված տեսակը **քերականական փոխարկումներն** են: Օրինակ՝ ներգործական կառույցի վերածումը կրավորականի. «Նա կատարել է որոշակի աշխատանք»: – «Որոշակի աշխատանք է կատարվել նրա կողմից»: Առաջին տարբերակում ավելի շատ տեղեկություն է տրվում մեզ նրա կատարած աշխատանքի մասին, երկրորդում՝ աշխատանքը կատարվելու մասին: Քերականական փոխարկումը կապված է օբյեկտի և սուբյեկտի արտահայտման քերականական տարբեր միջոցների գործադրման հետ՝ ուրիշի ուղղակի խոսքի փոխարկումը անուղղակիի, դերբայական դարձվածով պարզ նախադասությունը՝ բարդ ստորադասական նախադասության և այլն:

Բառային փոխարկումը ներկայանում է ոչ թե նույն բառի քերականական տարբեր ձևերով, այլ տարբեր բառերով, այսինքն՝ փոխարկիչներ են բառերը, որոնք ցույց են տալիս միևնույն իրողությունը տարբեր տեսանկյուններից՝ շրջելով այն տարբեր կողմեր: Օրինակ՝ «Չարենցը կրել է Տերյանի գրական ազդեցությունը»: – «Տերյանը գրական ազդեցություն է ունեցել Չարենցի վրա»: Հաճախ այս երևույթը նույնացվում է հոմանիշների և հականիշների հետ: Դրանց միջև, սակայն, կան որոշակի տարբերություններ: Հոմանիշների դեպքում իբրև փոխարկիչներ հանդես են գալիս հոմանշային միավորները, իսկ փոխարկման դեպքում նկարագրվող առարկաները տեղերով փոխվում են, հնարավոր է նաև նախադասության կառուցվածքի փոփոխություն: Հմմտ.՝ «Նա **լավ** մասնագետ է»: – «Նա **հմուտ** մասնագետ է» (հոմ.): «Նա **լավ** է տիրապետում իր մասնագիտությանը»: – «Նա իր մասնագիտության մեջ **հմուտ** է» (փոխարկում): Ինչ վերաբերում է հականշությանը, ապա ի տարբերություն դրանց՝ փոխարկիչները ոչ թե իրար հակադրվում են որպես հակառակ հասկացություններ արտահայտող բառեր, այլ ունեն հակադարձ կառուցվածք: Բացի այդ՝ հականիշները ցույց են տալիս հակառակ իրավիճակներ, իսկ փոխարկիչներն ու հոմանիշները՝ նույն իրավիճակը, հմմտ.՝ «Հայաստանը **արտահանում է խմիչք**»: – «Հայաստանը **ներկրում է խմիչք**» (հակ.): Փոխարկման դեպքում կունենանք՝ «Հայաստանը **խմիչք** արտահանող երկիր է»: Կամ՝ «Գործարանը տալիս է **ցածր** որակի արտադրանք»: – «Գործարանը տալիս է **բարձր** որակի արտադրանք» (հակ.): «Գործարանը ապահովում է արտադրանքի **բարձր** որակ» (փոխարկում): «Հանդիպումը տեղի ունեցավ հարցաքննությունից **հետո**»: – «Հանդիպումը տեղի ունեցավ հարցաքննու-

¹³ Տե՛ս **Богданова Л.**, նշվ. աշխ., էջ 171:

թունից առաջ» (հակ.): «Հարցաքննությունը տեղի ունեցավ հանդիպումից առաջ» (փոխարկում):

Փոխարկումը խոսքային հաղորդակցման մեջ ունի մի շարք գործառույթներ.

1. **Օտաջում է մի ձևակերպումը մեկ այլ ձևակերպմամբ փոխարինելուն.** պայմանավորված խոսքի բովանդակությամբ՝ խոսքի հեղինակը արտահայտում է իր վերաբերմունքը ներկայացվող իրավիճակին: Առանձնացվում են խոսողի տեսանկյունից առավել կարևոր շեշտադրումները, տրվում է իրավիճակի գնահատականը: Օրինակ՝ «Գնացքը մեկնեց մեր հանդիպումից կես ժամ **հետո**»: - «Մեր հանդիպումը տեղի ունեցավ գնացքի մեկնելուց կես ժամ **առաջ**». առաջին տարբերակում շեշտադրվում է գնացքի երբ մեկնելու գաղափարը, երկրորդում՝ հանդիպման երբ տեղի ունենալը: Այլ օրինակներ՝ «Թղթապանակը դրված էր գրքի **տակ**»: - «Գիրքը դրված էր թղթապանակի **վրա**», «Հայ մարզիկը **հաղթեց** չինացուն»: - «Չինացին **պարտություն կրեց** հայ մարզիկից», «Մենք ենք **գնել** այդ տունը»: - «Այդ տունը **վաճառել** են մեզ», «Մեկ ամիս **տևեց** շենքի **շինարարությունը**»: - «Շենքը **կառուցեցին** մեկ ամսում», «Քննարկումը հետաձգվեց, **քանի որ** առանձին մասնակիցներ բացակայում էին»: - «Առանձին մասնակիցներ բացակայում էին, **ուստի** և քննարկումը հետաձգվեց»:

2. **Հնարավորություն է տալիս խուսափելու ուղղակի պատասխանից,** իրերը իրենց անունով չկոչելու, տեղեկույթը թուլացնելու. «Խմբի անդամներից երեքը հակված են շարունակելու հետաքննությունը, **մյուսները՝ ոչ**» - «....., **մինչդեռ** դա **մյուսների ծրագրերի մեջ չի մտնում**»:

3. **Հնարավորություն է տալիս արտահայտելու նույն իրավիճակը նրա տարբեր մասնակիցների դիրքերից.** շեշտվում են այս կամ այն մասնակցի առավել կամ պակաս ակտիվ լինելը, մասնակցության չափը իրավիճակին. «Հայաստանը նոր ապրանքատեսակներ է արտահանում Ռուսաստան»: - «Ռուսաստանը նոր ապրանքատեսակներ է ներկրում Հայաստանից», «Դու նրա կրտսեր գործընկերն ես»: - «Նա քո ավագ գործընկերն է», «Ատենախոսության վերնագիրը մասամբ չի համապատասխանում բովանդակությանը»: - «Ատենախոսության բովանդակությունը մասամբ չի համապատասխանում վերնագրին»:

4. **Նույն տեքստում առնչակից կամ դասավորությամբ մոտ փոխարկիչների գործածությամբ ընդգծվում է այս կամ այն միտքը.** «Ով մեզ հետ չէ, նա մեզ դեմ է», «Իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է»:

5. **Արտահայտում է խոսողին հայտնի որոշակիություն կամ անորոշություն.** «Այրիվանքը կառուցվել է ավելի վաղ, քան Վաղարշապատի Սուրբ Գայանե եկեղեցին» - «Վաղարշապատի Սուրբ Գայանե եկեղեցին կառուցվել է ավելի ուշ, քան Այրիվանքը»: Ակնհայտ է, որ առաջին տարբերակում խոսքի սուբյեկտը՝ **Այրիվանքը**, նախապես հայտնի

է խոսողներին. խոսքի առարկան նախ եղել է այն, ապա Գայանեն: Երկրորդը ցույց է տալիս, որ մինչ այդ խոսվել է **Գայանեի** մասին:

6. Կարող է նպաստել խոսքը առավել բարեկիրթ և տեղին կառուցելուն. նույնանում է մեղմասությանը. «Ուզում եմ զանգահարել. **տվե՛ք ինձ Ձեր հեռախոսը/կարո՞ղ եք ինձ տրամադրել Ձեր հեռախոսը/թույլ կտա՞ք օգտվել Ձեր հեռախոսից**»:

Այսպիսով, քննարկվող արտահայտչական միջոցները՝ մեղմասությունը և փոխարկումը, իրենց ոճական-արտահայտչական մեծ հնարավորություններով, որոնց մասին խոսվեց, էական դերակատարություն ունեն լեզվի գործառման տարբեր ոլորտներում հաղորդակցումը տպավորիչ, ազդեցիկ, նպատակալաց և բարեկիրթ դարձնելու առումով, սակայն դրանք բավարար չափով գիտական ուշադրության չեն արժանացել մեզանում:

Բանալի բառեր - խոսքի արժանիքներ, բանադարձում, դարձույթ, արտահայտչական միջոցներ, բարեկիրթ, մեղմասություն, փոխարկում, ակնարկ, համանշային լեզվական միավոր, տարակուսանք

ЮРИЙ АВETИСЯН – Выразительность речи: эвфемизм и трансформация. – Различные сферы речи всегда привлекали внимание исследователей. Ещё в античном мире предметом изучения стали всевозможные её аспекты и характерные свойства: точность, краткость, богатство, разнообразие и т. д. Интерес армянских языковедов к рассматриваемым в статье выразительным средствам – эвфемизму и трансформациям – пока ещё довольно незначителен. Статья посвящена большим возможностям этих способов обогатить речь, сделать её более гибкой в стилистическом отношении. С их помощью речь в различных её сферах приобретает выразительность, а в иных случаях придают необходимую корректность и вежливость.

Ключевые слова: качества речи, стилистические фигуры, выразительные средства, культурный, эвфемизм, трансформация, намёк, синонимическая языковая единица, сомнение

YURI AVETISYAN – Speech Expressiveness: Euphemism and Conversion. – The merits of speech have always been in the focus of scientific attention. Since ancient times, various manifestations of speech have become subject of discussion the characteristic features of them being precision, brevity, richness, variety, expressiveness, etc. The expressive means under discussion – euphemism and conversion, although haven't received sufficient attention among us, with their great potential of stylistic-expressive opportunities have an essential role in different functional spheres of language in the sense of making the communication impressive, powerful, purposeful and courteous.

Key words: merits of speech, figures of speech, epistrophe, expressive means, courteous euphemism, conversion, remark, homonymous linguistic units, uncertainty

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՑԵՂԱՍՊԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐՎԱԾ ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

2014 թ. դեկտեմբերի 20-ին ԵՊՀ գիտխորհրդի դահլիճում տեղի ունեցավ ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Սեդա Գասպարյանի «The Armenian Genocide: A Linguocognitive Perspective» («Հայոց ցեղասպանությունը. լեզվաճանաչողական մեկնակետ») գրքի շնորհանդեսը, որին ներկա էին բազմաթիվ անվանի գիտնականներ ինչպես համալսարանից, այնպես էլ հանրապետության այլ բուհերից ու գիտությունների ազգային ակադեմիայից:

Շնորհանդեսը վերածվեց հետաքրքիր քննարկման. ներկայացնում ենք հատվածներ ելույթներից:

Ա. Միմոնյան (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ԵՊՀ ռեկտոր).

- Այսօր ներկայացնում ենք Սեդա Գասպարյանի «Հայոց ցեղասպանությունը. լեզվաճանաչողական մեկնակետ» աշխատությունը: Այս գիրքը, բացի այն, որ լեզվաբանական հետաքրքիր քննություն է և ըստ էության՝ նոր խոսք հայ լեզվաբանության պատմության մեջ, մեծ արժեք ունի նաև այն առումով, որ վերաբերում է ցեղասպանության խնդրին: Գրքի արժանիքները շատ են: Սա զուտ լեզվաբանական հետազոտություն չէ, քանի որ մի քանի գիտությունների հատույթում է իրականացված, և այս տեսակետից գուցե թե սա այս աշխատության ամենամեծ արժանիքն է: Արժանիքներից մյուսն էլ այն է, որ Ս. Գասպարյանի աշխատությունը մտածելու շատ մեծ հնարավորություն է ընձեռում ոչ միայն հետազոտողին, այլև ցանկացած մարդու: Եվ վերջապես, այս աշխատությունը գիտնականների ուշադրությունը հրավիրում է այն կարևոր փաստին, որ յուրաքանչյուր պատմական անցքի մեկնաբանություն իր հիմքում ունի լեզվական և լեզվաբանական ատաղձ, ինչի մասին մենք շատ հաճախ մոռանում ենք: Անընդհատ խոսում ենք ինքնության, լեզվամտածողության, լեզվի դերի մասին, այն մասին, որ լեզուն մեր ինքնության ամենացայտուն հատկանիշներից է, որ լեզուն է մարդուն մարդ դարձնում, բայց կարծես գործնականում դա չենք տեսնում ու չենք կարևորում: Կարծում են՝ հենց մեր լեզվամտածողության համար այս գիրքը որոշակի նոր հորիզոններ է նախատեսում, նախագծում, նախանշում, ընդ որում՝ ոչ միայն և ոչ այնքան լեզվաբանների, որքան, նախ և առաջ, պատմաբանների համար, որովհետև պատմական յուրաքանչյուր իրադարձություն

ու դրա մեկնաբանությունն արժեվորվում կամ քննադատվում են լեզվական հենքի վերլուծությամբ: Այս մասին շատ ու շատ պատմաբաններ մոռանում են կամ ուղղակի չեն էլ մտածում: Իմ կարծիքով, այս գրքի հիմնական արժանիքները սրանք են: Եվ, իհարկե, միանգամայն իրավացի է հեղինակը, երբ գրքի եզրափակիչ մասում հատուկ նշում է տարբեր ոլորտների գիտական ներուժը միավորելու կարևորության մասին, քանզի տարբեր գիտակարգերի հետազոտական արդյունքների համադրմամբ է, որ կարելի է դիմակայել և արժանի հակահարված տալ հակահայկական քարոզչության անազնիվ ու անբարո վարքագծին: Ս.Գասպարյանի այս գիրքը սկզբնավորում է հետազոտությունների մի շարք, որը, իմ խորին համոզմամբ, մենք անպայմանորեն պետք է շարունակենք՝ հաշվի առնելով Հայոց ցեղասպանության ուսումնասիրության բնագավառում Ս. Գասպարյանի՝ ըստ էության առաջին անգամ կիրառած լեզվաճանաչողական մոտեցման արդյունավետությունը:

Գրքի առավելություններից է նաև այն, որ շարադրված է պարզ, հասկանալի ու հստակ անգլերենով: Վերջին տարիներին հրատարակված մեր գրքերի մեջ սա իսկապես երևույթ է, ու ես նախ ուզում եմ շնորհավորել մեզ բոլորիս և հետո միայն՝ հեղինակին, որովհետև համալսարանում հրատարակված յուրաքանչյուր գիրք, նախ և առաջ, ամբողջ համալսարանի մտավոր սեփականությունն է, մի քիչ էլ՝ հեղինակի: Ուրեմն ողջունենք այս գրքի լույսընծայումը, շնորհավորենք միմյանց և Սեդա Գասպարյանին ու մաղթենք, որ նա շարունակի զարգացնել այս հետաքրքիր բնագավառը:

Գայանե Գասպարյան (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Երևանի Վ. Բյուսովի անվ. պետական լեզվաասարակագիտական համալսարանի ռեկտոր)։

- Շատ եմ կարևորում, որ գրքի վերնագրում նշված է «լեզվաճանաչողական մեկնակետ»: Որպես լեզվաբան կարող եմ ասել, որ հայերեն շատ լավ է թարգմանված «cognitive» - «ճանաչողություն» եզրույթը: Այս գրքի միջոցով ճանաչում ենք պատմության այն էջերը, որոնց մասին 100 տարի է՝ արդեն խոսվում ու գրվում է, և այս գրքի շնորհիվ է, որ մենք ճանաչում ենք նոր մոտեցումներ եղեռնի և եղեռնի հետեվանքների վերաբերյալ: Ստեղծել նման աշխատություն դեռ ոչ մի լեզվաբանի մտքով չէր անցել: Եղեռնի 100-ամյակի շեմին լույս է տեսել մի գիրք, որը ոչ միայն հայերին, այլև ուրիշ ազգերի ներկայացուցիչներին հնարավորություն կտա նորովի իմաստավորելու Հայոց Մեծ Եղեռնը և ի ցույց կդնի վայ-գիտնականների ու թուրքամետ քաղաքական գործիչների՝ միջազգային հանրությանը մեր պատմական իրողությունները աղավաղված ներկայացնելու «ջանքերը»: Ամենակարևորն այն է, որ գիրքը գրված է անգլերեն, ուստի հասու կդառնա թե՛ հայ, թե՛ օտարազգի ընթերցողին, մանավանդ որ հեղինակը փայլուն է տիրապետում լեզվին:

Թեև Ս. Գասպարյանը, ինչպես ասացի, վերնագրում նշել է «լեզվա-

ճանաչողական մեկնակետ», բայց որպես լեզվաբան կարող եմ հավաստել, որ գրքում կատարված է բազմաբնույթ վերլուծություն: Նախ և առաջ բուն լեզվաբանական և լեզվաաճական, երբ լեզվական միավորը քննվում է իր իմաստային դաշտում, ընդ որում՝ հաշվի են առնվում այն բոլոր լրացուցիչ ռճական երանգները, որ բառը ձեռք է բերում տարաբնույթ մեկնաբանություններում: Այնուհետև հեղինակն անցնում է քննության հաջորդ՝ գործաբանական փուլին: Այստեղ նա կարևորում է ինչպես հեղինակային, այնպես էլ ընթերցողական ընկալումները՝ հաշվի առնելով տեքստի թե՛ ներլեզվական և թե՛ արտալեզվական փաստերը: Եվ վերջապես, հաջորդում է բուն լեզվաճանաչողական քննությունը, որտեղ կարևորվում է լեզվական փաստերի և մարդկության գիտակցության մեջ կուտակված գիտելիքների, տպավորությունների ու հիշողությունների հարաբերակցությունը: Ելնելով ճանաչողական լեզվաբանության մեջ լայնորեն կիրառվող հասկացական կադապարի տեսության ընձեռած հնարավորությունից՝ հեղինակը բացահայտում է ժխտողականների քարոզի կեղծ ու շինծու բնույթը: Այնպես որ հեղինակի «լեզվաճանաչողական մեկնակետ» ձևակերպումը լայն իմաստով միտված է հետազոտվող մեկնաբանություններում առկա պատմական փաստերի աղավաղումների և անազնիվ ու ապակողմնորոշիչ արժևորումների բացահայտմանն ու ճանաչմանը լեզվական փաստերի քննության ճանապարհով:

Վերլուծված են տարբեր հետազոտողների մեկնաբանություններ ու քաղաքական գործիչների ելույթներ, պաշտոնական փաստաթղթեր ու նամակագրություն, հիշատակվում են ականատեսների վկայություններ, բացահայտվում են ժխտողականների խոսքային ռազմավարություններն ու տակտիկական հնարները, իրական փաստերը գլխիվայր շրջված ներկայացնելու նրանց՝ հաճախ քողարկված մտադրությունները:

Ուզում եմ հատուկ անդրադառնալ հենց «գենոցիդ» բառին, որն արդեն եզրույթ է դարձել: Ս. Գասպարյանի՝ «եղեռն» և «genocide» բառերի հանգամանալից իմաստաբանական վերլուծությունը ցույց է տալիս լեզվական այդ երկու միավորների հոմանշային կապը և, փաստորեն, մարտահրավեր նետում բոլոր նրանց, ովքեր խուսափում են օգտագործել «genocide» եզրույթը:

Պրոֆեսոր Ս. Գասպարյանի այս գիրքը կարևոր ձեռքբերում է համարում հակահայկական քարոզչության դեմ մեր պայքարում:

Աշոտ Մելքոնյան (պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմության ինստիտուտի տնօրեն).

- 1915 թ. մեր ժողովրդի հետ տեղի ունեցածը այնքան մասշտաբային և ծավալային բնույթ է կրել, որ առնչվել է մեր կյանքի բոլոր ոլորտներին, ուստի բնական է, որ լեզվաբանության ոլորտը չէր կարող չշոշափել հոգեբանական, պատմական, ժողովրդագրական և այլ խնդիրներ: Երբ ծանոթացա այս աշխատությանը, հասկացա, որ մեր պատկե-

րացումները, մեր իմացությունը շատ թերի են, և լեզվաբանության խնդիրներն այնքան բարդ են, որ որպես պատմաբան հասկանում ես, որ շատ ու շատ հեղինակների աշխատություններին ծանոթանալիս նրանց ենթատեքստերը, նրբությունները ինչպես հարկն է չես ընկալել: Հեղինակներ կան, որոնք հայ հասարակության կողմից հարվածների չենթարկվելու կամ նրա համակրանքը շահելու նպատակով անմիջապես նախընտրում են «ցեղասպանություն» բառի գործածությունը, ես չեմ վարանում ասել՝ իրենց չար գործը առաջ տանելու համար: Եվ մենք անմիջապես ոգևորվում ենք՝ ասելով՝ էթե այս մարդը գործածեց «genocide» բառը, նշանակում է՝ նա մեր մեծ բարեկամն է: Այս աշխատությանը ծանոթանալիս զգում ես, որ կան մարդիկ, որոնք, այդ բառը գործածելով, իրականում շատ ավելի վտանգավոր գործունեություն են ծավալում և հարվածում մեզ առանձնահատուկ հմտությամբ, որովհետև ենթատեքստը միանգամայն այլ բան է թելադրում: Նման հետազոտողներից են Գ. Լյուին, Թ. Աքչամը, Ռ. Սյունին և ուրիշներ:

Օրինակ՝ Գյունտեր Լյուին փորձում է իր աշխատությունում պատճառահետևանքային այնպիսի կապ ցույց տալ, որ մեղավորը ի վերջո մենք ենք: Այսինքն՝ մենք Օսմանյան կայսրության պարագայում ապստամբեցինք և այդ պետությանը չթողեցինք այլընտրանք, ուստի այն ստիպված եղավ մեզ տեղահան անել: Թաներ Աքչամը «ցեղասպանություն» բառի հարցում շատ կարևոր ներդրում կատարեց, և մենք ողջունեցինք դա՝ չմտածելով, որ նա ևս պնդում էր, որ 1915 թ. հայ ժողովուրդը օսմանյան իշխանություններին այլընտրանք չթողեց, քան տեղահանությունը: Շատերը, ցավոք, չեն զգում այս հանգամանքը և կարևորում են միայն «genocide» բառի գործածությունը: Մինչդեռ Ս. Գասպարյանը, նշելով դրականը, չի անտեսում նաև այս հեղինակների միտումնավոր մոտեցումները: Ռոնալդ Սյունիի մասին մեզանում շատ է խոսվել: Հարվածների չենթարկվելու համար Ռ. Սյունին պատնեշում է իրեն դարձյալ «ցեղասպանություն» բառով, բայց տեսնում ես՝ նույն պատճառահետևանքային կապի մեջ «ցեղասպանություն» բառը դարձյալ օգտագործում է վերապահումով և չի համարձակվում այն մոտեցնել իրեական հոլոքոստին: Այստեղ արդեն շատ ճիշտ ասվեց «եղեռն» բառի գործածության անհրաժեշտության մասին: Տեսեք՝ իրեաները ինչ արեցին. Ռաֆայել Լեմկինը «genocide» բառը բանաձևեց 1948 թ. դեկտեմբերի 9-ին և շատ խելոք ձևով դա արեց, որպեսզի հետո հատուցման հարցում իրենք իրավական հենք ունենային, և այդպես էլ եղավ: 1952 թ. Կոնրադ Ադենաուերը ընդունեց ցեղասպանությունը այդ բանաձևի տրամաբանությունից բխող իր բոլոր հետևանքներով, և մինչև հիմա Գերմանիան հատուցում է Իսրայելին: Բայց միաժամանակ իրեաները չբավարարվեցին «genocide» բառով. առաջ քաշեցին «հոլոքոստը»՝ դրանով տարբերվելով մյուս ցեղասպանություններից: Հիմա էլ նոր բառ են գործածում՝ «շոա», որը ցեղասպանության իմաստ ունի:

Իսկ մենք ինչո՞ւ, «եղեռն» բառը ունենալով մեր ոսկեղենիկ հայերենում, չենք օգտագործում ցեղասպանությանը համահավասար իմաստով:

Ես ողջունում եմ Ս. Գասպարյանի նախաձեռնությունը և համոզված եմ, որ նման ուսումնասիրություններ դեռ շատ կկատարվեն, և շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր չեն կարծում, թե Հայոց ցեղասպանության ուսումնասիրությունը միայն պատմաբանների կամ ուղղակի ցեղասպանագետների մենաշնորհն է: Սա բոլորիս պարտքն է:

Լավրենտի Հովհաննիսյան (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ).

- Ճիշտ չի լինի կարծել, թե Ս. Գասպարյանի աշխատանքը միայն լեզվաբանական աշխատանք է՝ լեզվաբանական նոր հմտությունների կիրառմամբ: Ս. Գասպարյանն այստեղ և՛ համեմատաբան է, և՛ ազգագրագետ, և՛ հոգելեզվաբան, և՛ աղբյուրագետ: Նրա գրքում կա 125 աշխատության ցանկ, և սա ձևական բնույթ չի կրում: Ըստ պատշաճի հեղինակն օգտագործել է այդ բոլոր գիտական աղբյուրները: Ուսումնասիրության հիմնական ելակետը լեզուն է՝ մարդկային հաղորդակցության հիմնական միջոցը, որը մի կողմից ներառում է իրականության առարկայական պատկերը, մյուս կողմից՝ խթանում մարդու և հասարակության գործունեությունը բոլոր ոլորտներում: Լեզվի հուսալիության դրույթը ակնառու է ուսումնասիրության ողջ շարադրանքի ընթացքում: Ս. Գասպարյանը փորձում է, և պետք է ասել՝ հաջողված փորձ է, Հայոց ցեղասպանության ինչպես ընդունող ու դատապարտող, այնպես էլ չընդունող ու մերժող մեկնաբանություններում տեղ գտած լեզվական փաստերի քննությամբ բացահայտել ցեղասպանական իրողությունների տարաբնույթ արժևորումները, թաքնված միտումները՝ դրանով իսկ աշխատանքին տալով նոր որակ, միաժամանակ հաստատելով լեզվաբանության նոր ուղղություններից մեկի՝ ճանաչողական լեզբանանության կենսունակությունը և դրա սկզբունքների կիրառության անհրաժեշտությունը: Գրքի կարևոր արժանիքներից է նաև այն, որ հեղինակը չի սահմանափակվում միայն լեզվական, լեզվաբանական ոլորտների ուսումնասիրությամբ: Նա դրանք քննում է Օսմանյան կայսրության պատմաքաղաքական իրադարձությունների, ցեղասպանության բուն պատճառների, ցեղասպանության նախաձրագրվածության, եղեռն-հոլոքոստ կապի ու հարաբերակցության և նման բնույթի այլ լուսաբանումների հենքի վրա: Հեղինակը, անդրադառնալով նաև Բարայելի կողմից Հայոց եղեռնը չճանաչելու հարցին, նկատում է, որ այլ գործոնների հետ մեկտեղ՝ այստեղ դեր է խաղում բացառիկության գործոնը:

«Եղեռն» և «գենոցիդ» (genocide) բառերի իմաստային համարժեքությունների հարցի քննությունը իրականացված է լեզվի և խոսքի մակարդակներում: Հեղինակը եզրակացնում է, որ «եղեռնը» և «գենոցիդը» հոմանիշներ են: Անշուշտ, մեր լեզվամտածողության մեջ «Հայոց մեծ եղեռն»

հասկացությունը առաջին հերթին ընկալվում է որպես ցեղասպանություն կամ ազգասպանություն, սակայն երևի ցավով պիտի ասել, որ մեր բառարաններում դա արտացոլված չէ: Բերեմ օրինակ. 1969 թ. հրատարակված հայերենի բացատրական բառարանում ունենք՝ «եղեռն, ոճիր, չարագործություն, ոճրագործություն», 1976 թ. հրատարակված բառարանում՝ «ոճիր, չարագործություն, չարիք»՝ առաջին իմաստը, իսկ երկրորդը՝ «կոտորած»: «Գենոցիդ» կամ «ազգասպանություն» միավորներն այնտեղ տեղ չեն գտել: Հայ-ռուսերեն բառարաններում՝ եղեռն – «злодеяние, тяжёлое преступление», երկրորդը՝ «резня», դարձյալ «գենոցիդ»-ը չկա: Մա երևի մեր թերությունն է, որը բառարանագիրները պետք է շտկեն:

Շատ արժանիքներ նշվեցին այս գրքի վերաբերյալ, ավելացնեմ ևս մի բան. ճանաչողական լեզվաբանությունը ենթադրում է տեքստի խորքային ընթերցում, իսկ խորքային ընթերցման համար անհրաժեշտ է խորքային գիտելիք: Բիարկե, նաև սրանով է պայմանավորված՝ Ս. Գասպարյանի աշխատանքի հաջողությունը, և ես կառաջարկեի, որ այս գրքի տպաքանակը ավելացվեր ու առաքվեր Եվրախորհրդարան, արտասահմանյան կազմակերպություններ, որպեսզի նրանք նույնպես հաղորդակից դառնան այս գրքին:

Լալիկ Խաչատրյան (բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ).

- Ընդունված է ասել, որ ճանաչողական լեզվաբանությունը սկզբնավորվեց անցյալ դարի 60-ական թթ., տարածվեց Եվրոպայում, Ռուսաստանում և եկավ Հայաստան: Ճանաչողական լեզվաբանությունը, բառիս խորքային ըմբռնմամբ, բացահայտում է խորքային երևույթը, մի բան, որ միայն նեղ մասնագետը կարող է տեսնել: Գիտե՞ք, եթե չլինեին եղեռնի վերաբերյալ անվանի մտավորականների կամ քաղաքական գործիչների, նաև կեղծարար պատմաբանների մեկնաբանությունները, ելույթները, մտքերը, հնարավոր է, որ այս գիրքը չգրվեր, որովհետև այն գրված է հենց այդ դաշտում, այսինքն՝ մտավորականների, քաղաքական գործիչների տեսակետների քննության միտումով և նրանց հաճախ չար մտադրությունները քողակերծելու վճռականությամբ: Ճիշտ է, աշխատությունը կազմված է մի շարք բաժիններից, բայց խորքում այն ունի առանցքային մի ընդհանրություն, որ կապում է բոլոր բաժինները: Այդ ընդհանրությունը տերմինների մեկնաբանությունն է: Հավելեմ նաև, որ թեև այս գիրքը գրված է ժամանակակից մեթոդաբանության սկզբունքով, բայց ըստ էության ունի 5-րդ դարի պատմական, բանասիրական ավանդույթների մի լուրջ զինանոց, որը մշակել է Եզնիկ Կողբացին: Եվ մենք ոչ միայն պետք է ուրախանանք սրանով, այլև շնորհակալություն հայտնենք հեղինակին այսպիսի աշխատանք կատարելու համար՝ միաժամակ կարևորելով, որ գրված է անգլերեն՝ միջազգային լեզվով, և տարածման մեծ դաշտ ունի:

2. Միրզոյան (փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ).

- Իմ խորին համոզմամբ, Ս. Գասպարյանի գրքի ամենամեծ արժանիքներից է այն, որ, ի տարբերություն ցեղասպանագիտական շատ այլ աշխատությունների, գրված է ոչ թե զգացական, այլ ռացիոնալ-տրամաբանական մոտեցմամբ, որը հնարավորություն է տալիս ասելիքը հասկանալի դարձնել նաև անգլալեզու ընթերցողին: Գնահատելի է և այն, որ թեև աշխատությունը գրված է ճանաչողական լեզվաբանության տեսանկյունից, բայց հեղինակն օգտագործել է նաև պատմագիտական, ազգագրական, հոգեբանական և այլ բնույթի հարուստ գրականություն, իսկ որ շատ կարևոր է, ասելիքը շարադրված է գիտական պարզ ու հասկանալի լեզվով: Ասվածը ցանկանում եմ փաստել մեկ օրինակով. գրքի 96 և 97-րդ էջերում զետեղված է օձակծիկի տեսքով մի գծապատկեր, որի վրա գրված են թուրքական Օսման առաջին սուլթանից մինչև 1660-ական թվականների սուլթանների անունները: Այդ նկարը հայտնաբերել եմ XVII դ. ականավոր պատմագիր Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» կոթողային երկի 1663-1665 թթ. ընդօրինակված հինգ ձեռագրերում: Դավրիժեցու երկը, սկսած 1669 թ., ունեցել է հայերեն, ֆրանսերեն, ռուսերեն և լեհերեն ավելի քան 7 հրատարակություն, սակայն խնդրո առարկա նկարը դրանցից և ոչ մեկում չի տպագրվել: Մա նշանակում է, որ 1915 թ. Հայոց եղեռնից դեռ դարեր առաջ ու հետո այնքան մեծ է եղել թուրքական լծի պատճառած սարսափը, որ մենք հնարավորություն չենք ունեցել ինչպես հարկն է լուսաբանելու մեր պատմությունը, որից օգտվելով՝ Հայոց եղեռնի եղելության ներկայիս զեղծարարները իրենց նախորդների ոճրագործությունն արդարացնելու համար անամոթաբար հորինել ու շրջանառության մեջ են դրել այն անհեթեթ դրույթը, որ իբր հայ ժողովուրդը դարեր շարունակ վայելել է թուրք իշխանությունների «հայրական» վերաբերմունքը, ուստի 1915 թ. Հայոց եղեռնի համար մեղավոր են ոչ թե երիտթուրք մարդակերները, այլ նրանց գազանություններին զոհ դարձած հայ նահատակները: Վստահ եմ՝ տեսնելով այս նկարը՝ անգլալեզու ընթերցողը կհասկանա, թե ով ով է եղել և երբվանից: Բարձր եմ գնահատում Ս. Գասպարյանի դիտողականությունն ու իր նախորդների ուսումնասիրությունների նկատմամբ ցուցաբերած ուշադրությունը, որն ակնհայտորեն երևում է այս գրքում:

Քննարկումը շնորհակալական խոսքով եզրափակեց գրքի հեղինակը:

ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*«Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագրական խորհուրդը
շնորհավորում է Սեդրա Գասպարյանին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ ընտրվելու
առթիվ և մատթում գիտական նորանոր նվաճումներ:*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ՏԻԳՐԱՆ ԴԱՎԻՏԱՎՅԱՆ** – ՀՀ ԱՍԾ աշխատակից
ТИГРАН ДАВИТАВЯН – служащий НСБ РА
TIGRAN DAVITAVYAN – officer of NSS RA
Էլ. hwaugե`odzun1980@gmail.com
2. **ՖԵԼԻՔՍ ՏԵՐ-ՄԱՐՏԻՐՈՍՈՎ** – պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող
ФЕЛИКС ТЕР-МАРТИРОСОВ – кандидат исторических наук, доцент, старший научный сотрудник Института археологии и этнографии НАН РА
FELIX TER-MARTIROSOV – PhD, Associate Professor, Senior Scientific Worker of the Institute of Archaeology and Ethnography NAS RA
3. **ՌՈՒԶԱՆՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** – պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող
РУЗАННА АРУТЮНЯН – кандидат исторических наук, научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ
RUZANNA HARUTYUNYAN – PhD, Reserch Worker of the Institute of Armenological Studies, YSU
4. **ՓԱՐԻՍԱ ՓՈՐՄՈՆՀԱՄՄԱԴԻ** – ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ
ПАРИСА ПОРМОХАММАДИ – аспирантка Института археологии и этнографии НАН РА
PARISA POORMOHAMMADI – PhD student of the Institute of Archaeology and Ethnography NAS RA
5. **ՍԵՅՐԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ** – փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ փիլիսոփայության պատմության ամբիոնի վարիչ
СЕЙРАН ЗАКАРЯН – доктор философских наук, профессор, заведующий кафедрой истории философии ЕГУ
SEYRAN ZAKARYAN – Sc. D. in Philosophy, Professor, Head of the Chair of History of Philosophy, YSU
6. **ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ
ЮРИЙ АВЕТИСЯН – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка ЕГУ
YURI AVETISYAN – Sc. D. in Philology, Professor, Head of the Chair of Armenian Language, YSU
7. **ԼԵՎՈՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ
ЛЕВОН АВЕТИСЯН – кандидат филологических наук, заместитель главного редактора журнала «Вестник Ереванского университета»
LEVON AVETISYAN – PhD, Deputy Editor-in-Chief of the Bulletin «Banber Yerevani Hamalsarani»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

Հայոց ցեղասպանություն-100 Геноцид армян-100 Armenian Genocide-100
Տիգրան Դավիթավյան – Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը 1988-1994 թթ. 3
Tigran Davitavyan – Антиармянская деятельность азербайджанских спецслужб в 1988–1994 гг.
Tigran Davitavyan – The Anti-Armenian Activity of Special Services of Azerbaijan in 1988-1994

Ֆելիքս Տեր-Մարտիրոսով – Շամիրամ և Արա Գեղեցիկ (ռուս.) 17
Феликс Тер-Мартirosов – Шамирам и Ара Гегецик
Felix Ter-Martirosov – Shamiram and Ara Geghetsik (rus.)

Ռուզաննա Հարությունյան – Հայ-վրացական հարաբերություններն ըստ Սովսես Խորենացու 31
Рузанна Арутюнян – Армяно-грузинские отношения по Мовсеса Хоренаци
Ruzanna Harutyunyan – Armenian-Georgian Relations According to Movses Khorenatsi

Փարիսա Փորնոհամմադի – IX դարում Հայաստան ներմուծված խեցեղենը 39
Париса Поrhoхаммади – Привозная керамика Армении в IX в.
Parisa Poormohammadi – The Pottery Imported to Armenia in IX Century

Սեյրան Զարարյան – Տաթևի դպրոցի փիլիսոփայության գնահատության հարցի շուրջ 54
Сейран Закарян – Об оценке философии татевской школы
Seyran Zakaryan – On the Issue of Tatev School Philosophy Evaluation

Յուրի Ավետիսյան – Խոսքի արտահայտչականություն. մեղմասություն և փոխարկում 67
Юрий Аветисян – Выразительность речи: эвфимизм и трансформация
Yuri Avetisyanyan – Speech Expressiveness: Euphemism and Conversion

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ * НАУЧНАЯ ЖИЗНЬ * SCIENTIFIC LIFE

Լևոն Ավետիսյան – Ցեղասպանագիտությանը նվիրված գրքի շնորհանդես . 77
Левон Аветисян – Презентация книги, посвященной изучению геноцида
Levon Avetisyan – Presentation Dedicated to the Book on Genocidology

Տեղեկություններ հեղինակների մասին 84
Сведения об авторах
Information about the Authors

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Ժամանցորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 106
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 106
Address: 1, 106, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայր՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 10. 03. 2015:
Տպարանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ:

.....